

„Droschak”

ORGANE

de la Fédération

Révolut. Arménienne.

# ԴՐՕՇԱԿ

Adresse:

RÉDACTION DU JOURNAL

„Droschak”

GENÈVE (Suisse)

## „ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԵԿԱՆ ԳԸՂՆԵԿՑՈՒԹԵԱՆ” ՕՐԳԱՆ

### Կ Ր Ք Ե Ր Ը Լ ՈՒ Խ ՈՒ

Ապակենտրոնացման և ազգերի իրաւահաւասարութեան նշանաբաններով է, որ հանդէս եկաւ հակաթիֆաճատեան դաշինքը: Գտնեցան միամիտներ — նաև մեր ազգային շրջանակներում — որ հաւատացին և ուրախութեան ծափ զարկեցին Եթթիհատի տապալման առթիւ:

Եւ ահա դարձեալ հայկական արին... Ինչու՞ զարմանար Ձոր տարուց ի վեր հայ ժողովրդին շրջապատող բարբարոս խուժանները սպասել էին անհամբեր ու ատամների կրճտոցով, սպասել էին ղարբապատեհ՝ վայրկեանին, արեան նոր բաղանիքներ սարքելու, 1895-ի նախճիրները կրկնելու համար: Եւ նրանց թւում է, թէ հասել է այդ վայրկեանը Եթթիհատը նրանց աչքում սահմանադրութեան միակ պատւարն էր. և Եթթիհատի անկուճը թւում է նրանց, բնականաբար, առաջին հանգրուանը հին ռեժիմի վերադարձի երկրորդ, երրորդ հանգրուաններն էլ հետևեցին շուտով: Նոր դաշինքի կազմը, հին ռեժիմի մարդկանց կասկածելի համախմբումը, նրա առաջին քայլերը, նրա վեհանձն ու աճապարոտ ղներումը՝, հին ելըղըղի ամենաթուլնոտ օձերի արձակումը, — այդ բոլորը մէկ բան միայն կարող էր ներշնչել բրդերին և նրանց անմիջական հովանաւոր — պաշտօնեաներին.

— Ղերսկեցե՛ք, զարկեցե՛ք...

Եւ զարկերը տեղում են արդէն: Գարձեալ խմբական ջարդի լուրերի Գարձեալ ստրուկ համակերպում և հաւաւր և բառա՛ջ...

Նորէ՛ն դիմենք Եւրոպային... Բայց Եւրոպան ձանձրացել է այդ անպատիւ համակերպութեան աղաղակներին: Եւրոպան պահանջում է, որ մենք ևս ցոյց տանք կենդանութեան նշաններ, պատասխաններ հարածներին, զարններ մեզ զարնողներին, գէթ փոքր ինչ մօխիր ցաններ մեր վայրագ դաշինքների աչքերի մէջ...

Նորէ՛ն սկսել ումակոծել լրագիրներն ու դաշինքները նօտերով ու աղերսագրերով... Բայց հանրային կարծիքը կ'ստէ մեզ իրաւացի ցասումով, որ ամբողջ զոր տարի ժամանակ ունենէք հոգալու մեր ամենա-

հրատապ հոգսերը, ազգովին հոգալու մեր ամենամեծ և աղաղակող ցաւը...

Չ'արինք: Ա՛յժմ... Ա՛յժմ լացի, բառաչի և անգոր ու անատամ յոխորտանքի հետ՝ վերստին բեմ է գալիս հին նշովք-պատուհասը, մեր ներքին ոստիւր, որ հայկական պատմութեան ամենակրիտիկ շրջաններում եկել է միշտ խաթարելու ուժերի ներդաշնակութիւնը, եկել է միշտ ջլատելու դիմադրութեան թափը: Գոխանակ ուժ տալու մեր մարտական կորիզներին — որոնք լաւ, վատ, միակն են ստրկութեան ու անպաշտպանութեան փառազուրկ անապատում — ձգտում ենք հարածել, ոչնչացնել այդ կորիզները: Եւ մի կարգ հայեր ընտրել են ներկայ վայրկեանը, իբրև յարմարագոյնը՝ այդ նպատակին հասնելու համար: Սկսել է, աւելի ճիշտ, վերսկսել է արշաւանքը Հ. Յ. Գաշնակցութեան դէմ: Գա մի ինքնատիպ, զուտ հայկական ձև է՝ ազգային պաշտպանութիւնը կազմակերպելու, մի արիւնոտ տագնապի միջոցին...

Եթթիհատը տապալել է — պէտք է այժմ տապալել նրա հայ դաշնակիցներին... Եռանդով շրջան է անում այդ տխուր նշանակօջը Կ. Պոլսից մինչև Թիֆլիս: Եւ ո՛րպիսի հրձուներ, խանդավառութիւն... Ասես ղաշնակցութեան՝ անկուճով է, որ պիտի իրականանան հայ ազգի գերագոյն իդէալները, ամենից առաջ՝ Ֆիդէլքական ինքնապաշտպանութիւնը... Ասես հայ յեղափոխականի չքանալով է, որ հաշմանդամ ժողովուրդը պիտի կարողանայ գէթ փոքր ինչ հակազդել իր մահառիթ փորձութիւններին:

Երբեկից պէ՛տք է արդեօք վերանայ մեր սգաւոր հօրիզօններից այդ ճակատագրական նշովքը... Երբեկից պէ՛տք է արդեօք — գէթ մահացու տագնապների միջոցին — լուէ՛ այդ վայրագ կրճտոցը մի ժողովրդական կազմակերպութեան դէմ, զինաթափ լինին այդ ազգադաւկրերը... Պիտի զգա՞նք, վերջապէս, որ մի տխուր ու քսաձնելի բացառութիւն ենք ազգերի համաշխարհային քարտէզի վրայ, ամենէ՛ն աւելի թուլամորթը, ամենէն աւելի անփոթը՝ ազգային գոյութեան չարաաստիկ խնդրի հանդէպ...

Բաւական է: Բաւական է: Զգաստացե՛ք, մոյեգին հայրենակիցներ: Ժողովուրդը այլ բան է սպասում ձեզներից: Այդ անգէն, անօգնական զանգւածները, որոնց արեան ու ցաւերի անունով յոխորտում էք մամուլի և



Ազգային ժողովի մէջ, պահանջում են ձեռնից և իրաւունք ունին պահանջելու, որ եթէ չէք կարող իրական գործ կատարել, զոհարեք, օգնութեան գալ կուելու կողմններին, եթէ սեփական կաշի մտահոգութիւնը, ըստ վաղեմի սովորութեան, շարունակում է խեղդել ձեր խղճի և մաքի բոլոր միւս հրամայականները, — գեթ բարեհաճէք հանգիստ թողնել յեղափոխական կազմակերպութիւնը և չ'աղմկել հրապարակը ձեր պառակտիչ հանձարի անժամանակ մարզանքներով:

Կիրքը — լուս: Դեռ չգիտենք, ինչ սոսկալի գահաւէժներ են սպասում մեզ վաղւան օրւայ միշտ մտայլ ու խորհրդաւոր անյայտութեան մէջ: Եթէ վերսկսին Հայաստանում արեան կարմիր թափօրները և եթէ պարզի—ինչպէս մօտիկ անցեալի մէջ—որ տանեակ ու հարիւրաւոր գիւղեր հրի ու սրի ճարակ են եղել լոկ գի մ ա դ ր ու թ ե ա ն մ ի ջ ո ց ն եր ի պակասութեան շնորհիւ, — այդ անբաւելի ոճրի պատասխանատուութիւնը յամենայն դէպս չի ծանրանայ Հ. Յ. Դաշնակցութեան վրայ, որը Յուլիսեան Յեղափոխութեան օրերից ի վեր պարբերաբար զարկել է ահազանգը, զգուշացրել ու եկեղիայի ու բարբարոսութեան վերստին նախադրականներից և որը... այդ բոլորի փոխարէն, ի հատուցումն իր քսանամեայ արիւնտ ու զոհառատ գործունէութեան ստացել է միայն շարունակական հարւածներ ու անարգանքներ հասարակութեան որոշ խաւերից, հայ ազգի տիազոսաւոր և անտիտոզս «փրկիչներից»:

Բաւական է: Գործադրեցէ՛ք ձեր եռանդը դրական աշխատանքի վրայ... Ոչ Իթթիհասան է խորտակել ու չքացրել հրապարակից, ոչ էլ նրա հայկական quasi-դաշնակիցը պիտի անէանայ ձեր եռանդուն հարւածների տակ «Դաշնակցութիւնը» շատոնց արդէն ընտելացել է հալածական վիճակին և աւելի ահաւոր հակառակորդներ—ասիական երեք ամենամեզութ բռնաւորները — չեն աջողել կտրելու նրա կեանքի թելը: Ժողովուրդը սպասում է իր elite-ից միաբան, ներգաշնակ գործունէութիւն, սպասում է և Եւրոպան, սպասում են անձկութեամբ մեր բոլոր բարեկամները: Մեծ, վճռական վայրկեաններից է—մեզ համար, տարաբախտաբար, այնքան յաճախակի և այնքան սովորական... Ցագնապը կարող է կորցնել իր սուր ու մոլեգին ելևէջը, բայց դա կը լինի ժամանակաւոր. նա նորէն կը վերադառնայ վաղ թէ ուշ—ամեն անգամ աւելի խորունկ ու ահաւոր — և նորէն կը փոթորկէ ու կը վտանգէ մեր միջավայրը: Ահա նոր պատերազմի ուրւականը Բուլղարիայի սահմանագլխում. ի՛նչ աղէտներ ու արհաւիրք չի բերի նա անպաշտպան հայաստանցուն...

Գեթ այսուհետև գիտակցենք մեր բացառիկ կացութեան զարհուրանքը և գործենք նրա տիրական ներշնչման աակ: Սրտապնդող նշաններ երևում են արդէն, համերաշխութիւնը ի վերջոյ պիտի հարթէ իր ճանա-

պարհը, հակառակ ցեղի պառակտիչ բնազդներին... Համերաշխութիւն՝ ճգնաժամի վայրկեաններում, համերաշխութիւն՝ ազատելու միակամ ընդմիշտ ժողովուրդը բնազդման կոշմարներէրէ: համերաշխութիւն՝ գործով, միահամուռ, դիմադրական աշխատանքով և ոչ պարապ յոխորտան բներով, որոնց տխուր ունայնութիւնը վաղուց արդէն զգացել ենք մեր տրուած կաշի վրայ: Մէկ սիրտ, մէկ միտք և մէկ կամք — այլապէս գահաւէժը կարող է դառնալ օրհասական: Մե՛նք ենք, որ կը փորենք մեր սեփական գերեզմանը — ոչ օտարները: Ինքնասպանութեամբ է, որ պիտի մեռնինք— ոչ սպանութեամբ:

Դ Է Պ Ի Ն Ո Ր Դ Ո Ւ Մ Ա

Ընտրական պայքարը սկսած է Ռուսաստանում, զանգուածների ընդհանուր անտարբերութեան մէջ: Ոչինչ յուզումներ ու իրարանցում և ոչինչ խանդավառութիւն...

Այդ հոյլ, իներտ անգործութիւնը, տարաբախտաբար, ուսական զանգուածների հիմնագիծն է, բայց այս անգամ նա ունի ծանրակշիռ արտաքին պատճառ: Ընտրական գործը այնպէս, ինչպէս սահմանաւորած է յի վերուստ, 1906-ի Յունիսեան օրէնքով, չունի բնագրւելութիւն ժողովրդային ընդհանրութեան համար «Վարիտների» մի հմուտ, մակեակէլիկ բաժանումով և աստիկան-ժանդարմական սիստեմատիկ ճնշումներով ժողովուրդը դուրս է նետում ընտրողական կրկեսից, և հրապարակը մնում է մի շնչին, առանձնաշնորհեալ փորձաժամանակութեան, որ և ստեղծել էր հինգ տարի առաջ իր ցանկացած խորհրդարանային կազմը — հոկտեմբերեան, պուրիչկեփիչեան Դուման:

Ոչինչ չէր հեց բազմաշարքար Ռուսաստանը այդ սև բանակի հինգամեայ տիրապետութիւնից: Կեանքն ամենուրեք լծացաւ, հանրային եռանդը մարեց, Սիբիրն ու ներքին բանտերը լցեցին հարիւր հազարաւոր երիտասարդներով. անտեսական, կրթական և ընդհանուր քաղաքակրթական առաջագիմութիւնը կաշկանդեց, համալսարանները ենթարկեցին վասսոնների բիրտ ու սգէտ խոշանգումներին, հարիւր միլիոնաւոր ժողովուրդը մնաց նոյն անբան թշուառութեան, նոյն անյոյս, խաւարակուռ գոթիքի մէջ իսկ Եւրոպազաւառները... այդ մասին խօսելն իսկ աւելորդ է:

Եւ ահա այդ վիճակն է, որ կուզէ շարունակել յաւերժացնել բունպետութիւնը: Նա նորէն ճիգ է թափում յիր Դուման ստեղծելու, աւելի ևս «հնազանդ Դուման»... որովհետև միակետը գոհ չմնաց նախորդից և հրապարակով արտայայտեց իր «օգոստափառ ցասումը»...

Յունիսեան օրէնքի սահմանափակումներն ու յօշոտումները, ըստ երևոյթին, բաւական չէին, և ահա կուսովարութիւնը, ունենալով իր մէջ ներքին գործ մինիստրի պաշտօնում Մակարովի պէս մի բիրտ դահլ պլեյեկական մտայնութեամբ՝ հրահանգում է—իր բաձալի խորհրդարանը կուելու համար—ի գործ դնել ախտի բոլոր միջոցները, ահաբեկել ազգաբնակութիւն հրապարակ նեաել բոլոր արքայապաշտ սևազգեստն



րին—ուս խուլիգան կղերը—որպէս զի առաջագիմական բանակը, կազէտ, սօցիալիստ և այլն, առաջ չ'երթայ, նոր նիստեր չգրաւէ, այլ, եթէ հնարաւոր է, աւելի ևս յետ մղւի ու չքանայ ասպարէզից:

Դուժան՝ լցւած եպիսկոպոսներով ու պօպերով—ահա Մակարովների իդէալը: Եւ նրանք յամառ հետապնդում են այդ նպատակին, շնայեա՞ծ բողոքի ու ցասման գոչիւններին, որ բարձրանում են ոչ միայն արմատական, այլ և ամենաշափաւոր քաղաքացիների, անգամ «Կոօօյէ Վրէմիա» ի բանակում:

Ճիշտ են արդեօք հրապարակի վրայ շրջող լուրերը, թէ իբր այդ կէտում հակամարտ են մինիստր-նախագահ Կոօօօյցով և Մակարով: Ճիշտ է արդեօք, որ իբր Ֆրանսիական նախարարապետ Պուանկարէ, իր վերջին այցելութեան միջոցին լուրջ ու ազգու «յանձնարարութիւններ» է արել Կոօօօյցովին, շօշափել է Ռուսիոյ ներքին քաղաքական վիճակը, պարբերական ցնցումներն ու երբուժները, որոնք ուժգնօրէն անդրադառնում են Ֆրանսիոյ հանրային կարծիքի վրայ, պղտորում են երկու գաշնակիցների յարաբերութիւնները, վտանգում են փոխառութիւնների գործը. որ իբր այդ պատճառով Կոօօօյցովը, որպէս հմուտ ֆինանսագէտ, գերազանցապէս գործնական միտք, տրամադիր է մեղմելու, բարեխառնելու իր նախկին բռնապետական հաւատամբը, հրաժարելու իր պատմական բացականչութիւնից (փա՛ռք Աստուծոյ, մենք չունինք պարլամենտ...) և թողնելու, որ ընտրութիւնները կատարւին համեմատաբար ազատ, հանգուրժելի մթնոլորտում, առանց կառավարական տերրորի, առանց կղերի ու պաշտօնեաների գործօն միջամտութեան... Ստոյգ է արդեօք երկու մինիստրների հակամարտութեան փաստը, Կոօօօյցովի մասնակի հաւատափոխութիւնը...

Այդ է, որ կը տեսնենք մօտ ապագայում: Կը տեսնենք նաև, թէ ինչ ուղղութեամբ են ազդել կառավարութեան ու երկրի վրայ նաւասօրմի մէջ տեղի ունեցած վերջին ծանր խլրտումները, Սիրիբան կոտորածը և ինչ Կը տեսնենք, թէ ինչ իրական փոփոխութիւններ կ'առաջանան «հոկտեմբերեան» բանակում, հինգամեայ դառն, ամուլ փորձերից յետոյ:

Առայժմ պայքար է հասարակութեան գէթ վերին շերտերը ցոյց են տալիս որոշ կենդանութիւն, հրատարակում են իրենց կոչերն ու նշանաբանները: Մասնակցում են և սօցիալիստները: Անգամ ս. ռ. ների մէջ—որ մինչև օրս բոյկոտի կողմնակից էին—մի խոշոր հատուած պահանջում է գործօն մասնակցութիւն «Պատեհ հապաշտութեան», աւելի ճիշտ՝ առողջ, կենսական գործնականութեան մի հոսանք է անցնում ներկայումս ուս սօցիալիստների աշխարհում... անշուշտ, ցուազին վիժուածների և ներքին անկարողութեան գիտակցութեան շնորհիւ:

Ո՞վ է փրկելու Ռուսաստանը: Ի՞նչն է փրկելու... Յոյսերը շատ էլ փայլուն չեն. սկեպտիկութիւնը շեշտւում է գրեթէ բոլոր առաջագիմական բանակներում: Ընտրողական այլանդակ օրէնքը և յաղթական ռեակցիան կանգնած են սպառնազին ուրականի պէս և ի գերև են հանում բոլոր լուստես երազները:

Այնուամենայնիւ, կան որոշ յոյսեր՝ գէթ մեղմելու այդ ռեակցիայի պատուհասները, գէթ փոքր ինչ ստաւ-

րացնելու Դուժայի մէջ ազատասէր տարրերը, գէթ փոքր ինչ թուլացնելու մութ ուժերի միահեծան տիրապետութիւնը...

Եւ այդ նշանաբանը պէտք է լինի ղեկավար բոլոր ողջմիտ ընտրողների, լինի ուս, թէ լեհ, թէ հայ կամ վրացի, սօցիալիստ կամ թէ սօցիալ-դեմօկրատ, գաշնակցական, լիբերալ և այլն: Սօցիալ-դեմօկրատների որոշ տարր, հնագանգելով աւանդական և ամուլ դօքտրիններու թեան, շարունակում է զարմացնել Ռուսաստանի քաղաքացիներին իր «խիզախ», «հերոսական» ժեստերով: Նրանք նոյնիսկ ազդարարում են ի զգուշացում իրենց հօտի, թէ կառավարութեան նպատակն է ամեն կերպ նպաստել կազէտների (սահմանադր.-նամկավար) աջողութեան, և որ հետևապէս բանւորները, պրօլետարիատը պէտք է միանգամայն բացասական դիրք բռնեն դէպի կազէտները, ձայն չտան նրանց թեկնածուներին...

Լուրջ ու սրտցաւ ընտրողները չեն համակերպի այդ անհեթեթ զառանցանքներին: Մղերով հանդերձ իրաքանչիւրը իր կուսակցական գաղափարների պրօպագանդը, նրանք չեն հրաժարւի մտնելու ի հարկին կօմպրօմիսի, համաձայնութեան մէջ սահմանադր.-նամկավարների և այլ ազատամիտ տարրերի հետ՝ ըստ կարելոյն մեծ թւով առաջագիմական թեկնածուներ անցկացնելու համար:

«Կարմիր անհաշտութիւնը» և վեհապանծ կղերացու՞մը տասնեակ տարիների ընթացքում՝ մի քայլ իսկ առաջ չտարին Ռուսաստանի բախտի անիւը—և համբարաշխ քաղաքականութեամբ է, որ պիտի ազատւինք «սահմանադրական բռնապետութեան» մահահոտ ճահճից:

Կ Ե Ն Ս Ս. Գ Ր Ս. Կ Ս. Ն

ՅԱԿՈՐ ԶԻՆԻՆԿԱՐԵԱՆ

(ԱՇՈՏ ՀԱՅԳՈՒՆՆԻ)



Յ ա կ ո Ր Զ ի Ն ի Ն Կ Ա Ր Ե Ա Ն

Ահա ռուսական զնգանի զոհերէն մէկը, մեռած վլադիկովկազի բանաում, տիֆլից:



Ընկեր Յակոբ Չիլինկարեան բնիկ ալեքսանդրոպոլցի էր (Պովկաս), այն քաղաքից, որ աւել է բազմաթիւ յեղափոխական գործիչներ (Պետո, Աւետիս Մալոյեան, Վազո Ասյն) և որ եղել է Տաճկահայ դատի համար ամենամեծ բարոյական ու նիւթական զոհողութիւններ անողներից մինը:

Յակոբը իր միջնակարգ կրթութիւնը ստացել է ռեմարանում, որանոցից (V) կարգի վկայականով) հեռացրել է իրեն ըմբոստ. ապա իրեն կամաւոր զինուոր ծառայել է ռուսական բանակում և պահեստի սպայի աստիճանով հեռացել բանակէն:

Նա յեղափոխական գործին յարել է դեռ պատանեկան հասակում, իր մայրենի քաղաքում—Ալեքսանդրոպոլում—որ շարժման սկզբից ի վեր եղել է միշտ մի առանձին ոգևորութիւն, որի հանդէպ զգայուն սրբուերը անտարբեր լինել չէին կարող:

Բայց լայն կուսակցական գործունէութիւն նա սկսել է Քազուում, ուր 1901—1902 թւականներին, շնորհիւ Գրիգորի կողմէն դառնալուն և որոշ ժամանակ հոն հոստատւելուն, սկսել էր յեղափոխական շրջանակներ ստեղծել, բանւորական և երիտասարդութեան կազմակերպութիւններ առաջ գալ:

Յակոբը այդ նոր սկսող կազմակերպական շրջանակի ամենաեռանդուն աղաներից մէկն էր... Ժամանակն էլ բարեյաջող էր, Թիւրքահայաստանից թարմ լուրեր կը գային, Անդրանիկի ու Գեորգ Չաուշի Առաքելոց վանքի գրաւման լուրերը նոր թափ ու ոգևորութիւն էին հաղորդել...

Այդ ժամանակն էր և տաճկահայ գաղթականների ռուսաց ցարի հրամանով Թիւրքիա քշելը. ամեն կողմից ոգևորութիւն էր կարծում էին, թէ Համիդը պիտի ընդունի գաղթականներին, համարում էին այդ մեծ յաղթանակ... Թարմ, յեղափոխութեան գաղափարներով տոգորւած մի հոսանք կերթար երկիրու Շատերը մեզնից պատրաստուած էին միանալ գաղթականներին և իրեն հայաստանցի ներս գնար Բայց բոլորիս յոյսերն ի դերե ելան, ցարիզը նորէն կը խաղար իր ստոր գաւերը մեր խեղճ ժողովրդի գլխուն: Գաղթականները թւով 70,000 մնացին սահմանագլխում, ձիւն ձմեռ... ոչ թիւրք կառավարութիւնն էր ներս առնում և ոչ էլ ռուս կառավարութիւնը համաձայնում էր պահել Հետևանքը յայտնի է:

Այդ ժամանակն էր և եկեղեցական կալւածների գրաւումը:

Ճիշտ նոյն ժամանակները սկսել էին կազմակերպել ռուս սոց. դեմոկրատիային յարակից հայ բանւորական կազմակերպութիւններ: Տենգալին պայքարի օրեր էին, դրոյր արժեքները վերագնահատման էին ենթարկւում<sup>4</sup>, ժողովներով, կոնֆերանսներով, գաղանի թուղիկներով և թերթերով: Տաճկահայ դատ, ազգային

հարց, անտեսական, դասակարգային պայքար, ռուսահայերի և տաճկահայերի փոխադարձ օգնութեան խնդիր, բռնի և խաղաղ յեղափոխութիւն, զուտ կովկասեան տեղական սօցիալիստ գործունէութիւն և այլն և այլն. հարցեր՝ որոնց շուրջ սկսել էր կատաղի կռիւ... Երկու հոսանքի մարդիկ էլ (գաշնակցական և ռ. ս. ս. դեմոկրատական) գործի են սկսում, բանւորական կազմակերպութիւններ ստեղծելով: Ինչ ասել կուզէ, որ հայ բանւորական շրջանակներում յաղթանակողը լինում է գաշնակցական երիտասարդութիւնը: Թէև այն ժամանակ մեզ համար ևս դեռ բոլորովին պարզ չէր մեր անելիքը կովկասում, բայց ամենքս մի բանի մէջ համոզւած էինք՝ որ նախ մեր կապը պիտի պահպանենք թիւրքահայ դատի հետ, որ այդ դատի պրոպագանդը պիտի մղել և բանւորական շրջանակներում. և երկրորդ՝ ամենքս ընդունում էինք, որ հայ բանւորները իրենց տնտեսական-բանւորական պահանջների համար էլ աշխատելու են համերաշխութեամբ մնացած բանւորական կազմակերպութիւնների հետ: Եւ այս գործունէութիւնն էր, որ սանկցիա ստացաւ մեր 4-րդ ընդհանուր ժողովից:

Յակոբը Բալխանիի իր շրջանի բանւորական խմբերի կազմակերպողը և կապ պահպանողն էր:

Ցորեկները 12 ժամ անտանելի աշխատանք գործարանում և գիշերները մինչև ժամը 1—2, շատ անգամ մինչև լոյս, բանւորական գիշերային գաղտնի ժողովներում, երեկոյթներում ու վիճաբանական ժողովներում:

Բնւորութեամբ մեղմ, չափազանց համեստ և սակաւախօս մարդ էր. միշտ կ'ասէր. յիստեցէ՛ք, վերջը գիտում, որ իմ գլխուս պիտի մնայ... Եւ յիրաւի, բոլոր գործնական աշխատանքները կը տանէր մեն-մինակ:

Իսկ նրա տունը... մի կատարեալ հիւրանոց էր. օր չկար, որ այս կամ այն ընկերը հոն չլինէր կամ չպառկէր—իսկ Բագում անգործ մարդիկ շա՛տ...

Այդ բոլորը նա տանում էր ուրախութեամբ, հաճոյքով, բայց այդ բոլորը նրան չէր գոհացնում, հարկաւոր էր ամբողջապէս նւիրել գործին:

Եկեղեցական գոյքերի գրաւումը և նրան ուղեկցող ցոյցերը եղան վերջին ազգանշանը Բագուի երիտասարդութեան համար՝ դէպի գաւառ մեկնելուն: Դէպի գաւառ—ժողովուրդը կազմակերպելու և պայքարը ուժեղ վարելու համար:

Գաւառ գնացող հոսանքի մի ուժեղ ձիւղը ուղղւեց դէպի Ղարս: Եւ այդ՝ կրկնակի պատճառով. նախ՝ որ Ղարսն ու Ալեքսանդրոպոլը սահմանագլուխ լինելով, տաճկահայ դատի գործունէութեան համար լայն ասպարէզ էին. երկրորդ՝ այդ շրջանից էր, որ սկսեցին առաջին անգամը մեծ ժողովրդային ցոյցերը ընդգէմ ռուս կառավարութեան:

Եւ ահա 1903 թ. Յակոբը Ղարս է գաղտնի և



տեղական կազմակերպական — զինուորական գործերով։  
 Նորէն նոյն սուսիկ-փուսիկ գործող Յակոբը, առանց  
 հրապարակային ճառամարտութեան և ցոյցերի, առանց  
 կազմակերպութեան վրայ տնտեսապէս բեռ լինելու, նա  
 ապրում էր Բագւի մէջ տնտեսած իր գումարներով։ Եւ,  
 ասում են, նոյն սովորութիւնը պահել է մինչև վերջը։  
 Շարժումը լայն ծաւալ է ստանում, գրուելով Երևանի,  
 Ղարաբաղի և այլ հիւսիսային կողմից հայկական  
 շրջանները։

Վրայ է հասնում հայ-թիւրքական ընդհարումը։ Յակոբը  
 արդէն զէնքի գործով հիւսիսային կողմից է  
 մասնակցում է «Ծլատի» կ'կոմիտէի գործունէութեան,  
 որպէս ազատ ընկեր-գործիչ այցելում է «Նալբանդի»  
 շրջանը նոյնպէս զէնքի և կազմակերպական գործով  
 1906-ին գնում է դէպի հեռուոր արևելք — Ման-  
 ջուրիս, նորէն զէնքի գործով, այնտեղից Ա շ ո տ Հ ա յ -  
 կ ու Ն ի կեղծանունով կը թղթակցէր մեր կողմից  
 թերթերին։

1907—1908-ին մասնակցում է մի հրանական հո-  
 սանքի դէմ կազմակերպւած պայքարին, 1907-ի ամառը  
 ինքն անձամբ գնում է Արմաւիր և Պետիգորսկ՝ դա-  
 ւաճանի դէմ տերրորը կազմակերպելու։

Իսկ 1908 թ., ռաջոնական ժողովի որոշումով, գնում  
 է նորէն հիւսիսային կողմից «Զիֆօնի» հաշիւները  
 մարքելու համար. ահա հէնց այդ ժամանակ մասնուում  
 է Պետիգորսկում և բռնելով փոխադրում է Ալատի-  
 կովկաս, ուր 3 տարի դաժան բանտարկութիւնից յե-  
 տոյ, իր թոյլ կազմը չգիմանալով բանտային դժոխքին,  
 վարակւում է տիֆով և անտէր, անօգնական մեռնում է  
 միս-մենակ բանտի խուցի մէջ։

Մայր ու բոյր չկար՝ աչքերը գոցելու, ընկեր չկար  
 վերջին համբոյրը տալու համար...

Ռուս պահապանն էր միակ վկան, որ անտարբեր  
 երթեկեկում էր խուցի առջև և լսում մահւան հռն-  
 դիւնները...

Միւս օրը նրան թաղում են հիւսիսային կողմից մի  
 խուլ անկիւնում։

Եւ այնտեղ, հեռուն, Ալէքսանդրօպօլի մէջ, իր հա-  
 րազատները հսկումն են կատարում իրենց ընտանիքի  
 երկրորդ և թանկագին զոհի համար... Յակոբի փոքր  
 եղբայրը սպանել էր ռմբային մի փորձի ժամանակ,  
 1902-ին Ալէքսանդրօպօլում։

Եւ այսպէս, բռնակալները սահմանի այս և այն կողմը  
 հնձում են անդադար մեր ծաղիկ յոյսերը...

Ա Ր Ա Մ

Ա Ն Յ Ե Ա Ւ Ի Ա Ր Շ Ի Վ Ն Ե Ր Ո Ւ Մ

Վ Ա Ր Դ Ա Ն Ի Յ Ի Շ Ո Տ Ա Կ Ո Ր Ա Ն Ը

II

Թափուր աղասիի հետ մեր ճակատամարտը միան-  
 գամայն պատահական էր։ Իր ձիւղորներով նա միամտա-  
 բար պտտելիս է եղել լեռների մէջ և յանկարծ հան-  
 դիպում է մեզ։

Կուից անմիջապէս յետոյ՝ ձիւղորները գնում են  
 Բողազ-բէսան. գիշերը մնում են գիւղը, խուզարկու-  
 թիւն անում, մի քանի մարդկանց ձերբակալում, իսկ միւս  
 առաւօտեան ընկնում լեռները, որ տեսնեն, թէ ինչ են  
 թողել յղաչաղները<sup>1</sup>։

Մեր ձորից լեռ բարձրանալու ժամանակ, հայդուկ-  
 ներից երկուսը յոգնածութեան պատճառով ձգում են  
 իրենց տոպրակները։ Թաբուր աղասին գտնում է նրանց.  
 միւս օր ձիւղորները տանում են քաղաք, ներկայացնում  
 դատարանին, որի առթիւ ահագին բնութիւն է բաց-  
 ւում։ Տոպրակների մէջ լինում են հաց, ոտնաման և մի  
 քանի մանր-մունր բաներ. ուզում են հասկանալ, թէ  
 արդեօք հացը ո՞րտեղի հաց է, ոտնամանների կարը ո՞ր-  
 տեղի կար է. տոպրակները ո՞րտեղից են և լն և լն Որով-  
 հետև, ինչպէս երևում է, սկզբում նրանք չեն կարո-  
 զանում հաստատապէս իմանալ մեր ինչ ազգից լինելը։  
 Տոպրակներն են զլխաւորապէս համոզում նրանց։ Բո-  
 ղազ-բէսանում ձերբակալւած մարդկանց տանում են  
 քաղաք, ուր բանտարկում են ու բաւական ժամանակ  
 պահելուց յետոյ, արձակում։

Բողազ-բէսանցիք կարծի մարդիկ էին, այդ բանտար-  
 կութիւնները բնաւ չ'ազդեցին նրանց վրայ։ Նրանք միշտ  
 դարձեալ պատրաստ էին այդպիսի խմբեր ընդունելու,  
 ապաստան տալու, ու մինչև վերջն էլ այդպէս մնացին,  
 մինչև 1895-ի աշունը, երբ նորէն կռիւ տեղի ունեցաւ  
 այդ գիւղում հայդուկների ու քրդերի միջև։

\*\*\*

Ամբողջ գիշերը շուտաբայլ լառաջ էինք գնում, որ-  
 պէս զի կարողանայինք վտանգաւոր ճանապարհն անցնել  
 ու հասնել սահմանագլուխ։ Գիշերը երկար էր, ճանա-  
 պարհն էլ էր երկար. մինչև լոյս գնացինք։ Առաւօտեան  
 վաղ հասանք Ախուրկալ լեռը։ Զիւնով ծածկւած էր  
 նա. մտանք մի այր և սկսեցինք համրել մեր արձակւած  
 փամփուշտները. զէնքերը սրբեցինք և այդ ցրտի մէջ  
 պառկեցինք բնելու։ Մի քանի ժամից ելանք ու շարու-  
 նակեցինք ճանապարհը, ամբողջ ցերեկն ու գիշերը գնա-  
 ցինք շարունակ, հասանք Ղ ւ ս տ ա Վ ա ր աւ։



Հիւանդ Մարտիրոսի վիճակը վատ էր. հաց բնաւ չէր կարող ուտել, բայց և այնպէս մի կերպ քաշէրաջ գալիս էր մեզ հետ: Մօտ 30 ժամ անընդհատ գնալով, մենք գրեթէ ուժասպառ եղանք: Լուսածագին, Դաստա-Դարայի ահագին ձորով անցնում էինք, հանդիպելով ճանապարհին կարաւաններ, որոնք դէպի Թիւրքիա էին գնում: Միշտ դրանցից խոյս էինք տալիս: Դաստա-Դարայի ձախ կողմն անցնելով, բարձրացանք դէպի վեր և մի ձորակում պահեցինք: Ցերեկը բնեցինք, թրջւած գուլպաները չորացրինք: Մինչև երեկոյ մնացինք այդ ձորում և երեկոյեան մութն ընկնելուց՝ նորէն լստանք ձորը և առաջ էինք գնում:

Դաստա-Դարան գտնուում է պարսից հողի վրայ և կատարեալ աւազականոց է: Այդ ճանապարհով երթեալ կողները համարեայ բոլորն էլ զինւած էին լինում: Հանդիպեցինք մի մեծ կարաւանի, որից խոյս տալը անկարելի էր, որովհետև արդէն նկատել էին, և որպէս զի մեր հետքը կորցնենք և չ'իմանան մեր հայ լինելը, դիմեցինք մի հնարքի. վախճաններից մէկը շատ լաւ բրդերէն երգել գիտէր. առաջ ձգեցինք նրան, սկսեց երգել և այդպէս գնացինք: Կարաւանը բաղկացած էր պարսիկներից և քրդերից, մեծ մասամբ զինւած փամփուշտաւոր հրացաններով: Մեզ նկատելուն պէս՝ իբրև զինւած մարդկանց, խնդրեցին, որ կարաւանի մէջ շխառնուինք. մենք էլ արդէն չէինք ուզի խառնուել, եզրովն էինք գնում: Երբ նրանք հարցրին մեր ով լինելը և որտեղից լինելը—քրդական մի գիւղի անունը աւինք. «գնում ենք խոյ ապրանք գնելու, մենք ևս կարաւանի մարդիկ ենք և մեր անասունները գալիս են մեր ետևից»: Այդպիսով առանց կասկածուելու հեռացանք կարաւանից: Բաւական գնացինք, մէկ էլ յանկարծ տեսանք երեք քիւրդ ձիաւորներ, լաւ զինւած, մեր դէմն ելան և կարծելով թէ մենք քրդեր ենք, բարեկեցին ու կանգ առան խօսելու: Հարց ու փորձ. «որտեղից էք գալիս և ո՞վքեր էք...» Մենք ի հարկէ պատշաճաւոր պատասխանը աւինք ու անցանք: Բայց հայդուկներից մէկի, Շէրօի սիրտը պղտորեց. «ողբ՛րք, ասում է, եկէք զարններ դրանց»: Իսկապէս վատ միտք չէր, երեք հրացան կը շահէինք. բայց խնդիրը նրանումն էր, որ մենք շատ յոգնած էինք, հացերնիս բոլորովին վերջացել էր և համարեայ չէն տեղերի մօտն էինք գտնուում: Խոյը այնքան էլ հեռու չէր և կարող էին միւս օրը մեզ հետամուտ լինել: Ուստի յետ կանգնեցինք այդ մտքից ու առաջ անցանք: Այնքան անօթի, թոյլ, ուժասպառ էինք, որ եթէ մեր ձեռքի զենքերը չլինէր՝ մի երկու անգէն մարդ կարող էին մեզ կողոպտել:

Դեռ բաւական գիշեր կար, արդէն Վառ գիւղի դաշտերումն էինք. բայց գիւղի ճանապարհը կորցրել ենք և երկար չենք կարողանում գտնել: Վալադը հազիւ գտնուում է, մօտենում ենք գիւղին, նստում ենք ծայրի

մի այգիի մէջ, երկու հոգի մտցնում գիւղը, որպէս զի տեղ պատրաստեն մեզ համար: Յուրաք և անօթութիւնը շատ էին նեղում մեզ: Արջակցի աղայի առարկում գարի հացի փշրանքներ կային, մի բուռ խնդրեցի, բայց դա էլ բերանդ առնելուց՝ միայն հազ էր առաջացնում: Գիւղից մարդիկ եկան և մեզ տարան այնտեղ. խկոյն հաց բերին մեզ, թէյ տւին, տաք սննեակ և այլն: Կուշա ուտելուց յետոյ, պառկեցինք բնելու: Առաւօտեան մարդ ղրկեցինք խոյ, մեր ընկերներից երկուսին կանչելու, մի քանի կարևոր բաների մասին խօսելու: Համար էկան նրանք, պատմեցինք մեր արկածները, ընդհարու՛մը: Արովհետև շատ էինք յոգնած և նոյնիսկ մի բանիսի ոտքերի տակ պողոճկել էր՝ այդ երեկոյ չկարողացանք գնալ, յետաձգեցինք միւս օրւան: Գիւղացիք շատ լաւ ընդունեցին մեզ, ոտներն աղաջուր դրեցինք, որ յայտնի չափով կազդուրում է յոգնած մարդուն, մեր կեղտոտ լաթերը թփաւ տւինք, մարբուցեցինք, որքան հնարաւոր էր, բոլոր մեր պակասները լրացրինք: Երկու օր մնալով Վառ գիւղում, փոքր ինչ կազդուրեցինք մեր ուժերը և ճանապարհ ընկանք դէպի Սալմաստ: Լուսաբացին Սանամբրիկ գիւղումն ենք, մեր ծանօթներից մէկի տանը, փառաւոր կերպով հացի մօտ բազմած: Այդ օրը նոր թարմ հաց էին թխում այդ տան մէջ, խեղճ հացթուխ-մայրիկը չէր կարողանում հասցնել, որդին հա՛ պոռում էր.— «մայրիկ, հա՛ց հասցրու»: Թանրից դուրս եկածը կուլ էինք տալիս: Կշամայուց յետոյ՝ քնեցինք: Կեսօրին՝ նորէն կուշա մը ճաշ և երեկոյեան ընթրիք ու թէյ. ապա հայդէ դէպի Սալմաստ գիւղ: Այդտեղ մեզ համար լաւ ընթրիք էին պատրաստել, որին արժանացանք կեսգիշերին:

Արդէն մեր հին տանն էինք գտնուում, մեր ընկերների ու ծանօթների մօտ: Մի շաբաթւայ մէջ հազիւ կարողացանք ուժի գալ ու կանոնաւոր քայլել: Համարեա բոլորին ոտքերն ուռել ու սաստիկ ցաւում էին:

Սալմաստից անցանք Բաւրիզ, ուր կանոնաւոր կազմակերպութիւն ունէինք, մի առ ժամանակ էլ այնտեղ մնացինք, ապա երեք հոգով անցանք Կովկաս:

Ամբողջ չորս տարի էր, Կովկասից կարւած էի և ահա առաջին անգամը այցի էի գնում: Կովկասում, Թիֆլիսի մէջ, հայ ֆէդային ստիպւած էր «ծածկուել»: Նեղութիւն շատ կրեցի, մանաւանդ առջի ամիսները, ապրում էի յետ ընկած բարւանսարաններից մէկում, կիսահիւանդ դրութեան մէջ: Յետոյ անցայ Բագու, մթնոլորտը վատ չէր, կար յայտնի ռեզորու՛թիւն, ժողովներ էինք գումարում, խօսում, պատմում Բողազ-Քէսանի անդրանիկ ու յաղթական կռիւը, ժողովրդի վիճակի մասին տեղեկութիւններ էին տալիս և հրաւիրում երիտասարդութիւնը եռանդուն գործունէութեան՝ թիւրքահայոց ազատագրման խնդրի շուրջ: Ամբողջ ձմեռը Կովկաս անցնելուց



յետոյ՝ գարնանը նորէն անցայ Պարսկաստան, այնտեղից երկիր անցնելու համար:

1895 թւի ապրիլին գտնուում էի Թաւրիզ, ապա Սալմաստ: Այդտեղ արդէն պատրաստութիւններ էր տեսնուում՝ նոր խումբ մտցնելու երկիր և սպասուում էին երկրից եկող մարդկանց, որոնք մեզ հետ միանալով, զէնք պէտք է փոխադրէինք: Կի մեծ խումբ էր կազմակերպուում՝ Շ-ի ապստամբութեան գործը գլուխ բերելու համար:

Չմեռւայ ընթացքում Թաւրիզ գտնւած ընկերների մէջ դժգոհութիւններ են ծագում, որ և շարունակուում են Ս-ուում: Դժգոհութեան առիթ տւող հերոսը լինում է Վանի ներկայացուցիչ Սահանը: Այդ անձը իրեն շատ բարձր էր երևակայում և ամեն բան իր մէջն էր գրանուում: Ընկերները բաժանուում են երկու մասի, նրան հակառակ և պաշտպան: Բայց յանուն գործի՝ թէ պաշտպանները և թէ հակառակորդները աշխատում են ամեն կերպ, որ խմբի գնալը չխանգարուի: Խռովութեան հերոսը տաք վիճարանութիւն է ունենում իր հայրենակիցներից մէկի հետ, որը և սրով վիրաւորում է նրա ազգը: այդ պատճառով խմբի գնալը յետաձգուում է մօտ 20 օրով: Խումբը բողկացած է 22 հոգուց, գլխաւորապէս շատախցիներից: Սահանին նշանակում են խումբապետ, իսկ ինձ ու Սաքոյին օգնականներ:

Մայիսի վերջին, 22 հոգուց բողկացած խումբը 33 հրացանով ճանապարհ է ընկնում երկիր: Սամաստից ճանապարհ ընկնելով՝ գնում ենք Թուզկոտելով: Բայց մենք մի քանի ոչ լեռնցիներս վախենում էինք, մի գուցէ շատախցիների հետ չկարողանանք ճանապարհ գնալ, որովհետև նրանք շատ վարժ են բայլելու մէջ: Բայց վերջը, ինչպէս երևաց, մենք նրանցից յետ չմնացինք: Բեռներս բաւականին ծանր էր:

Աւելորդ չի լինի այստեղ՝ հայդուկային կամ գինակիր խմբերի մասին մի հակիրճ տեղեկութիւն տալ:

Խմբերը կոչուում էին «գինակիր», այսինքն՝ զէնք փոխադրող: Նրանք սովորաբար աւելորդ հրացաններ են առնում իրենց հետ, ուժերին նայած, երկու հոգուն՝ 3 հրացան, իսկ աւելի ուժեղները, մի հոգին՝ 2 հրացան. շատ հազւագէպ են 2 հրացան տանողները, որովհետև ի նկատի ունենալով է, որ հայդուկի բռնը միայն հրացանները չեն կազմում, իւրաքանչիւր հայդուկ ունի 150—200 փամփուշտ, ասորճանակ, սուր, հացի սոպրակ մէջքի վրայ, ապա և ճամբու երկարութեան համաձայն՝ հաց, գլխաւորապէս՝ փոխինդ, պատրաստած իւղով (գաթայ), որ սննդաբար է և բիշ կը վերցւի: Բացի հացից՝ վերցնում են բիշ էլ պանիր, եփած միս, չամիչ, չորթան քաղցի ու ծարաւի դէմ: Ծխողները՝ ծխախոտ, լուցկի ևն. իւրաքանչիւրը ունենում է դեղորայքի փոքրիկ սոպրակ, որի մէջ լինում են կարևորագոյն դեղերը. օրինակ արիւնը դադարեցնելու համար՝

եօտօֆօրմ, վիրակապ, թել, ասեղ, ապա և հիւանդութեան դէմ դեղեր՝ բինին, փորացաւի տեղ և մի քանի ուշեր տեղեր՝ ոտքերի պողոճկելու դէմ. իւրաքանչիւր հայդուկ ունենում է 2 զոյգ գուլպայ և 2 զոյգ ոտնաման. բացի այդ բոլորից՝ ունենում են և մի փոքրիկ կաշու սոպրակ, որի մէջ հրացանի կարևոր գործիքներն են տեղաւորում, վերջապէս իւղամանը: Շատ անգամ փոխադրում էին յեղափոխական հրատարակութիւններ: Հայդուկները հագնւած են լինում ըստ կարելոյն տաք և լաւ՝ թէ ցրտից և թէ անձրեկից պաշտպանելու համար:

Ճանապարհին հացը գործ են ածում շատ խնայողաբար. հացը ծանր է և բիշ էր պատահում, որ կուշտ ուտէինք: Շատ անգամ պաղ աղբրի մօտ նստած ախորժակներս բորբոքում էր և կուզէինք միանգամից ամբողջ սոպրակը սպառել, բայց կարողանում էինք զսպել մեզ և բաւականանում էինք մի չոր կտորով, որ ծամում էինք երկար: Հայդուկները գրեթէ միշտ գիշերով են ճամբորդում, իսկ ցորեկները հանգստանում են, իւրաքանչիւր գիշերւայ համար որոշ կայան ի նկատի ունին առաջուց, կամ լեռներում կամ գիւղերում: Պէտք է այնպիսի կայաններ ընտրել, որ փոքր շատե պահուց լինին և տղերքը որոշ ժամանակին տեղ հասնին դաշտերի մէջ չմնալու համար, լուսաբացից առաջ:

Մեր հայդուկային խմբերի կայանները գլխաւորապէս լեռներն էին, որ աւելի ապահով և վստահելի են: Երեկոյան, մութը կոխելուց յետոյ, խումբը ամենայն զգուշութեամբ դուրս է գալիս իր դարանից, վաղգներից մէկը առաջ է ձգում մի երկու սրատես հայդուկների հետ, որոնք գիշերը մթութեան մէջ հեռուն կարող են նշմարել ճանապարհորդ, կարաւան և առհասարակ որևէ բան, որ կարող է վտանգել խմբի գոյութիւնը: Այդ 3—4 հոգին գնում են խմբից բաւական առաջ, մօտաւորապէս 100 բայլ, այնքան, որ խումբը կարողանայ նրանց տեսնել: Չրանք կոչում են «յառաջապահներ» կամ լըրտեսներ, երկու դերերն էլ կատարում են: Դրանք իրենց առջև մարդ նկատելուն պէս՝ իսկոյն ճանապարհից դուրս են գալիս մի կողմը և խմբին ազգանշան անում: Խումբն էլ ճամբուց դուրս է գալիս ու մի կողմ քաշուում, մինչև անցորդները անցնեն, յետոյ նորէն շարունակում է ուղին: Երկու, երեք արթուն ու աշխոյժ հայդուկներ էլ լինում են խմբի ետևը, որ յետ մնացածներին հասցնեն խմբին և առհասարակ հսկեն միշտ, որպէս զի ետևում մարդ չմնայ և ետևից պատահական թշնամու յարձակում չլինի:

Գիշերւայ ճամբորդութեան ժամանակ՝ ծխելն արգելւած է, որովհետև կարող են հեռուից կրակը նկատել. միայն՝ երբ նստում են մի քանի վայրկեան հանգրստանալու, ճանապարհից դուրս են գալիս, մի կողմը նստում կամ պառկում զգուշութեամբ, լուցկի վառում, ծխախոտը կպցնում 2 ձեռների մէջ պահելով: Ապա



Հիւանդ Մարտիրոսի վիճակը վատ էր. հաց բնաւ չէր կարող ուտել, բայց և այնպէս մի կերպ քաշէքաշ գալիս էր մեզ հետ: Մօտ 30 ժամ անընդհատ գնալով, մենք գրեթէ ուժասպառ եղանք: Լուսածագին, Դաստա-Դարայի ահագին ձորով անցնում էինք, հանդիպելով ճանապարհին կարաւաններ, որոնք դէպի Թիւրքիա էին գնում: Միշտ դրանցից խոյս էինք տալիս: Դաստա-Դարայի ձախ կողմն անցնելով, բարձրացանք դէպի վեր և մի ձորակում պահեցինք: Յերեկը քնեցինք, թրջած գուլպաները չորացրինք: Մինչև երեկոյ ձնացինք այդ ձորում և երեկոյեան մութն ընկնելուց՝ նորէն մտանք ձորը և առաջ էինք գնում:

Դաստա-Դարան գտնուում է պարսից հողի վրայ և կատարեալ առաջականոց է: Այդ ճանապարհով երթևեկողները համարեայ բոլորն էլ զինուած էին լինում: Հանդիպեցինք մի մեծ կարաւանի, որից խոյս տալը անկարելի էր, որովհետև արդէն նկատել էին, և որպէս զի մեր հետքը կորցնենք և չ'իմանան մեր հայ լինելը: Դիմեցինք մի հնարքի. վախճաններից մէկը շատ լաւ բրդերէն երգել գիտէր. առաջ ձգեցինք նրան, սկսեց երգել և այդպէս գնացինք: Կարաւանը բաղկացած էր պարսիկներից և քրդերից, մեծ մասամբ զինուած փամփուշտաւոր հրացաններով: Մեզ նկատելուն պէս՝ իբրև զինուած մարդկանց, խնդրեցին, որ կարաւանի մէջ չխառնուինք. մենք էլ արդէն չէինք ուզի խառնուել, եղբայրներ էինք գնում: Երբ նրանք հարցրին մեր ով լինելը և որտեղից լինելը—բրդական մի գիւղի անունը տւինք. «գնում ենք Խոյ տպրանք գնելու, մենք ևս կարաւանի մարդիկ ենք և մեր անասունները գալիս են մեր ետևից»: Այդպիսով առանց կասկածուելու հեռացանք կարաւանից: Բաւական գնացինք, մէկ էլ յանկարծ տեսանք երեք քիւրդ ձիաւորներ, լաւ զինուած, մեր դէմն ելան և կարծելով թէ մենք բրդեր ենք, բարևեցին ու կանգ առան խօսելու: Հարց ու փորձ. «որտեղից էք գալիս և ո՞վքեր եք»... Մենք ի հարկէ պատշաճաւոր պատասխանը տւինք ու անցանք: Բայց հայդուկներից մէկի, Շէրօսի սիրտը պղզտորւեց. «ողերբ, ասում է, եկէք զարնենք դրանց»: Իսկպէս վատ միտք չէր, երեք հրացան կը շահէինք. բայց խնդիրը նրանումն էր, որ մենք շատ յոգնած էինք, հացերնիս բոլորովին վերջացել էր և համարեայ չէն անդերի մօտն էինք գտնուում: Խոյը այնքան էլ հեռու չէր և կարող էին միւս օրը մեզ հետամուտ լինել: Ուստի յետ կանգնեցինք այդ մարից ու առաջ անցանք: Այնքան անօթի, թոյլ, ուժասպառ էինք, որ եթէ մեր ձեռքի զէնքերը չլինէր՝ մի երկու անգէն մարդ կարող էին մեզ կողոպտել:

Դեռ բաւական գիշեր կար, արդէն Ասու գիւղի դաշտերումն էինք. բայց գիւղի ճանապարհը կորցրել ենք և երկար շնք կարողանում գտնել: Վախճը հազիւ գտնուում է, մօտենում ենք գիւղին, նստում ենք ծայրի

մի այգիի մէջ, երկու հօգի մօցնում գիւղը, որպէս զի տեղ պատրաստեն մեզ համար: Յուրաք և անօթութիւնը շատ էին նեղում մեզ: Արջակցի աղայի առարկում գարի հացի փշրանքներ կային, մի բուռ խնդրեցի, բայց դա էլ բերանդ առնելուց՝ միայն հազ էր առաջացնում: Գիւղից մարդիկ եկան և մեզ տարան այնտեղ. իսկոյն հաց բերին մեզ, թէյ տւին, տաք սենեակ և այլն: Կուշտ ուտելուց յետոյ, պառկեցինք բնելու: Առաւօտեան մարդ զրկեցինք Խոյ, մեր ընկերներից երկուսին կանչելու, մի քանի կարևոր բաների մասին խօսելու: Համար իկան նրանք, պատմեցինք մեր արկածները, ընդհարումը: Որովհետև շատ էինք յոգնած և նոյնիսկ մի քանիսի ոտքերի տակ պողոճկել էր՝ այդ երեկոյ չկարողացանք գնալ, յետաձգեցինք միւս օրուան: Գիւղացիք շատ լաւ ընդունեցին մեզ, սոսներիս աղաչուր դրեցինք, որ յայտնի չափով կազդուրում է յոգնած մարդուն, մեր կեղտոտ լաթերը թափ տւինք, մաքրեցինք, որքան հնարաւոր էր, բոլոր մեր պակասները լրացրինք: Երկու օր ձնալով Ասու գիւղում, փոքր ինչ կազդուրեցինք մեր ուժերը և ճանապարհ ընկանք դէպի Սալմասու: Լուսաբացին Սանամ երիկ գիւղումն ենք, մեր ծանօթներից մէկի տանը, փառաւոր կերպով հացի մօտ բազմած: Այդ օրը նոր թարմ հաց էին թխում այդ տան մէջ, խեղճ հացթուխ-մայրիկը չէր կարողանում հասցնել, որդին հա՛պտում էր. — «մայրիկ, հա՛ց հասցրու». թոնրից դուրս եկածը կուլ էինք տալիս: Կշտանալուց յետոյ՝ քնեցինք: Կեսօրին՝ նորէն կուշտ մը ճաշ և երեկոյեան ընթրիք ու թէյ. ապա հայդէ դէպի Սալմասու գիւղ: Այդտեղ մեզ համար լաւ ընթրիք էին պատրաստել, որին արժանացանք կէսգիշերին:

Արդէն մեր հին տանն էինք գտնուում, մեր ընկերների ու ծանօթների մօտ: Մի շաբաթւայ մէջ հազիւ կարողացանք ուժի գալ ու կանոնաւոր քայլեր համարեալ բոլորիս ոտքերն ուռել ու սաստիկ ցաւում էին:

Սալմաստից անցանք Թաւրիզ, ուր կանոնաւոր կազմակերպութիւն ունէինք, մի առ ժամանակ էլ այնտեղ ձնացինք, ապա երեք հոգով անցանք Կովկաս:

Ամբողջ շորս տարի էր, Կովկասից կտրուած էի և ահա առաջին անգամը այցի էի գնում: Կովկասում, Թիֆլիսի մէջ, հայ ֆէդային ստիպած էր «ծածկուել»: Նեղութիւն շատ կրեցի, մանաւանդ առջի ամիսները, ապրում էի յետ ընկած բարւանսարաններից մէկում, կիսահիւանդ դրութեան մէջ: Ետոյ անցայ Բագու, մթնոլորտը վատ չէր, կար յայտնի ոգևորութիւն, ժողովներ էինք գումարում, խօսում, պատմում Բողազ-Քէսանի անդրանիկ ու յաղթական կռիւր, ժողովրդի վիճակի մասին տեղեկութիւններ էին տալիս և հրաւիրում երիտասարդութիւնը եռանդուն գործունէութեան՝ թիւրքահայոց ազատագրման խնդրի շուրջ: Ամբողջ ձմեռը Կովկաս անցնելուց



յետոյ՝ գարնանը նորէն անցայ Պարսկաստան, այնտեղից երկիր անցնելու համար

1895 թւի ապրիլին գտնուում էի Քաւրիզ, ապա Սալմաստ Այդտեղ արգէն պատրաստութիւններ էր տեսնուում՝ նոր խուժք մտցնելու երկիր և սպասուում էին երկրից եկող մարդկանց, որոնք մեզ հետ միանալով, զէնք պէտք է փոխադրէինք: Մի մեծ խուժք էր կազմակերպուում՝ Շ-ի ապստամբութեան գործը գլուխ բերելու համար:

Չմեռւայ ընթացքում Քաւրիզ գտնւած ընկերների մէջ դժգոհութիւններ են ծագում, որ և շարունակուում են Ս-ոււմ Դժգոհութեան առիթ տուող հերոսը լինում է վանի ներկայացուցիչ Ոսկանը: Այդ անձը իրեն շատ բարձր էր երևակայում և ամեն բան իր մէջն էր գրտնում: Ընկերները բաժանուում են երկու մասի, նրան հակառակ և պաշտպան: Բայց յանուն գործի՝ թէ պաշտպանները և թէ հակառակորդները աշխատում են ամեն կերպ, որ խմբի գնալը չխանգարւի: Խռովութեան հերոսը տաք վիճաբանութիւն է ունենում իր հայրենակիցներից մէկի հետ, որը և սրով վիրաւորում է նրա ազգրը: այդ պատճառով խմբի գնալը յետաձգուում է մօտ 20 օրով: Խուժքը բաղկացած է 22 հոգուց, գլխաւորապէս շատախցիներից: Ոսկանին նշանակում են խումբապետ, իսկ ինձ ու Սաքոյին օգնականներ:

Մայիսի վերջին, 22 հոգուց բաղկացած խուժքը 33 հրացանով ճանապարհ է ընկնում երկիր Սալմաստից ճանապարհ ընկնելով՝ գնում ենք թուչկոտեղով: Բայց մենք մի քանի ոչ լեռնցիներս վախենում էինք, մի գուցէ շատախցիների հետ չկարողանանք ճանապարհ գնալ, որովհետև նրանք շատ վարժ են բալլելու մէջ: Բայց վերջը, ինչպէս երևաց, մենք նրանցից յետ չմնացինք: Բեռներս բաւականին ծանր էր:

Աւելորդ չի լինի այստեղ՝ հայդուկային կամ զինակիր խմբերի մասին մի հակիրճ տեղեկութիւն տալ:

Խմբերը կոչուում էին «զինակիր», այսինքն՝ զէնք փոխադրող: Նրանք սովորաբար աւելորդ հրացաններ են առնում իրենց հետ, ուժերին նայած, երկու հոգուն՝ 3 հրացան, իսկ աւելի ուժեղները, մի հոգին՝ 2 հրացան. շատ հազւագէպ են 2 հրացան տանողները, որովհետև ի նկատի ունենալու է, որ հայդուկի բեռը միայն հրացանները չեն կազմում, իւրաքանչիւր հայդուկ ունի 150—200 փամփուշտ, ատրճանակ, սուր, հացի տոպրակ մէջքի վրայ, ապա և ճամբու երկարութեան համաձայն՝ հաց, գլխաւորապէս՝ փոխինգ, պատրաստուած իւղով (գաթայ), որ սննդաբար է և բիշ կը վերցւի: Բացի հացից՝ վերցնում են բիշ էլ պանիր, եփած միս, չամիչ, չորթան քաղցի ու ծարաւի դէմ: Ծխողները՝ ծխախոտ, լուցկի և ըն. իւրաքանչիւրը ունենում է դեղորայքի փոքրիկ տոպրակ, որի մէջ լինում են կարևորագոյն դեղերը. օրինակ արիւնը դադարեցնելու համար՝

եօտօֆօրմ, վիրակապ, թել, ասեղ. ապա և հիւանդութեան դէմ դեղեր՝ բինին, փորացաւի տեղ և մի քանի ուշեր տեղեր՝ ոտքերի պողոճկելու դէմ. իւրաքանչիւր հայդուկ ունենում է 2 զոյգ գուլպայ և 2 զոյգ ոտնաման. բացի այդ բոլորից՝ ունենում են և մի փոքրիկ կաշւէ տոպրակ, որի մէջ հրացանի կարևոր գործիքներն են տեղաւորում, վերջապէս իւղամանը: Շատ անգամ փոխադրում էին յեղափոխական հրատարակութիւններ: Հայդուկները հագնւած են լինում ըստ կարելոյն տաք և լաւ՝ թէ ցրտից և թէ անձրեկից պաշտպանելու համար:

Ճանապարհին հացը գործ են ածում շատ խնայողաբար. հացը ծանր է և բիշ էր պատահում, որ կուշտ ուտէինք: Շատ անգամ պաղ աղբրի մօտ նստած ախորժակներս բորբոքում էր և կուզէինք միանգամից ամբողջ տոպրակը սպառել, բայց կարողանում էինք զսպել մեզ և բաւականանում էինք մի չոր կտորով, որ ծամում էինք երկար: Հայդուկները գրեթէ միշտ գիշերով են ճամբորդում, իսկ ցորեկները հանգստանում են, իւրաքանչիւր գիշերւայ համար որոշ կայան ի նկատի ունին առաջուց, կամ լեռներում կամ գիւղերում: Պէտք է այնպիսի կայաններ ընտրել, որ փոքր ի շատե ապահով լինին և տղերքը որոշ ժամանակին տեղ հասնին դաշտերի մէջ չմնալու համար, լուսաբացից առաջ:

Մեր հայդուկային խմբերի կայանները գլխաւորապէս լեռներն էին, որ աւելի ապահով և վտահայի են: Երեկոյեան, մութը կոխելուց յետոյ, խուժքը ամենայն զգուշութեամբ դուրս է գալիս իր դարանից, վախճներից մէկը առաջ է ձգում մի երկու սրատես հայդուկների հետ, որոնք գիշերը մթութեան մէջ հեռուն կարող են նշմարել ճանապարհորդ, կարւաւն և առհասարակ որևէ բան, որ կարող է վտանգել խմբի գոյութիւնը: Այդ 3—4 հոգին գնում են խմբից բաւական առաջ, մօտաւորապէս 100 բալլ, այնքան, որ խուժքը կարողանայ նրանց տեսնել: Չրանք կոչուում են «յառաջապահներ» կամ լըրտեսներ, երկու դերերն էլ կատարում են: Դրանք իրենց առջև մարդ նկատելուն պէս՝ իսկոյն ճանապարհից դուրս են գալիս մի կողմը և խմբին ազդանշան անում: Խուժքն էլ ճամբուց դուրս է գալիս ու մի կողմ բաշուււմ, մինչև անցորդները անցնեն, յետոյ նորէն շարունակում է ուղին: Երկու, երեք արթուն ու աշխոյժ հայդուկներ էլ լինում են խմբի ետևը, որ յետ մնացածներին հասցնեն խմբին և առհասարակ հսկեն միշտ, որպէս զի ետևում մարդ չմնայ և ետևից պատահական թշնամու յարձակում չլինի:

Գիշերւայ ճամբորդութեան ժամանակ՝ ծխելն արգելւած է, որովհետև կարող են հեռւից կրակը նկատել: միայն՝ երբ նստում են մի բանի վայրկեան հանգրստանալու, ճանապարհից դուրս են գալիս, մի կողմը նստում կամ պառկում զգուշութեամբ, լուցկի վառում, ծխախոտը կպցնում 2 ձեռների մէջ պահելով: Ապա



ծխելու տեղից ելնելուց՝ պէտք է զգոյշ մնան, որ ոչինչ նշան չխողոնեն, փամփուշտ կամ այլ բան չձգեն գետին: Խմբապետը և յետնապահ մարտիկները համրում են հայդուկներին, նրանց թիւը ստուգելու համար և նոյն կարգով առաջ են գնում: Յոգնածներին անմիջապէս օգնութեան հասնում, նրանց բեռը թեթեւացնում են, կամ փամփուշտների ամաններից են վերցնում, կամ հացի տոպրակը, իսկ անհրաժեշտ դէպքում և ամբողջ բեռը: Վերջին ժամանակները ջրի ամաններ էլ էինք վերցնում, թիթեղից պատրաստած, վրան շապիկ հագցրած, որ թէ գիշերը չփայլի և թէ ցորեկը ջուրը զով մնայ. իւրաքանչիւր աման պարունակում է  $1 - 1\frac{1}{2}$  շիշ ջուր:

Առաւօտեան, դեռ լոյսը չբացւած, պէտք է անպայման հասնին իրենց դիրքերը. եթէ լեռ են բարձրանում, ընտրում են աւելի ամուր բարձրարոտ և բարձր տեղեր, որպէս զի կուրի ժամանակ կարողանան լաւ պաշտպանւել: Գլխաւորապէս ընտրում են գիւղերից, բնակութիւններից ու ջրերից հեռու տեղեր, ուր մարդիկ և ոգիւսները մուտք չեն գործում: Լոյսը բացւելուն պէս՝ ամենքն էլ հանգիստ և անշարժ պառկում են բարերի կամ թփերի տակ: Մի քանի պահապաններ են նշանակում, հսկելու համար, իսկ մնացածները քնում են, եթէ ցուրտը թոյլ է տալիս. յետոյ հերթով վեր են կենում հսկելու: Հսկիչ ընկերները զինւած են լինում հեռադիտակով: Գիտում են նրանք շրջակայքը, հեռու ճամբաները, գիւղերի մէջ կատարուող շարժումները և այլն: Եթէ տեսնում են, որ իրենց կողմը ոչխար է գալիս, որ հովիւները կարող են իրենց նկատել կամ եթէ նշամարում են մի անցորդ, կամ մերձակայքում որևէ արտասովոր շարժում, — այդ նշանակում է, որ հայդուկների ներկայութիւնը նկատուելի է և որ նրանք վտանգի են մասնւած: Այն ժամանակ պահապանները իմաց են տալիս խմբապետին, որը և անում է պէտք եղած կարգադրութիւնները: Բողոքին արժնացնում է, աւելի լաւ դիրքեր են գրաւում և սպասում են թշնամուն:

Սովորաբար, նախ բրդերն են գալիս, ապա և զինուորական ուժը (եթէ կան), ու միացած գրոհ են տալիս հայդուկների վրայ: Կուրը տեւում է մինչև երեկոյ, մերթաջող, մերթ անաջող, բայց առհասարակ հայդուկների կողմն է յաղթանակը, չնայած որ միշտ անհաւասար է լինում կուրը, թշնամու ուժը անհամեմատ մեծ է լինում:

Եթէ կուրը տեղի է ունենում առաւանից, խեղճ հայդուկները ամբողջ գիշերը ճանապարհ եկած, անքուն, ուժասպառ, կուրի օրն էլ ստիպւած են օտքի մնալ և էլի գիշերը պէտք է քայլեն, առանց հանգստանալու, դէպի աւելի ամուր դիրքեր, որովհետև միւս օրը թըշնամին սկսում է աւելի ևս կատաղութեամբ հետամուտ լինել, որպէս զի գտնէ հայդուկների հետքերը: Երբեմն պատահում է, որ խուճըն անցնում է անմարդաբնակ

լեռներով. այդ դէպքերում մեր ռազմիկները սովորաբար ազատ են լինում և նոյնիսկ կարողանում են ցորեկով էլ ճանապարհ գնալ:

Ահա այդպէս են «զինակիր» խմբերը Միւս ձևի խմբերը կուրում են «հայդուկային». նրանք տարբերւում են նրանով, որ աւելորդ հրացաններ չեն վերցնում հետերնին:

Սալմաստից ճանապարհ ընկնելուց՝ առջի գիշերը հասնք Գերիբի Սպիտակ լեռը, ուր անցուցինք ցորեկը: Երեկոյան շարունակեցինք ու հասանք Շէրօի ալբը: Երբորդ գիշերը՝ Ազգային ալբը: Զորորդ գիշերը հասնք Չուխալ-Գետակը: Այդ գիշերուայ մեր գիծը անցնում էր Ս. Բարթողիմէոս վանքի մօտով. գարուն էր, ջրերի առատ ժամանակաշրջանը, ամեն մի ձորակով ջրեր էին վազում: Բարթողիմէոս վանքի մօտ գտնւած բոլոր չիմանները (արօտ) ջրով էին ծածկւած. մենք էլ հէնց այդ չիմաններով էինք գնում և գրեթէ ամբողջ գիշեր՝ ջրերի միջով: Ոտներնիս բողբոջին փափկել էր և քարերից ծեծւելը Գարնան գիշերները կարճ լինելով՝ շուտ չէինք կարող մեր կայանները հասնիլ: Լուսանում էր, բայց դեռ բաւական ճանապարհ ունէինք. տեղ-տեղ պէտք էր լինում գետերով անցնիլ. դրա համար անհրաժեշտ էր, որ մի քանի տղերք հանւէին ու փոխադրէին ընկերներին հակառակ ափը. այդ գործողութիւնը կատարելու միջոցին՝ բաւական ժամանակ էր կորչում: Քայլում ենք ամենայն արագութեամբ, երբեմն վազվճագ, որպէս զի լուսաբացին դաշտումը չմնանք: Անցանք Չուխ գիւղի մօտից, դուրս եկանք ճամբայ դէպի աջ և սկսեցինք բարձրանալ դէպի լեռը. տարւայ այդ ժամանակը Չուխայ ձորի մէջ դեռ մեծ քանակութեամբ ձիւն էր մնում:

Բարձրանում ենք լեռը. մինչև լոյսի կատարելապէս բացւիլը մի փոքր ի շատ յարմարաւոր դիրք գտանք, մի լաւ աղբիւրի մօտ նստեցինք: Գիւղացիք սկսել էին իրենց առօրեայ պարապմունքը: Մենք էլ հանգստանում էինք, բայց օտքերնիս չէինք կարողանում գետին դնել: Հազիւ էինք պառկել, մէկ էլ տեսնենք՝ մի մարդ քրդական տարազով, մի չուան էլ ուսին ձգած, անցնում է մեր դիմացի լեռան լանջով: Նա ինքն էլ իսկոյն նկատում է մեզ. բայց որովհետև բաւական հեռու էր՝ չէր կարելի հասնել ու բռնել նրան, իսկ հրացան արձակել անյարմար էր, որովհետև Չուխ գիւղը մեր դիմացն էր, կարող էին լսել հրացանի ձայնը. ուստի մենք չտեսնել ձևացանք, կարծելով, որ կ'ենթադրէ թէ մենք էլ քրդեր ենք ու հանգիստ կ'երթայ: Բայց հէնց որ անհետացաւ՝ իսկոյն վազեց գիւղը: Էնց մտաւ գիւղը թէ չէ՝ իրարանցումն ընկաւ այնտեղ... Այդ նշան էր, որ պատրաստւում են մեր դէմ գալու: Քիչ յետոյ ձիււորներ ու հետևակներ գիւղից դուրս ելան և զանազան ուղղութիւններով դէպի մեզ էին գալիս: Մենք էլ իսկոյն մեր



ճանապարհը փոխեցինք, աւելի յարմար դիրքեր գրա-  
 ւեցինք և սպասում էինք: Յանկարծ մի խումբ բրդեր,  
 մի երկու շուներ հետեւին անած՝ դուրս եկան մեր  
 դիմացի սարի գլուխը: Մենք սկզբում չուզեցինք կուսել,  
 որովհետև շատ էինք ծանրաբեռնուած, կուսելը մեզ  
 ձեռնառ չէր. քրդերէն սասցինք նրանց. «մեզանից ձեռք  
 քաշեցէք, օգուտ չէք տեսնի, մենք ձեզ հետ գործ  
 չունինք, մենք ուղևորներ ենք»: Բայց տեսանք, որ բըր-  
 դերը չեն լսում ու աւելի լաւ դիրքեր են գրաւում,—  
 բարձրաձայն գոռացինք. «անիրաւունք, դէ՛ որ այդպէս է՝  
 բռնեցէք, գնդակը եկաւ», ու սկսանք բոլորը միանգամից  
 արձակել: Իսկոյն նրանք պահւեցին քարերի տակ ու  
 սկսեցին իրենք էլ մեզ վրայ կրակել:

Քրդերը մի քանի տեղ էին դիրք բռնել, նոյնպէս  
 արել էինք և մենք — Պախը շատ դանդաղ էր առաջ  
 գնում. մեզ վրայ յարձակողները—որոնց մէջ կային և  
 մի քանի զարթոններ, շէշխանաներով էին զինուած. միայն  
 մի քանի փամփուշտաւոր հրացաններ կային մէջերին:  
 Հիմա բանը նրանում է, որ անպիտանները մեզ անհաս-  
 գիտ են անում. ո՛չ կարող ենք չկուսել, որովհետև կա-  
 րող էին աւելի մօտենալ մեզ ու աւելի լաւ դիրքեր  
 գրաւել, և ո՛չ էլ կուսի նման էր մեր դիմագրութիւնը:  
 Ամբողջ օրը ընդհատ-ընդհատ կրակում էինք երկու  
 կողմից էլ: Մեզ մօտ էլ ջուր չկար. եղանակը տաքացել  
 էր ու արևի կիզիչ ճառագայթները այրում էին մեզ:  
 Մենք սպասում ենք, որ շուտով ահա Բաշ-Ալաշէից  
 զօրքերը օգնութեան կը գան և կուսը կը տաքանայ.  
 Բայց Բաշ-Ալաշ այնքան հեռու էր, որ օգնութիւնը ուշ  
 երեկոյեան էր հասել, իսկ մենք այդ ժամանակ արդէն  
 հեռացել էինք:

Այդ օրը մեր դիրքերը շատ վատ էին. թէ մեր  
 վրայ մի լաւ ուժ դուրս գար՝ կարող էինք շատ վնաս-  
 ւել: Մի երկու բիւրդ մասն ձորը, մի քարի ետև ու  
 սկսան մեզ վրայ կրակել: Իմ դրութիւնը շատ վատ էր.  
 մի բար չկար, որ յետևը պաշտպանէի նրանց գնդակ-  
 ներից. որ կողմ դառնում էի՝ բաց էի մնում,—ուղղակի  
 սարի լանջին, գետնի վրայ պառկած: Բարեբախտաբար,  
 դուրս եկաւ, որ քրդերի հրացանները շէշխանաներ են  
 ու ինձ չէին հասնում գնդակները: Զիմայ ես սկսեցի  
 գնդակներ նետել դրանց պահող քարի վրայ: Գնդակ-  
 ները շեշտակի զարնում էին քարին. քրդերը մնացել  
 էին շարած. ո՛չ կարող էին փախչել, ո՛չ էլ իրենք էին  
 կարող գնդակ հասցնել ինձ: Իսկ ես անհամբեր սպա-  
 սում էի, որ դուրս գալուն պէս խփեմ նրանք էլ այդ  
 լաւ հասկանալով, բանտարկուած մնացին քարի ետևը  
 մինչև երեկոյ:

Մեր դիրքերի արևմտեան կողմում Գ ու ա վ ա գիւղն  
 էր. մօտաւորապէս 3000 բայլ հեռու Գիւղացիք դուրս  
 են եկել խմբովին գիւղի կողմերը ու մեզ էին նայում:  
 Տղերքն ասում են ինձ.—«հապա՛ մէկ փորձիր բո նոր

ձևի հրացանը, տեսնենք մինչև նրանց կը հասնի» (մե-  
 նակ ես ունէի Մօսինի լաւ հրացան): Արձակեցի. մէկ  
 էլ տեսնենք՝ ամբողջ ժողովուրդը ջրուցան եղաւ. նշան  
 էր՝ որ գնդակը շատ մօտ էր ընկել: Հեռու տեղերը իմ  
 հրացանը լաւ գործ էր տեսնում և այդպէս հեռու  
 արձակած գնդակները խիստ դարձացնում ու սարսափ  
 էին ազդում քրդերի վրայ: Այդ կուսի մէջ՝ քրդերից  
 սպանւեց 2 հոգի:

Երեկոյեան դէմ քրդերը կամաց-կամաց քաշեցին,  
 մենք էլ մեր ուղին բռնեցինք: Գնալուց առաջ, նոր-ձևի  
 փամփուշտներից մէկը ձգել էինք մեր դիրքում. միւս  
 օրը գտել էին քրդերը և մի առանձին, առասպելական  
 ձևով են խօսել այդ փամփուշտի մասին. երբէք չէին  
 տեսած այդ տեսակի փամփուշտ:

Ամբողջ գիշերը բայլում էինք, անքնութիւնը շատ էր  
 նեղում մեզ. ուր որ նստում էինք հանգստանալու՝ իս-  
 կոյն տղոց բունն էր տանում, որովհետև երկու գիշեր  
 ու ցորեկ էր, որ տնընդհատ շարժման մէջ էինք: Երբ  
 հասանք Խոշապ գետի ափը, տղաներից մի երկուսը  
 հանւեցին փորձելու համար, թէ կարող ենք արդեօք  
 անցնել: Բայց ջուրը գլորում ու բշում էր նրանց. ոչ մի  
 հնարաւորութիւն չկար անցնելու: Ստիպուած եղանք մի  
 քիչ էլ յետ դառնալ ու ճանապարհի կողքին մի ապա-  
 հով ձորի մէջ մտնել: Շարէշտը պառկեցինք այդտեղ:  
 Այդ օրը մեր ետևից ձիաւորներ են ընկնում մեզ գըտ-  
 նելու, բայց ոչ որի մաքով չէ անցնում, թէ մենք մի  
 այդպիսի տեղ ապաստան կը գաննենք: Երեկոյեան, երբ  
 երթեկութիւնը դադարեց, մութը ընկնելուց յետոյ,  
 ձորից դուրս եկանք ու նորէն գիմեցինք դէպի Խոշապ:  
 Վալադները գիտէին գետի ծանծաղուտ ու լայն տեղերը,  
 ուսկից կարելի էր անցնել: Գացինք այն կողմը, բոլորս  
 հանւեցինք, իրար ձեռքից բռնեցինք ու զոյգ-զոյգ, երեք-  
 երեք անցանք միւս ափը, կրկին հագնեցինք ու ճանա-  
 պարհ ընկանք: Գնում ենք Ք ու էլ գիւղի մօտով դէպի  
 Բ ա շ է թ լեռը: Գիւղի մօտով անցնելիս, կարողացանք  
 վալադներից մէկին ներս մտցնել, հաց գնելու համար:  
 Առաւօտեան բարձրանում էինք հսկայ Բ ա շ է թ ի  
 լանջերով դէպի վեր: Լեռնաշղթայի մեծ մասը դեռ ևս  
 ծածկուած էր ձիւնով. լուսաբացին՝ գաւառում էինք բար-  
 ձունքներից մէկի վրայ: Հրաշալի է դիտել այդտեղից  
 արևի ծագումը: Լաւ դիրքեր պատրաստեցինք ու նստե-  
 ցինք: Այժմս բոլորովին ապահով էինք և ոչ մի ուժից  
 չէինք վախենում, որովհետև դիրքերնիս այնքան լաւ էր,  
 որ կարող էինք ջարդել ինչ ուժ էլ որ գար: Քուէլից  
 մեզ համար մի տոպրակով հաց բերին երկու գիւղացի  
 ու դարձան. նրանք մեզ պատմեցին, թէ ինչպէս երէկ  
 ձիաւորները ընկել էին լեռներն ու դաշտերը, մեզ էին  
 ման գալիս: Այդ ձիաւորներին մենք ևս տեսանք մեր  
 դիտակներով. այս ու այն կողմէն էին սլանում, մեր հետքը  
 գտնելու որևէ նշանով. բայց ո՛ւր... Երեկոյեան սարից



իջանք և ուղղեցինք շուրթիկայ Լազրի կոչ-  
 ւած սեղրը: Այսարմենի ազաստարան էր, այդ ժամա-  
 նակ ազատ: Տղաներից երկուսին զրկեցինք ձիւն բերելու  
 ցերեկայ համար (հող ջուր, չկար) ու մենք էլ նստե-  
 ցինք հանգստանալու: Այդ օրն ևս լուսնացիներ, մեզ  
 անհասգատացնող չ'եղաւ. երեկոյեան գեռ մութ չ'եղած՝  
 դուրս եկանք մեր քարանձաւներից դաշտը և հանգիստ  
 առաջ էինք գնում:

Անցնում էինք Լնդաստան կոչուած հայաբնակ գիւղի  
 մօտով: Մեր վախաղը սխալմամբ տարաւ հէնց գիւղի  
 մօտը, գիշերը գեռ շատ ուշ չէր: Մի երկու գիւղացի  
 այդտեղ դռնէնք էին արածեցնում. մէկը մեզ նկատե-  
 լով կարծել էր թէ աւազակներ ենք՝ սկսեց ընկերոջ  
 կանչել. «Ահօ՛, փախի՛ր, Ահօ՛, փախի՛ր»: Հէնց որ տե-  
 սանք նրանց փախուտը, մենք էլ փախանք: Մի երկու  
 րոպէից՝ հաւարն ընկաւ գիւղը և կտրիճ գիւղացիք  
 հրացաններով անմիջապէս դուրս եկան և սկսան մեր  
 ետեւից կրակել: Մենք էլ ընկել ենք ջրած ցորենի ար-  
 տերը. մինչև ծնկներս խրած ցեխի մէջ փախում ենք,  
 բայց բնաւ հրացան չենք արձակում: Կրանք բաւական  
 կրակեցին—Մինչև ետոջապ գետը այդպէս վազեցինք ու  
 իրար ձեռք բռնած, սոռնց հանւելու թափեցինք ջուրը,  
 անցանք միւս ափը: Հնդաստանցիներից փախանք, վախե-  
 նալով մի գուցէ կառավարական պաշտօնեայ լինէր այդ-  
 տեղ ու իմանար մեր ինչ լինելը: Կոր-գեղի մօտով  
 բարձրացանք Ատրաքայ լեռը: Գեռ չբարձրացած, երկու  
 վախճաններ զինաթափ անելով, ուղարկեցինք բաղար,  
 մերայնոց յայտնելու (Պետօին), որ տեղ պատրաստեն և  
 գիշերեալ համար վախճանք ուղարկեն: Այս օր էր, որ  
 քաղաքից մեր մի քանի ընկերներն եկան ու մեզ մօտ  
 երկու վախճ թողնելով գնացին. մեր աւելորդ ատրճա-  
 նակներից էլ տարան: Երեկոյեան ահագին զառիվայրով  
 իջնում էինք ցած, դէպի դաշտը: Այգեստանի մօտ մի  
 այգիում նստած սպասում էինք, իսկ մի քանիսը գնացել  
 էին տեղ պատրաստելու: Եւ ահա նրանք մօտեցան մեզ  
 ու կամացուկ տարան մտքին մի տուն: Այդտեղ էր  
 և Պետօն: Ուրախութեան չափ չկար: Բոլորի հետ գրկա-  
 խառնում ու համբուրում էինք: Սրտաուռ էր կանանց  
 դիմաւորումը, նրանց արտասուքն ու ուրախութեան ցոյ-  
 ցերը: Հաց բերին ու կուշտ մը կերանք: Երկար, ան-  
 վերջ խօսակցութիւն, կուրի մասին տեղեկութիւններ և յն-  
 Մեր կուրի մասին նրանք արդէն լսել էին և ի միջի  
 այլոց պատմեցին, որ կառավարութիւնը հետեւեալ օրն  
 իսկ զօրք էր ուղարկել մեր գալիք ճանապարհը և կործան  
 (պահականոց) դրել Կոր-գեղի կեղծութիւնը: Մենք հէնց  
 այդ կործանից հետո չէինք անցել: Միւս օրն, երեկոյեան  
 և առաւօտեան ժամու ժամանակ (տեղացիք ասում են  
 ժամխոր կիսի) խմբի տղայոց բաժանեցին մի քանի  
 մասերի և տեղաւորեցին զանազան թաղերում, աների  
 մէջ: Վանայ մեր կազմակերպութիւնը բաւական ուժեղ

էր: Աւելորդ զէնքերը տեղաւորեցին մի քանի տներում  
 յատուկ թագստոցների մէջ:

Բաւական ժամանակ մնալով Այգեստանի մէջ, ձանձ-  
 րացել էինք. մինչդեռ ահագին գործ կար: Մինչ այն՝  
 Գաշակցութիւնը ոչ մի ընկեր չէր շրկել շրջակայ գա-  
 ւառները կազմակերպելու: Արմենականները մի քանիսին  
 շրկել էին առաջները, բայց միայն ամենամօտ գաւառը,  
 ինչպէս Լա յոց-Չօր, այն էլ շատ քիչ ու անկանոն  
 կերպով: Գաւառացիք ընդհանրապէս անուշագիր էին  
 թողնւած:

Գաշակցութիւնը որոշեց մի թեթեւ քարոզական  
 խումբ մտցնել մի քանի գաւառներ՝ կազմակերպութիւն-  
 ներ ստեղծելու, կօմիտէներ հիմնելու, գաւառաց ձայնի  
 իրաւունք տալու կենտրոնական կօմիտէի մէջ և ըստ  
 կարելոյն զէնք մտցնելու համար: Այս ձեռնարկու-  
 թեանը գլխաւորապէս համաձայն ու պաշտպան էինք  
 կովկասցիներս և մեզ հետ գտնուող գաւառացի ուժերը,  
 նաև Վազգէնը, որ իր խմբերով այդ ժամանակ միա-  
 ցել էր մեզ (Վազգէնը արմենական էր եղել): Իսկ  
 Վանի տեղական կօմիտէն, իրեն պարագլուխ ունենալով  
 Աբլորը — Ոսկանք, միանգամայն հակառակ էր յիշ-  
 կարիք կայ գաւառաց ձայն տալ, կազմակերպել զէնք  
 հայթայթել, նրանք չեն կարող զէնքերն իրենց մօտ  
 պահել, գեռ յեղափոխութեան մասին գաղափար չունին,  
 և մենք հագիւ կարողանանք մեզ զինել...

Քաղաքացիք բնաւ չէին ուզում, որ մենք գաւառներն  
 երթայինք, նրանց հետ յարաբերութեան մտնէինք: Կրանք  
 կուզէին, որ բացի իրենցից, ուրիշ մարդկանց չձանա-  
 չէինք և ինչ որ անելու լինէինք՝ իրենց միջոցով միայն  
 անէինք: Այդպիսով մեր մէջ երկու հակառակ տարբեր  
 առաջ եկան. մի կողմը մենք էինք, որ պնդում էինք  
 գաւառներն անցնելու անհրաժեշտութեան վրայ, միւս  
 կողմը տեղական կօմիտէն՝ պարագլուխ ունենալով Աբ-  
 լորը: Զէնքերը գտնւում էին տեղական կօմիտէի տրա-  
 մադրութեան տակ, ի բաց աւեալ 6—7 հրացանից, որ  
 գտնւում էին մեր ձեռքում: Կօմիտէն չէր տալիս զէն-  
 քերը: Նա երկար ժամանակ քաջքը մեզ և չէր ու-  
 զում մեր տարած զէնքերի գէթ մի մասը մեզ յանձնել  
 իրենց փամփուշտներով: Երբ մենք վճռեցինք մեր ձեռքին  
 եղած զէնքերով դուրս գալ գաւառները և մեր ձեռ-  
 նարկած գործը առաջ տանել, Աբլորը և իւրայինները  
 նկատելով, որ զրկւում են մի խոշոր ուժից, խոստացան  
 ի վերջոյ պէտք եղած զէնքերն ու պարագաները մեզ  
 յանձնել: Բայց այդ քաջքուկները բաւական յետա-  
 ձգեցին մեր գործը: Գաւառները դուրս գալու համար՝  
 մեզ պէտք է օգնէին գաւառացիները, որոնցից  
 մի քանիսը գտնւում էին մեր մէջ և խոստանում էին  
 բոլոր կարևոր մարդկանց հետ մեզ ծանօթացնել: Կրանք  
 մէջ էր Շահրուբայ Ռէսը, ինչպէս անւանում  
 էին տեղացիք: Նա տարիքոտ մարդ էր և փախստական



եղած: Երբ ի վերջոյ բարեհաճեցին զէնքերը մեզ յանձնել, շտապով գործի սկսանք: Այդ ժամանակ ընդհանուր ներման իրատէն էր հրատարակել, որով բոլոր բանտարկեալները պէտք է ազատուէին: Ներման արժանացան և վանի բանտարկեալները, որոնց թուում գանուում էին մեր ընկերներից մի քանիսը: Հէնց այդ օրը նրանք դուրս եկան, նոյն օրն էլ մենք վճռել էինք ելնել քաղաքից: Բանտարկեալների ազատման լուրն առնելուն պէս՝ տեղական կոմիտէն կամեցաւ մեզ սպասեցնել տալ, որպէս զի ազատաւաններին տեսնէինք և նրանց կարծիքն էլ իմանայինք: Կոմիտէի նպատակն էր այդպիսով մի քանի օր էլ ուշացնել և եթէ կարելի է մի կերպ յետ պահել: Իսկ մենք վճռել էինք հաստատապէս այդ օրը ելնել, և այդպէս էլ արինք:

Օգոստոսի վերջերին, 12 հոգուց բաղկացած քարոզական-կազմակերպական խումբը դուրս եկաւ քաղաքից և ճանապարհուց դէպի Հայոց-Չոր: Առաջին գիշերը իջնանցիկը զուտ հայաբնակ Բերդակ գիւղում: Ժողովուրդը շատ լաւ ընդունեց մեզ: Մի ցորեկ մնացինք այդտեղ և պէտք եղած կարգադրութիւնները սկսեցինք: Խումբ կազմեցինք ու անցանք Կէմ գիւղը: Հայոց Չորի ամենաբազմամարդ գիւղն է, մօտ 200 տուն, զուտ հայաբնակ: Ժողովուրդը այդտեղ այնպէս կտրիճ չէ, ինչպէս Բերդակի մէջ: Այդտեղ ևս խումբ կազմելուց յետոյ, անցանք Քէրծ գիւղը, որ գտնուում է Արտոսի ստորոտում: Նախ քան այդ՝ մի ցորեկ մնացինք Խուսպ գիւղում: Մի քանի տեղերից մարդիկ կանչեցով (Հրիճ, Կղզի, Ղզըլդաշ և այլ գիւղերից) բացատրեցինք գործի պահանջը, կազմակերպութեան ձևը, մեր ուղղութիւնը և մեր ո՛վ լինելը: Գիւղացիք ուրախութեամբ ընդունեցին մեր առաջարկները և հեռացան: Այդ կազմակերպական ժամանակ բաւական օգնում էր Ռէսը, երբ հաւաքում էին մարդկանց ու խօսում նրանց: Ռէսն էլ իր կողմից աւելացնում էր. «յօյընէք, յօգընէք, լծէք ենի» (օգնեցէք, օգնեցէք, գործի մէջ լծեցեք):

Այսպէս Հայոց Չորի մի քանի գիւղերը կազմակերպելուց յետոյ, Արտոսեան լեռներով անցանք Շատախի կողմերը: Արտոսեան լեռների համար իբրև վախճ վերցրել էինք Քէրծից Կարապետին (հանգուցեալ): Յօրեկը մնալով Արտոսի գագաթին՝ զրկեցինք նրան Ֆէսանդաշտի Առեղ գիւղը, տեղ պատրաստելու: Ֆէսանդաշտը, փուլած Արտոսի հարաւային ստորոտում, պարունակում է իր մէջ չորս հայաբնակ գիւղեր, որոնցից մէկը բրդախառն Այդ ժամանակ քոչարները դեռ չէին հեռացել այդ կողմերից: Վրասնաբնակ բրդեր են, որ գալիս են Միջագետքից ահագին բազմութեամբ, իրենց տասնեակ հազար ոչխարներով, ջորիների և ձիերի երամներով, երկու ամիս մնում են Շատախի, Մոքսի լեռներում, ուր իրենք հողեր ունին. յետոյ նորէն վերադառնում են իրենց տեղերը: Քոչարները նոյնպէս համիգիւններ են. դրանց ցեղերից

յայտնի են Միրանցիք և Կուտերցիք. այդ ժամանակ Միրանցոց աղան էր Մստօն) Մուստաֆայ փաշայ, իսկ Կուտերցոց Աղայե-Սոր (կարմիր-աղայ): Երկու ցեղերից աւելի ազնիւ ու աշխատաւոր են Միրանցիք, իսկ Կուտերցիք աւելի աւազակաբարոյ: Միրանցոց Մստօն բաւական ազատամիտ մարդ էր և ոչ այնքան մոլեռանդ, ինչպէս միւս քրդերը: Երբէք նամազ չէր անում և խօսքը գալուց՝ չէլիսին հայհոյում էր: Մստօն բացի դրանից՝ և հայասէր էր. նա միւս քրդերին ատելով ատում էր. երբ քրդերի մասին խօսք էր բացում՝ նա ասում էր. «ո՛ր են այդ հայ զաջաղները, ինչո՞ւ չեն գալիս այս անպիտաններին մի լաւ ջարդում»:

Երբ քոչարները գալիս են Շատախի և Մոքսի կողմերը եայլադ, նրանք իրենց վրաները խփում են լեռների կատարներին, ձիւների մօտ. նրանց ոչխարները ծածկում են լեռ ու ձոր, ջորիները բաց են թողնում լեռների մէջ ահագին խմբերով և առանց որևէ հսկողութեան: Միայն վերադառնալու օրը առաջներն են անում ու բռնում: Ձիերը՝ արաբական նժոյգներ են. հծծնում են կամ մերկ կամ շատ թեթեւ թամբ են դնում, որ յատուկ է քոչարներին. կոխ պատահած ժամանակ հծծնում են ձիերը ու սուսերամերկ մի ցեղը յարձակում է միւսի վրայ. այդպէս են կուռում: Կեծ մասամբ զինւած են փամփուշտաւոր հրացաններով: Դրանց զգեստը կտաւից է, մի երկար շապիկ, որը ծունկերից ցած է իջնում, կտակ վարտիկ, մի թեթեւ բոլոր մետաքսէ փուշիով (մետաքսէ մեծ թաշկինակ), համալեւա թէ բոբիկ են լինում, նոյնիսկ նրանց աղաները: Բաւական հարուստ համայնք են: Պատմում են, որ Միրանցիք երբեմն հայեր են եղել և մինչև այժմ էլ մի քանի ձեւականութիւններ պահում են: Քոչարները շատ թեթեւ և արագավազ են և լաւ նպատակին բար նետող: Ասում էին, որ միայն Մստօն 10,000 ոչխար ունի, իսկ ոսկիներին հաշիւ չկայ: Մստօն Շատախի մէջ մի գիւղ ունի Արմշուտ անունով: Ամեն անգամ գալուց՝ գիւղի ուեսին յարմար նւերներ պէտք է բերի, գոնէ մի լաւ արաբական նժոյգ: Մստօն Շատախում մի մօտ ծանօթ հայ ունէր, կարծեմ Արրիկ անունով, որին անչափ սիրում էր և ամեն անգամ նւերներ էր բերում:

Երեկոյեան մութը ընկնելուն՝ Արտոսի ահագին բարձրութիւնից սկսանք իջնել դէպի Ֆէսանդաշտ: Արտոսը քարքարոտ ու բաւական բարձր լեռ է. 3 ժամաւայ մէջ հազիւ կարողացանք իջնել: Գիշերը առեղ գիւղից մարդիկ եկան՝ մեզ առաջնորդելու դէպի գիւղը: Մեզ տարան մացրին մի յարդանոց, ուր մնացինք այդ գիշերւայ մի մասը և միւս ցերեկը: Յարդանոցի տերը, Ռէսի ամենամօտ մարդկանցից էր. Ռէսը իրեն շատ ազատ էր զգում ու միշտ իր սովորական բարոզն էր սկսում. «յօգընէք,



յօգընէ՞ք ինձ: Իսկ երբ դուրս էինք գալիս լեռները՝ Ռէսը շատ էր յօգնում. ամբիրքտ էր. և յոգնելու ժամանակ ասում էր. «Իմ խմէր էսա մթուս հօթ գիրք անտարան վալլահ չըմ կանայ ինչխօյ չըմ կանայ քելի»... Ա.ելի նեզն ընկած ժամանակ, երբ շատ էր յօգնած լինում, ասում էր. «Ինչ գօրծ ունիս էսա տեղ, էս ասրերումը թօփ, թօփ, թօփ, էս բարէն էն քարը, մկայ էրթի նափ բանա, իմ ջուր իմ առաջ, իմ խաց իմ առաջ»:

Ռէսը մի ասորբնուց արդ էր Մի անգամ աւագակ Շացիքը գրու ասունը շրջապատել էր, որ սպանի Ռէսը, եղբորը՝ Տեա, ամբողջ գիշերը գիծադրել էր, մի երկուսին վիրաւորել և էլի ձնուք չէր ընկել: Այդ դէպքից յետոյ «Պարթօ» էր ընկել: Ընդամենը ունէր, որ մի տեղ նստած, թշաւս կենաց էր վարում: Գաղափարի համար էր այդտեղ նստել այդ մարդը— յայտնի չէ. նրան սոյանցին զննոր և արքնեակունների շարդի միջոցին (1896-ի տարը):

Ասիցում խուճա կազմելուց յետոյ անցանք Սիվակուն և յ մէջին Անագաից ոչ այնքան հեռու, գտնուում է Սիվակնի. հայտնակ արևը, Շատախի ձորի մէջ, Շատախի-ջուր կոչած գետի ափին: Ժողովուրդը քաջ է, քիչ-շատ սննդ ունեցողներ էլ կան: Լուր տւինք, Սիվակունից և կան մեզ մօտ, հաց, սեր, պանիր բերին, հիւրասիրեցին: Այդտեղից մարդ զրկեցինք Թաղ (Շատախի գիւղաբազարը, Սիվակնից 4 ժամի վրայ, գօրք ու գայմագամ է նստում), տեղ պատրաստելու: Սիվակնցիք միւս օր ոչխար մորթեցին մեզ համար: Սիվակնցիներից մի երկու հօգի մասնակցել էին գարնան զինակիր խմբին. այդպիսով մեզ արդէն ծանօթ էին:

Անացինք գիշերը Սիվակնի անտառում, ուր լաւ ցուրտ կերանք, բայց և այնպէս գոհ էինք մեր վիճակից: Սիվակնցիք այդ ժամանակ գտնուում էին եայլաղ Ջրերը յստակ, օգը հրաշալի, գիւղացիք՝ հիւրընկալ...

Միւս օրը թաղեցի երկու վալաղները պատրաստ էին և մենք երեկոյեան ճանապարհ ընկանք դէպի Թաղ: Ճանապարհնիս ձորի միջով էր, մինչև Թաղ. Թաղեցիք մեզ խորհուրդ էին տւել չմտնել այդ գիւղը, համարելով այն անապահոյ: Մեզ պէտք է տեղ տային Թաղի մօտ գտնող լեռան մի այրում, որ բաւական յարմարութիւններ ունէր: Այրի ճանապարհը շատ վտանգաւոր էր, բաւական էր ոտքդ սայլաբէր՝ ուղիղ ձորը կը նետուէր: Այրը երեք յարկանի էր. մենք տեղաւորեցինք երրորդ յարկի մէջ: Ցերեկը անցկացրինք այրի մէջ, իսկ երեկոյեան Պեռն և Շէրօն գնացին Թաղ ու պէտք եղածը խօսեցին կարևոր մարդկանց հետ. կազմակերպեցին ու երկու օրից դարձան մեզ մօտ: Թաղեցիք իրենց անցեալով յայտնի էին. յեղափոխական ոգի կար նրանց մէջ: Թաղը ունեցել է յայտնի մարդիկ, ժողովուրդն էլ բաւականաչափ զինած է: Աղքատ են, պարապում են շալէ

գործւածքներով, արհեստներով ու առևտրով: Թաղը բաղկացած է մօտ 350—400 տնից, գտնուում է Տիգրիսի ափին: Մի քանի օր մնալով, պէտք է անցնէինք ուրիշ կողմ: Թաղից մեզ լուր բերին, որ կոռավարութիւնը արդէն իմացել է մեր այնտեղ գտնւելու մասին. պէտք էր հեռանալ: այդ նոյն ցորեկն էլ տեսանք, որ մի խուճա զինուորներ ճանապարհորդական պատրաստութիւններ տեսած, մեկնեցին Տիգրիսի ընթացքի հակառակ կողմով. մենք ևս կասկածեցինք, որ կարող է ճիշտ լինել, բայց յետոյ դուրս եկաւ, որ սխալ է եղել մեր և գիւղացոց ենթադրութիւնը:

Երեկոյեան իջանք ձորը (երրորդ օրն էր), որպէս զի մեկնէինք: Թաղեցիք ձորի մէջ մեզ համար ընթրիք էին պատրաստել ու ճամբու պաշար: Ընթրեցինք, առանք պաշարը և ուղղւեցինք դէպի Սակա-Մէրիս: Ճանապարհը անցնուր էր Տիգրիսի ափով: Գետի աջ ափից ծուկեցինք դէպի մի ձոր, քիչ առաջ գնացինք ու մտանք Սակայ-Մէրիս: Մի խիտ անտառ, կատարեալ արջի բուն:

Սակա-Մէրու մօտ գտնուում է Սակ գիւղը, որի անունով էլ անտառն է կոչուում: Հայդուկներից մէկը Սակ գիւղացի էր և անտառի բոլոր խորշերին ծանօթ: Սակում մենք շատ ազատ էինք զգում մեզ, որովհետև... միայն արջերը կարող էին իմանալ մեր այդ տեղ լինելու մասին: Սակեցի հայդուկը մտաւ գիւղը գիշերով, իր ընկերներից մէկին յայանեց և միւս օրը գիւղացի երիտասարդներից երկու հօգի եկան դէպի մեզ, ճաշ բերելով:

Շէրօն և մի ուրիշը այդտեղից գնացին Կաճէտ, իրենց գիւղը, թէ իրենց ազգականներին տեսնելու և թէ ոչխար բերելու: Միւս օրը երկուսն էլ դարձան, հեռանալով բերելով պաշարի հետ՝ և մի նոր ընկեր: Շէրօն նկարագրեց իր ընկերով քաջութիւնը և աւելացրեց, որ գիւղում մի դաւաճան կայ, պէտք է սպանել: Բայց այդ տղան ատրճանակ չուներ. ընկերների հետ խորհրդակցելով, ատրճանակս նւիրեցի նրան՝ այդ գործը գլուխ բերելու համար:

Անտառի մէջ պառկելու տեղեր էինք պատրաստում, փափուկ հող, վրան չոր տերեւներ փուած: Մի օր բերդերը (Սակը բրդախառն գիւղ է) գալիս են այդտեղը տեսնում, մի հատ էլ հին գուլպայ են գտնում, որ նրանց կասկածել է տալիս. իրարու մէջ ասում են. «Պարտաւոր կայ անտառում, թէ չէ՞ ո՞վ պէտք է պատրաստէր այս անկողինները»: Միւս օրը ստիպւած ենք տեղերնիս փոխել, անտառի մի ուրիշ կողմն անցնել: Այդտեղ էլ մի աղբիւր կար, որ Պոտակի էր կոչուում: Չուրը շատ քիչ լինելուն, պուտ-պուտ էր գալիս: Այդ աղբիւրը մենք էինք սարքել: Եւ ահա դարձեալ երկու բիրդ գալիս են խոտ ժողովելու մեր նստած տեղից ոչ հեռու: Նրանց տեսնելուն պէ՝ անշարժ մնացինք, Եկան աղբիւրից ջուր խմեցին ու զարմացան, տեսնելով աղբիւրը սարքած չինւած: «Ովքե՞ր կարող են լինել»... Ընդամենը մի երկու օր առաջ, նրանք տեսել էին աղբիւրը հին դրութեան



մէջ եւ դարձեալ կասկածներ: Եւ եզրակացրին, որ դաջաղ կայ: Սկսան բարձրաձայն խօսել ու սպառնար: Մենք բոլորը լսում էինք մեր թարստից: Սկսեցին խօսել գիզել: Շէրօն և մի ուրիշը մտեցան ծառերի ետևից զգուշութեամբ, տեսնելու համար, թէ կարո՞ղ են ճանաչել նրանց: Տերևները խշխշացին տղայոց ոտքերի տակ, և բրդերը նկատեցին նրանց: Խուրձերը վար նետեցին ու փախան անտառի միջով: Մենք էլ շտապեցինք մեր գլխի ճարը տեսնել: Բարձր բարոտ տեղեր կային, շտապեցինք գրուել: Երկար մնացինք սպասողական դիրքի մէջ: Բարեբախտաբար ոչ որ չ'երևաց: Քրդերը գիւղում մի քիչ հարա՛յ-հրոց ձգեցին ու լռեցին:

Մեր թարստի մօտ յանկարծ երևան եկաւ մի մանուկ-Տոփիւ, որ նախիր էր արածեցնում: Հիմա էլ պէտք էր այդ մանուկից թագնելու: Անցել էինք նոսր թփերի ետևը, ամեն մէկս մի-մի ձիւղ բռնած՝ ծածկում էինք մեր դէմքերը չմտանելու համար... Երեկոյեան նորից իջանք անտառը: Սակեցի հայդուկին ուղարկեցինք գիւղ տեղեկութիւն բերելու համար: Դա մտնում է գիւղը, տեսնում իր ընկերների հետ ու պատմում եղելութիւնը: Ընկերները յայտնում են, որ եթէ բրդերը կուի չ'եկան հայդուկների հետ—պատճառը Սլօի միջամտութիւնն էր: Հայդուկը սկզբներում, երբ գեռ պարզ անմոզ շինական էր, կասկածի տակ ընկնելով, փախուսական էր դարձել և պահել էր իրենց անտառի մէջ: Իրեն օգնելիս է եղել գիւղի բրդերից մէկը, Սյօ անունով: Սլօն, մի ծեր բիրդ, գէպի հայերը շատ լաւ էր վերաբերում: Մի անգամ Շատախի կառավարութիւնը բռնում է այդ Սլօին և սաստելով մեղադրում՝ թէ նա հայ զաջաղներին պահպանում է, հաց է տալիս և այլն: Սլօն չի ուրանում, համարձակ խօստովանում է և ասում, որ չէի կարող չ'օգնել, բանի որ իրենց գիւղը անտառի մօտ է, ամեն տեսակ մարդիկ գալիս են անտառը, անօթի մնում ու դիմում իրեն, ինքն էլ հաց ունի, տալիս է: Ինձ համար, ասում է, միևնոյն է, հա՞յ է ուղղորդ, թէ քիւրդ կամ տաճիկ... կառավարութիւնը մնում է ապշած, բաց է թողնում ու սպառնում է, որ այսուհետև այդպիսի բաներ չ'անի: Սակեցի հայդուկը այդ գիշերը տեսնում է նախածանօթ բիրդ Սլօի հետ և պատմում ցորեկւայ գէպի մասին: Սլօն կանչում է երկու բրդերին խրատում ու յայտնում մեր ով լինելը և պատելում է ոչ որի չ'ասելը...

(Կր Եսրուեակի)

ԿՈՒԿՈՒՆԵԱՆ ԽՍՐԻ ԴԱՏԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ

(Եսրուեակ, Երուսաղիմ № 6)

1890 թ. սեպտեմբեր 23—24-ի գիշերը, 100 հոգուց բաղկացած խումբը, զինւած արագածիգ հրացաններով, դիմեց գէպի թիւրքական սահմանագլուխը: Գլխաւոր գործող անձերն էին՝ Սարգիս Կուկունեան, Սարգար Աւետիսեան և զարաբաղցի Արարհամբը: Խումբը գնում էր վրէժխնդիր լի-

նելու թիւրքերից ու բրդերից: Խառ գիւղի մէջ սեպտեմբեր 26-ին տեղի ունեցած անցքից առաջ կատարել էին խմբի ձեռքով սպանութիւններ, աւազակութիւններ և դիմադրութիւն ժամանակը, տեղը և պարագաները, նախնական կտտութեան ուրիշ տեսիլների հետ միասին բերում են այն համոզումին, որ նրանք կատարել են Կուկունեան խմբի ձեռքով գէպի սահմանագլուխ դիմելիս և այնտեղից գէպի Խառ գիւղը նահանջելիս: Սեպտեմբեր 24-ի կէսօրին հայկական խումբը, որի մէջ կային մօտ 15 ձիւար, երևան եկաւ թիւրքական սահմանագլուխ վրայ, որ անցնում է Ալաշկերտի լեռնաշղթայով: Թիւրք վիսնների սակում, խումբը անցաւ սահմանը, յարձակեց տաճիկական Ախարկի գիւղի վրայ, որ գտնուում է Բօզ-Գաղի ստորոտին, վիրաւորեց ճանապարհին թիւրքական Ալշին-Օլլի բնակիչ Աւոս Հուսէին-օղլին և նոյն գիւղի բնակիչ, 70-ամեայ Հասս Կամս-օղլին, որին յետոյ բերելով առօտական հողը, սպանեցին: Երբ հաւաքուցեցին երկու յիշեալ թիւրք գիւղերի բնակիչները և երբ նկատեց զրա հետ միասին, որ Չիչալլի կիճճով բարձրանում են սահմանագլուխ զինւորները, հայոց խումբը յետ նահանջեց գէպի Բօզ-Գաղ: Բռնեց թիւրքաց հողի վրայ գտնուող լեռան մի բարբարոտ եզր, բարբրից պատնէշ շինեց և սկսեց հրացաններով զայլեր տալ գէպի տաճիկական Ախարկի գիւղը և միաժամանակ գէպի սահմանագլուխ զինւորները: Ախարկի և Ալշին-Օլլի բրդերը անցան սահման և նկատելով Չիչալլի կիճճի ձիւարների, կարծելով, թէ հէնց նրանք էին Ախարկի վրայ յարձակուողը, սկսեցին զբնդակներ արձակել գէպի նրանց, սակայն շուտով համոզուելով, որ դրանք առաւ սահմանագլուխներն են, մտեցան ու պատմեցին պատահարը: Բրդերի ցուցմունքով, առաւ սահմանագլուխ զինւորները ուղղեցին գէպի Բօզ-Գաղ: Խումբը կրակեց նրանց ուղղութեամբ, միաժամանակ շարունակելով զայլեր տալ գէպի Ախարկի գիւղը:

Մտածելով, թէ զույգ խումբը թիւրքիմայութեամբ է կրակում սահմանագլուխ զինւորների վրայ և կամենալով նախազգուշացնել, սպայ Տրուխաշովը իջաւ ձիուց և թողնելով իր ընկերներին ապահով տեղ, ինքը մնակ զմաց շաւիղով գէպի Բօզ-Գաղի գաղաթը: Հանեց ծերմակ զլլաբիւր և սկսեց թափահարել, առաջ բայլելով Բայց հէնց որ նա արեց մի բանի բայլ շաւիղով, Բօզ-Գաղի կատարի պատնէշի ետքից որոտացին հրացանները և մի բանի գնդակ այնքան մօտ անցան, որ նրա կեանքը վտանգի մէջ էր: Համոզուելով, որ խումբը յանցաւոր նպատակով էր գիրք բռնել լեռան կատարին, սպան զրկեց մի բանի շրջիկներ մօտակայ սահմանագլուխ զօրքի կայանները, օգնութիւն գողելու: Ինքը սկսեց հետևել խմբի գործողութիւններին: Միևնոյն ժամանակ վերադիմեալ թիւրք գիւղերի բնակիչները անդիկացրին եղած յարձակման մասին Թօօփր Կ-Գ ալ է ի թիւրքական իշխանութիւններին և անմիջապէս Բօզ-Գաղ զրկեց կէս-վաշտ թիւրք ձիւարներ: Սակայն խումբը արգէն հեռացել էր Բօզ-Գաղից:

Սեպտեմբերի 27-ին Խաբաթովին տեղեկացրել են, որ Բօզ-Գաղի վրայ սպայ Տրուխաշովին դիմադրող հայկական խումբը կազմել է Անդրկովկասի և թիւրքիս զանազան կողմերից հաւաքուած անձերից, որ նրանք նախ բան գէպի թիւրքական սահմանը դիմելը, ապրել են Սարբաթի, Բերնա և Ղարսի շրջանի գիւղերում: Սեպտեմբերի 23-ին ամբողջ խումբը գիշերով ժամանել է Արմութի գիւղը: Նոյն գիշերին Չուրուղ գիւղից սայլով բերել են նրանց համար 16 բերդաններ: 23-ի երեկոյեան ամբողջ խումբը հաւաքուել է Չուրուղ գիւղի մօտ, ստացել է փամփուշաներ և ապա գիւղերով անցել է Սասթվերան գիւղի վերելից գէպի Արարս, ուղղել է գետի ափով գէպի Չիչալլի կիճճը, որով և բարձրացել է Բօզ-Գաղ: Խմբի առաջնորդ-վարչաներ են եղել արմութիցի Մարգար Յովհաննիսեան, Սիմէօն և Եղօ Մանուկեաններ և Պօղոս Տէր Գրիգորեան: Արմութիցի Սարգիս Մարկոսեանը, որի ամբողջ իջևանել էին Սարգարն ու Կուկունեանը, բնծայել է վերջինին իր մոխրագոյն ձիւն: Սեպտեմբերի 23-ին, խումբը մեկնելուց առաջ, վախազ Սիմէօն Մանուկեանը (որ 2 տարի ծառայել էր շրջիկ կօմանդայի մէջ



և լաւ ծանօթ էր Բող-Դաղի շրջակայ վայրերին, ուղարկեց Չարախանա գիւղը (ուսկից սկսում է Բող-Դաղի վերելքը 2իշարլի կիրճով)։ Մանուկեանի նպատակն էր իմանալ, թէ ի՞նչ ուղղութեամբ էին սահմանաւ ալ գիշեր սահմանային պահակի զառնիքները։

Սեպտեմբերի 21-ին, զեպի Արմուժիի երթալիս, խմբի մարտիկ սպանել են Չ քիւրգ՝ Բագօ Ֆերիսօ-օլլի և նրա որդի Հասօին։ Խումբը առաջ աւել է նրանց երեք ուսրլի, խնդրելով ոչ սքի չ'առել իրենց հանդիպումի մասին։ Բայց յետոյ, երկիւզ կրելով, որ այնուամենայնիւ կարող են մատնել, սպանել է երկուսին էլ։

Սարգիս Աուկունեանին և իր բնկերներին խառ գիւղի մէջ ձերբակալելուց յետոյ (26 սեպտ.), Աղբուլաղի մօտ, ձորի մէջ շքիկ ձիւտերները գտել են հինգ մահացականների դիակներ։ Բժշկի և ոստիկանական պաշտօնեայի բնուժիւնից երևացել է, որ զիակները պատկած են եղել Ղարաչիկ աւակի անիին, 50 քայլ հեռու այն շաւղից, որ տանում է տաճկական սահմանագլխից դեպի Աղզուան։ Գիակների վրայ ահագին քանակութեամբ վերքեր են նկատուել։ մէկի վրայ՝ 19, միւսի՝ 7, երրորդի՝ 6, չորրորդի 12, հինգերորդի վրայ՝ 9 վերք։ Երկրորդ զիակի բիթն է կորուած, չորրորդի ակնբլու Մի քանիսի վրայ չկար վերի զգեստը։ Գիակների մօտ գտնուել են ի միջի այլոց գետնի մէջ խրւած մի սուիւն, որ բարձրովն նման է խառ գիւղի այգիներում Աուկունեանի ձերբակալելու ժամանակ գտնուած սուիւններին։ Երբ զիակներից առաջ լուսնակարները ի յոյց դրին, թիւրք վկանները ծանաչեցին յանձին նրանց թ իւրք ք ա հ պ ա ա կ ն եր ի (հետևում են սնունդները), որոնք Ղարսի շրջանից անցել են Ցաճկաստան։ Սեպտեմբերի 25-ին Աղբուլաղ աւանում գինւած հայերը կանգնեցրին կարաւաններ, որ պատկանում էին Մուստաֆա Չաուշ Խաուֆ-օլլիին և Մահմադ Օսման-օլլիին։ սպանեցին Օսմար Բաքիր-օլլիին և նրա ուղեկիցներին։ Քննիչը գտաւ սպանութեան տեղում մի սուիւն, սպա լուսնակարչական նկատիվներ ու թեքթեքի կտորաստրերներ, որոնք սպացոյց էին, որ խումբը եղել էր այգետեղ... Ի նկատի առնելով, որ Աուկունեանի բացատրութեան համեմատ, խումբը յետ էր նահանջել դեպի լեռը և խառ գիւղը, որպէս զի սպասէ պատեհ վայրկեանի՝ սահմանը անցնելու համար, ի նկատի առնելով և ուրիշ առեայները՝ հիմք կայ եկրակացնելու, որ սեպտեմբերի 29-ին սահմանապահ զինուորներին զիմարող անձերը տրւած են եղել իրենց տեղերում, որպէս հսկիչ-տեղեկատուներ, որ պէտք է հաղորդէին խմբին պ ա տ ե հ զ ա յ ը կ ե ա ն ք սահմանն անցնելու համար։

Գեռ 1890-ի յունիսի մէջ էին նկատուել, թէ ինչպէս թիւրքիայից և Անդրկովկասի այլ և այլ կողմերից հաւաքուած էին Աղզուանում հայեր, որոնք մտադիր էին զինւած խմբերով անցնել Թիւրքիա՝ վրէժ հանելու քրդերից և տաճիկներից։ Վկայ Գրաշօլլի ստելով, կարծումի մէջ տեղի ունեցած զէպերից (8—9 յունիս) մի քանի օր առաջ Աղզուան էր եկել Սասունից մի անձ, որի ով լինելը ճշտու անկարելի եղաւ իմանալու Աղբուլաղ Աղզուանում, այդ անձը բանակցում էր մի քանի տեղաշի հայերի հետ, որպէս զի կազմակերպեն զինւած խմբեր, թիւրքիայ դրկելու համար։ Եւ շուտով, նրա մեկնելուց յետոյ, սկսեցին հաւաքուել Աղզուանի մէջ հայեր, գնալուան ծայրերից՝ Հաջի Թաթիս Աղզուանից վկայութեամբ, յունիսի մէջներ թիւրքական Այաղկերտից Աղզուան եկաւ թիւրքահայատակ Գարութիւն աղան, անցնելով Բաթուումով, Թիֆլիսով և Բագուով։ Գարութիւն աղայի ստելով, նա Աղզուան եկել էր բնութելու համար հայ խմբերի հաւաքման կենտրոն։ նրա ետևից պէտք է գույին գանացան տեղերից 400 կամաւորներ։ նրանց համար հրացաններ արդեն զրկւած են Բաթուումից։ Մնալով կաղզուանում 15—20 օր, Գարութիւն աղան, 12 հոգուց բաղկացած մի խմբով, գնաց դեպի Մ ա ա ու ա լեռը, որ գտնուած է Խորասանի գաւառում, թիւրքական սահմանագլխի մօտ։

Գարութիւն աղայի խումբը լեռ անցնելուց 8 օր առաջ Աղզուան եկաւ խնուցի Բաշ-Ղարսը 12 մարտով։ Աղզուանում մէկ օր մնալուց յետոյ, գնաց 19 մարտով Մարտու սարը։ Ինչպէս պարզուց մի շարք մահացականների վկայութիւններից (երբ-

ւած են անունները), Մարտուի վրայ տեղաւորւած հայկական խմբերը կատարել են Գարութի երկրորդ կիսում մի շարք ոճիրներ։ (Գարութի մեր սահմանակից թիւրք զէպերի վրայ, թալաններ, սպանութիւններ... անուն-անուն յիշատակւած են զէպերը)։ Նոյն ժամանակները սպանեցին և այրեցին Մարտուի վրայ թիւրքահայատակ Խուրշուգ Կաման-օլլիին և նրա որդի Մահմադին, որոնք գնացել էին սարը Թափ-րազ-Գալէ տաճկական գլխից՝ փայտ կտրելու նպատակով։ Երբ սպանւածների ազգականները գնացին փնտրելու նրանց (հայ խմբերը հեռանալուց յետոյ էր), գտան Մարտուի ստորոտին սպանւածների երեք էշերը, որ մերթւած ու ձրգատւած էին մի փոսի մէջ և հոգով ծածկուած։ Նոյն տեղի մօտ գտան մի մտրակայտ, որ մնացել էր խարոյկից և նրա մէջ սակարիքներ։

... Աուկունեանցի խմբի մէջ, բացի փախստական կատարածիկ Սարգար Աւետիսեանից, կար և Արրահամ Գալիսեան Աղամալեանցը, Զանգեզուրի գաւառի Աւշան-Արաւ գիւղից, որ յայտնի էր խմբի մէջ Ղարաբաղցի Արրահամ՝ անունով։ Ինչպէս պարզուց մահացական վկանների ցուցմունքներից, այդ Արրահամը սեպտ. 26-ին վերադարձել է խառ գիւղի մէջ, կողակների հետ տեղի ունեցած հրացանաձուլութեան միջոցին։ Խառից նա գնաց Ալեքսանդրօպոլի գաւառի Ղազարապատ գիւղը, ուր մի քանի ժամանակ բժշկուել է վերքից։ Առողջանալուց յետոյ, նոյեմբեր 14-ին (1890 թ.) նա վրէժ-խնդիր եղաւ Սարգարի մահուան համար և բերդանի հարւածով սպանեց երկու բուրգ՝ Մրէ Բասօ-Ղի և Խառ Արֆաթ-օլլի, որոնցից մէկին կտոր-կտոր արեց գաշոյնով։ Այլ սպանութիւնից յետոյ, Արրահամ Աղամալեան գնաց Ալեքսանդրօպոլ։ 1891 թ. յունիսի 18-ին նա ձերբակալուց նոր Բայազետի գաւառում, ուր մի շարք ոճիրներ է կատարել— աւազակութիւններ, սպանութիւններ և զիմարողութիւն իշխանութիւններին։ Երբ Արրահամ Աղամալեան զինուորներով շրջապատւած, տարւած էր բանտից հարաւարտ գաւառորի մօտ, նա թափեց ինչ որ փոշի իրեն ուղեկցող զինուորի աշքերի մէջ և սկսեց փախչել. այդ ժամանակ մահացաւ վերջապա...։

1891 թ. ապրիլին Աուկունեանի մօտ խուզարկութեան միջոցին գտնուեց 17 թիւրքական սուի, զգեստի մէջ կարւած և մի քանի նամակներ։ Աերկիւններից մէկի մէջ իր մի համախոհը գրում է, որ Աուկունեանցը իր գործողութիւններով արժեանքից հայ ազգը իր լեթարգիական ընդի, որ նրա ձերբակալումը ոգևորեց ազգը, արձագանք գտաւ ամենուրեք... որ այժմից Աուկունեանը շի պատկանում իր ծնողներին, այլ անողջ ազգին, որ Աստուած անողորմ պիտի լինի, եթէ չ'ազատէ Աուկունեանին շար բանակալների ձեռքից և այլն։ Կամակը զալիս էր Ալեքսանդրօպոլից։ նրա մէջ, իբրև Աուկունեանցի բարեկամ, յիշատակում է Խ ս ս ե ն ք ա հ ա ն ա յ ։

1890 թ. սեպտեմբերի 25, 26, 17-ին ձերբակալուած Աուկունեանի խմբի անգամները, բացի Աուկունեանից, Լիսինեանից և Թուրքեն Գոլհանիսեանից (որոնք եկած էին Պետերբուրգից), բացի նաև Աղզուանի և Արմուժիի բնակիչներից, բոլորը պատկանում են այն կարգի մարդկանց, որոնք չուեն հաստատ բնակութիւն և որոշ պարագամուք։ Ըմանք եկած լինելով թիւրքիայից, ապրում էին Անդրկովկասում, այլ և այլ քաղ-քներում, զբաղւելով վարձու աշխատանքով, ուրիշները խոհարարութեան, ուրիշները արհեստաւորներ էին կամ մանրավաճառներ. բայց խմբի մէջ մտնելու ժամանակ չուենին որոշ պարագամուքը։ Այդպիսի մարդկանց, բիշ բացառութեամբ, կարող էին վարձով ընդունել խմբի մէջ կամ թէ որևէ նրխախան վարձատրութեան խոստումով։

Սարգիս Աուկունեան և խմբին պատկանող ուրիշ մեղադրեաներ այնպէս են բացատրում, թէ իբր նրանք չէին էլ կարող կատարել իրենց վերադրւած յանցանքները, քանի որ պայմանաւորւած են եղել ոչ մի յանցանք չզործել Խոստատանի սահմաններում և զէքը ցած դնել առաջատուների հետ հանդիպելու պարագայում։ նրանք պնդում էին, որ իբր կողակ Չախարօլլին և ուրիշներին խփող հայերը կրակել են միայն իրենց սեփական կեանքը փրկելու համար, երբ կողակները սկսել են առաջինները կրակել իրենց, հայերի վրայ։ Սակայն այդ բացատրութիւնները լիովին հերքուած



են նախնական քննութեան վերոյիշեալ տւեալներով: Առանց բացառութեան, բոլոր դէպքերու, թէ սեպտեմբերի 26-ին խառ գիւղի մէջ և թէ նրանից յետոյ, երբ կուկունեանի մարդիկ հանդիպել են սահմանապահ զինուորներին կամ շրջիկ կամազային, ամեն անգամ նրանք ջոյց են տւել պաշտօնեաներին զինւած զիմազրութիւն: Իսկ ինչ վերաբերում է կուկունեանի մարտի սպանութեան, վկաների ջուջմունքները և վայրի քննութիւնը բերում են այն համոզումին, որ մեղադրեալները կրակել են կողակների վրայ, հէնց որ նկատել են նրանց և որ կողակները սկսել են զնշակ արձակել հայերի վրայ, վերջինների արձակած զայպերից յետոյ, որոնք միանգամայն անսպասելի են եղել առաջինների համար:

Հայկական խումբը մտադրութիւն և յոյս է ունեցել սահման անցնելու գաղտնագորի, իսկ այն դէպքում, երբ ուռու իշխանութիւնները կ'արգելէին, հայերը մտադիր էին գիմազրութիւն ջոյց տալ և դրա լուսադոյն սպացոյցը հէնց սեպտ. 26—27-ի զինւած զիմազրութիւնն է... Բոլոր վերը յիշատակած զիմազրութեան դէպքերում շարագործները կրակել են ուռու պաշտօնեաների վրայ զնշակաւոր հրացաններով, կրակել են նրանց կեանքից զրկելու գիտաւորութեամբ, կրակել են այնպիսի տարածութեան վրայ, որ յետոյ նրանց (այդ պաշտօնեաների) կեանքին վտանգ է եղել սպանալիս: Վկաների ջուջմունքները և ամբողջ նախնական քննութիւնը հաստատում են, որ վերը յիշած բազմաթիւ ոճիրները (սպանութիւններ, աւազակութիւններ, զիմազրութիւն պաշտօնեաներին և լն) կատարել են յանցագործ ընկերութեան ձեռքով, որը կազմակերպւել է յայտնի նպատակով, այն է՝ յարձակել թիւրքիոյ բնակիչների վրայ և վրէժխնդիր լինել 1890 թ. յունիս ամսի մէջ Էրզրում կատարած հայերի սպանութիւնների համար, վրէժխնդիր լինել առհասարակ թիւրքահայերի ծնունդների համար:

Նոյն վրէժխնդրութեան նպատակով հայ խումբը կոտորել է մի շարք քրդերի: Թիւրքիոյ սահմանակից գաւառների քրդերը ոչնչով չեն տարբերուած թիւրքական քրդերից և վրէժառութեան համար զնացող հայերը չէին կարող որևէ խորոխիմ զնել ուռուսպատակ և թիւրքահայատակ բերդերի մէջ...

Վերջապէս, ուռու իշխանութիւններին ջոյց արւած զիմազրութիւնը... Այդ բոլոր յանցաւոր գործողութիւնները ընկնում են պատժագրքի 262, 268, 9 և 1459 յօդածոների տակ:

Ի նկատի ունենալով բոլոր նախորդ իրողութիւնները, մեղադրում են.— Եւրջայ գաւառի թաքիր Միրքենդ գիւղի բնակիչ Արեւմ Մինասեան խոսրովեան, Նուխի գաւառի խնջ (՝) գիւղացի Սարգիս Մովսիսեան կուկունեան 27 ա., թիւրքահայատակ Հաճի կարպետ Յակոբեան Բալջեան 25 ա., երևանցի Ստեփան Գարուսթիւնեան (Ծերունի մականունով) 24 ա., Սղնախ գիւղի բնակիչ (Թիֆլիսի նահանգ) կոնստանդին Լիսինեան, 25 ա., Թիֆլիսեցի Ռուբեն Խասակեան Յովհաննիսեան, 24 ա., Ալեքսանդրապոլ գաւառի Ալքիմալի (՝) գիւղացի Մարտիրոս Գայտեան, 26 ա., նոյն գաւառից Մուրադ Միսիթարեան կայմուկեան (նաև Մանուկեան), 26 ա., ալեքսանդրապոլցի Նիկոլայ Յովհաննիսեան, 20 ա., Ախալցխայի Գրիգոր Աբմաշեան, 23 ա., Ալեքսանդրապոլի Բարսեղ կամ Բարդուղիմէոս Յակոբեան Քեամանչաճեան, 21 ա., թիւրքահայատակներ՝ Դաւիթ Չոլախեանց, 25 ա., Ռուբեն Դերձակեան, Մինաս Մեղքումեան, 25 ա., Շորագեալցի (Միջին Քեաղիկիւնար) Սարո (կամ Ծառուկ) Յովհաննիսեան, Ղազո Տարանեան, 16 ա., միջին քեաղիկիւնարցի Միքայիլ Հաջի Գանիէլեան (Հրէա-Մկրտիչ՝ մականունով), 23 ա., թիւրքահայատակ խաչատուր Զարարեան Հայկունի, 25 ա., Գրիգոր Տէր Մեքարպեան, 22 ա., Առաքել Գալստեան, 30 ա., Մամուշ Միսոյեան, 20 ա., Մանուկ խաչատրեան, 24 ա., ներքին բեադիկիւնարցի Վարդան Բագոյեան Թիֆլիսեանց (Թաթօ մականունով), 28 ա., Զանգեզուրցի Մինաս Մեղքումեան, 28 ա., Ալեքսանդրապոլի գաւառից Գարրիէլ Մկրտչեան Բոյաշեանց, 22 ա., պարսկահայատակ Արզամ Պետրոսեան, 24 ա., Ալեքսանդրապոլցի Մկրտիչ Մարտիրոսեան Մուզգուսեան, թիւրքահայատակ խիշառ կարպետեան, 27 ա., Բաշքեոյցի Աւետիս Մանուկեան, 24 ա., Եւրջեցի Յովհաննէս Արզումանեան Մարգարեան, 23 ա.,

Զանգեզուրցի Մեհրաբ Մարտիրոսեան Դաշոյեանց, 27 ա., Բարսում գիւղացի Լիբրեմ Գալստեան, թիւրքահայատակ Պետրոս Գրիգորեան, 26 ա., կաղզւանցի Գալուստ Գեորգեան Սէրգեան (՝), 23 ա., Արուսթլեյի Պօղոս Տէր Գրիգորեան՝ 40 ա., նոյն գիւղացի Մարգար Միրգայեանց, 29 ա., նոյն գիւղացի Եղօ Առաքելեան, 36 ա., կաղզւանի բնակիչներ, Ֆահրատ Սարգսեան կարպետեան, 27 ա., Մկրտիչ (Մկօ) Վարսեան (՝), 27 ա., Յովհաննէս Տէր Պետրոսեան, 33 ա., Վարդան Աղջազեալգեանց (՝) 37 ա., Սիմէոն Մարգարեան, 33 ա., Հայրապետ Ալէքսանեան, 27 տարեկան, ամենքն էլ — 43 հոգի — հարկատու դասից մեղադրուած են հետեւեալ յանցանքների մէջ...

Յիշատակում են վերտին և երկարորէն հայկական խմբի կատարած սպանութիւնները, սպանութեան փորձերը, զինւած ուժով իշխանութեան զիմազրելու դէպքերը և լն: Ապա բերում է վկաների ահագին ցանկը (159 հոգի):

Դատաւարութեան հետեւանքը յայտնի է արգէն:

Ամբաստանագիրը կազմւած է Երևան քաղաքում, 1891 թ. նոյեմբ. 30. ին

Ն Ի Թ Ե Ր Մ Օ Տ Ի Կ Ա Ն Յ Ե Ա Ն Ի  
Ո Ի Ս Ո Ի Մ Ե Ա Ս Ի Բ Ո Ի Թ Ե Ա Ն Ը Ա Մ Ա Ր

Թ Է Ի Ն Զ Պ Է Ս Մ Ե Ռ Ա Ի Ս Ե Ր Ո Ր

Հրատարակում ենք մեր ողբացեալ ընկերոջ, Հրատարակի մի տեղեկագիրը Ցարոնի մասին, զրկւած «Գրոշակ»-ին 1901 թ., գրւած այն սիրուն, յուզիչ, ինքնատիպ ոճով, որ հանգուցեալի գրչի զարգն էր:

Ա՛յ ժ մ կ ա մ ե բ բ է բ . . .

Այստեղ ամեն ինչ թանկ է. իսկ կեանքը ամենէն ատան բանն է, մասնաւորապէս հայ ժողովրդի կեանքը: Անշնացման սոյն ծրագիրը տրւած է երկրորդի պալատէն: Սրբազան պարտք կը համարին ամեն կերպ գաղանթութիւններ ի գործ զնելը: Այդ որ ծննդան, բռնաբարութեան, հարստահարութեան ամենէն ծարպիկ միջոցներ կը գանձ, նա ամենէն յարգելի և պատանշաններու արժանի անձնաւորութիւնն է:

Ահա գարուն եկաւ, մայիսի մէջն ենք, կրկին սկսեցաւ ուղիի շինութիւնն, ժողովրդական այդ պատիժն ու պատուհասը թէ ինչ ծնունդներ ու գաղանթութիւններ ի գործ կը դրին ժողովրդի վրայ, բանիցս նկարագրւած է: Այս տարապարհակ աշխատութեան բուն նպատակը հայ հասարակութեան աշխատանաց ժամերը խլելն է, նրան թշուառացնելն է և ոչ թէ երկրի բարգաւաճման զարկ մը տալը: Այս տարապարհակ աշխատութեան միայն հայերը ենթարկւած են: Այս տարի սովորականի հակառակ՝ Պուլանդի գաւառն այդ հայեր բերեցան ճամբու շինութեան համար. մինչդեռ Պուլանդը երկու երեք օրւայ հետաւորութեան վրայ լինելով շինելիք ճամբու դժէն, աւելի տառապանաց ենթարկւած են այդ գաւառի հայերը:

Ըստ սրինի ամեն մի շափահաս արու պարտաւոր է աշխատել շարս օր, բայց կատարւած զեղծմանց շնորհիւ հայ գիւղացին կը դատապարտուի ամիսներով եզրիպատկան այդ զուկի ծառայութեան: Տարին երեք ի վեր է, որ հայը կը կրէ այս



շարքարանքը, բայց դեռ ճամբու գիծը չորս ժամ հեռացած չէ բաղաբէն. համեմատեցէք...

Հ ա Ր Կ ա հ ա ա թ ի լ ի լ ը . — Ամեն մի պատահող տաճիկ պաշտօնեային, ոստիկանին, զորաց խմբերուն եթէ հարցնելու լինիս, ո՛ր կերթար, անմիջապէս կը պատասխանեն. «հարցնելու ի՞նչ պէտք կայ, չգիտէ՞ք—հարկահաւաքութեան»։ Ժողովուրդը երբ այդ բառը կը լսէ, կը դողայ և կրճըն կը թռչի ծանր հառաչանք մը։ Ժողովուրդը գիտէ, թէ ինչ ահաբեկի արարքներով կը կատարւի հարկահաւաքութիւնն, ինչպէս կը ծախւի հայի օրական պարէնն։ Նոյն իսկ դաղթողներու յետամնաց տուրքերն ալ կը դանձուին տեղւոյ վրայ մնացող մի բուռ հայերէն։ Ով որ կատարած շարիքներու համար կառավարութեան դիմէ, «Ֆէդայի»-ն՛ր, կուզէք տուրք շտաղ կառավարութեան՝ կըսեն ու մարակներու տակ ոստիկաններով կը վերադարձնեն իրենց տեղերը։ Ահա բնաջինջ ընելու ամենայաւ ու ճարպիկ միջոց։ Տուրքերու այս ձևով կատարող դանձուքը արդէն ժողովուրդին հասուցեր է տ ն տ ե ս ա կ ա ն ք ա յ ք ա յ մ ա ն վերջին ատիճանին։

Բ ա ն տ ա Ր Կ ո լ թ ի լ ը . — Մշոյ բանտի մեծամասնութիւնը հայերէ կը բաղկանայ Գոմա գեղէն բանտարկւած են 11 հայեր, խեղճւած քրդի մը դիակի համար, որ գտնուել է Էփրատ գետի կուսկուսայ (գոռագոռայ) բուսած տեղը քրդաբնակ գիւղերու սահմանին վրայ։ Ամբաստանւած են Գոմա գիւղացիք և 15 տարւայ բանտարկութեան դատապարտւած միայն այն փաստով, որ յիշեալ քիւրդը բանի օր առաջ Գոմա գեղէն անցեր է։ Բանտարկւած են՝ Մուշէն, Մովսէս-քէն, Բերդակէն, Գիւրգհանքէն, Յրօնքէն, Ալվառիճէն, Փիթարէն, Սուլուխէն և ուրիշ շատ մը գեղերէ 70—80 թւով աչքի զարնող հայեր, որոնք դատապարտւած են ասորիներու բանտարկութեան ֆէդայիի անւան տակ, առանց ունէ փաստի կամ ապացոյցի։ Տեղական դատարանները բացարձակ երդւեալներ են ամեն մի դատ ըստ կամաց կաղապարի և ի վնաս հային վճռել, արտաքոյ կարգի կաշառք կը գործածուի թէ հարկահաւաքութեան և թէ դատարաններու մէջ։ Յայտնի ասպատակութիւններ կ'ընեն հային պատկանող ամենաթեթիւ դատի մէջ անգամ։ Բանտարկող քրդերն ալ նոյն վիճակին կ'ենթարկին։

Ս պ ա ն ո լ թ ի լ ը ն ե բ . — Սպանութիւններ ու կողպուտներ կը կատարուին բոլորովին անարգել կերպով։ Հասարակականներին իրաւունք չունի կառավարութիւնը ճընչելու, նոցա գործած շարիքները զսպելու, որովհետև մեծ հրէշի անունը կը կրեն, նորա ուխտեալ գիւտորներն են և հայերիս ոչնչացման ծրագիրը իրագործողներ։ Միայն օրինակ մը. Գաշտի մէջ շրջող 30—40 զօրաց հետ ընկերացած խումբ մը համադիականներ կը պատահին Սուլուխ գիւղ. զօրքեր կը լեցուն գիւղի մէջ, Խեղճ գիւղացիք զբաղւած էին ինքնակոչ հիւրերու հետ։ Ըստ սովորութեան պարտաւոր էին տալ ձրիարար նոցա ուտեստը և պահանջուած ամեն մի պիտանքները հոգալ։ Այդ միջոցին զօրաց հետ ընկերացող համադիականներ տարան դաշտէն աշխատող գիւղացիի եզները։ Երբ գիւղացիք դիմեցին զօրաց օգնութեան, պատասխանեցին—«մեզ իրաւունք տրւած չէ համադիականների դէմ կուրի»...

Ս ա ս ն ո յ օ Ր հ ա ս ք . — Թողնէք զաշտը իր գոխային կեանքի մէջ, դառնանք Սասնոյ արդի գրութեան։ Սասունցիին տեսակ մը բանտարկութեան դատապարտւած է, տեղացիք մինչև Մուշ գնալու միջոցներէ զրկւած են։ Տա-

ճիկ կառավարութիւնը երևակայելով թէ Սասունը օր մը պատիժ ու պատուհաս պիտի լինի իր զլինին, շտապեց և կը Զանայ այդ արիւնատար երակը կտրել, արիւնաբամ մեռցնելու նպատակով։

Բաղէշի կուսակալն ու Այաի բէյը Բ. Գրան առանձին հրահանգներով եկան Մուշ. կը լսուի, թէ կուսակալն իրագործելու է ստացել «գործելու»։

Նախ սասունցին իր գիրքերէն իջեցնելու ծրագիրը կազմուեցաւ, չգիտեմ թէ ի՞նչպէս և ի՞նչ նպատակով փոխուեցաւ այդ որոշումը։ Այժմ որոշուած է շինել երեք զօրանոց՝ Տալարիկի, Ալիէկուզանի և Հէնիքի մէջ։ Մէկ կողմէ կը խոստանայ կուսակալը բանտարկեալներուն ընդհանուր ներում շնորհել, համադիականների և թիրաքների ճշունեներէ ազատել Սասուն և Մուշ, մէկ խօսքով բարեկարգել, պայմանաւ որ յեղափոխականները որոշեն իրենց ղեկերը յանձնել կառավարութեան, իրր թէ ղեկերու գնբը կը վճարուի և յեղափոխականներուն ալ անցադիր կը տրուի ցանկացած տեղեր հեռանալու համար։ Խաբուսից յոյսեր... Մենք յիմար կը լինենք, եթէ դեռ հաւատանք մեծ Գաղանի խոստումներուն. նա այդ ինտրիգներով էր որ կուլ տուաւ հարիւր հազարների անմեղ արիւնը։ Մենք գիտենք նրա վերջին ծրագիրն, նա էլ թող գիտնայ, որ այլ ևս մենք չենք ապրի իր տւած հացի փշրանքներով։ Ահա միւս կողմէ տեղեկութիւն կը հասնի, որ խիանցի յայտնի ցեղապետ Քոս Արլօն հարիւր զօրքով մտել է Տալարիկ, բանտարկայ տուրք կը պահանջէ։ Մինչև անգամ երկու ոչխար ծախուել է 25 դրով։ Եթէ տարւայ տուրքերը գանձելով, աւելի ճիշտ թալանելով, եթէ գիւղապետներ ձերբակալուած տարեր է Փասուր դայազամանիստ տեղը։ Եթէ մի կերպ չ'ազատի Սասունը այդ կորստաբեր ծրագրէն, արդէն որոշուած է տալ իր զրեթէ չնչին ուժով վերջին հարւածը, մեռնել, ցիրուցան ըլլալ։ Սասունցին փորձերից լաւ ըմբռնել է, որ զօրանոցներ չինելով, ուշիկ ուշիկ, անձայն ու անձուն պիտի ջնջէ ու խեղդէ զինքը, ուրիշ յառաջ կուզայ անպատիւ ու տմարդի կորուստ։ Բայց մի վայրկեան սառնարիւն մտած ենք. եթէ մի երեք ամիս դիմանալու համար նիւթական և սպանական բաւականաչափ ուժ ունենար Սասունը, որոշ կրնանք բուել, որ նա զօրաւոր դարկ մը կարող էր տալ ժողովրդական դատին, իսկ ա՛յժմ... միայն Սասնոյ համար պատուաբեր կորուստ մը կը լինի և ուրիշ ոչինչ։ Այդ գործին և արեան թող պատասխանատու մնան այն հայ եղբայրներ, որոնք զգացում ու շրջահայեցութիւն չունեցան և օգնութեան չհասան։ Ա ն ա ս ք ք ն զ հ ա ն ո լ ք է։ Ա հ ա Ս ա ո ո լ ը ի օ Ր հ ա ս ք և մ ի ա ժ ա մ ա ն ա կ մ ե բ ճ գ ն ա ժ ա մ ք...

Ժ ո ղ ո վ ը զ ի ա Ր զ ի տ ր ա մ ա զ ր ո լ թ ի լ ը ն . — Տեղական ժողովուրդը վերջապէս կարծես արթնցաւ դարևոր թմբութենէն, իր վիճակի պարզ գիտակցութեամբ այսօր նա տրամադիր է։ Մեռնել ու ներկայ դառն պայմանների տակ այլևս չսպրելու ընդհանուր ոգևորութիւն մը կը տիրէ, կարծես նոյն ժողովուրդը չէ, ինչ որ էր ասկէ մէկ տարի առաջ, իր մէկ ջուխտ եզն տալու և ղէնք մը ձեռք բերելու ցանկութիւնն ամենուրեք կը տեսնուի։ Օրական հացը խելի զաւակի բերնէն, գնայ եռապատիկ ու բառապատիկ շահով դրամ ձեռք բերել և նւիրել գործին, օրինակելի զօհողութիւն է։ Մ ո լ ը ք ա ղ ա ք ի հ ա Ր ո լ ս տ ն ե բ ն են և ա ո հ ա ս ա Ր ա կ ք ն ի կ ն ե բ ք, որ կը շարունակեն իրենց դատապարտելի անտարբերութիւնն. ատոնց



բաժինն ալ թող լինի թուք ու ձուք. հայութիւնը այդ ձևով թող պատկէ այդպիսիները թէ ներկայի և թէ ապագայի մէջ. Աւրջիներս մի կողմ՝ թողնելով, ուրախ ենք հայ գիւղացիի արգի բայլերով. Այժմս կարելի է մի բան յուսալ, որովհետև ժողովրդի յոյսը այլ ևս իր թեւերու և կեանքի գահողութեան վրայ յենած է:

Տ ա ր օ ն ի հ ե ր ս ս ն ե ր ք.—Մուշ և Սասուն տարիներէ ի վեր ունեցած են այնպիսի գործիչներ, որոնք պաշտելի եղած են ժողովրդին թէև շատերը չունին իրենց նկարներն ու կենսագրութիւնները, բայց ժողովուրդը երբէք չկրնար մոռնալ այդ հերոսներին, երգերով կը պաշտէ նոցա գործն ու արիւնն: Չենք կրնար մի բովէ մոռնալ և մենք, և մեր ամեն մէկ գրւածներու մէջ չյիշել նոցա անմահ անուաները: Միհրան, Մուրաճ, — այն արիւնաներկ կարապետները բռնութեան ձորերում. Արօ՛, Գուրգէ՛ն, Արմ, Ռուբէ՛ն — այն ժողովրդական ճշմարիտ հերոսները. Մարգար, Սերոբ — այն վեհաձայն մարտիկները, որոնք իրենց ջահել արևն շնայեցին Ազատութեան գործին: Ասոնք են ժողովրդի հարազատ զաւակներն ու ոսկեփունջ պատկները: Ասոնք են ժողովրդի միտիմարիչներ յուսահատ բույներէ մէջ: Ասոնք են վրէժխնդրութեան բորբոքիչ կայծերը:

Յարգանք բաջներին:

Նահատակ ինկա Գուրգէն Մշոյ Յրօնք գիւղի մէջ: Նա այն անմահ գործիչներէն էր, որ ժողովրդական դատի պաշտպանութեան համար, ուրախ ու զւարթ կը տանէր ամեն կերպ տառապանք ու զրկանք: Նա իր և անձնաւորութեան անմահ օրինակ կը ցանկար ամեն մի ձեռնարկ անձամբ կատարելու: Պատահեցաւ Յրօնք գիւղ կարևոր գործի համար, իր հետ ունենալով մշեցի յայտնի ազնիւ հայգուկները՝ Ռուբէն, Տիգրան, Աարգան, Արօ, Նշան և Փարսաճտան, բոլորն ալ պաշտելի երիտասարդներ: Հատկապէս զո՛հ տւած են եղբայրներ, քոյրեր, ծնողներ. զո՛հ տւին և իրենց արևն ու կեանքը, ինկան բաջի պէս. թշնամոյ վրայ ընդհանուր սարսափ տիրեց: Մշոյ երևելի և խելահաս անձնաւորութիւնն Գալիպ էֆենտին, Ալայի պէյի հետ միասին, զորաց ու քրդաց մեծ բազմութեամբ յանկարծ պաշարեցին Յրօնք գիւղը: Մեր հերոսները անտեղեակ մարտի մը մէջ կը գտնուէին, Մուշէն ալ զօրք ու թիւրք հասարակութիւնը հասաւ. հոն գումարւած էր հազարաւորներու խառնիճաղանջ բազմութիւն մը: Մտակայ Խարգոս գեղէն բարիւղ բերելով կրակ տւին հերոսներէ բնակավայրին: Գուրգէնն երբէք չկորսնցուց իր ուղւոյ բարձրութիւնն, երբէք չզիտացաւ վճատիլ, շփոթիլ. կանչեց. «Երգեցէ՛ք տղերք», սկսեցին ռազմի երգերի ներդաշնակ մեղեդին... Ա՛յնքան ազգեց այդ նահատակութեան մեղեդին, որ Ալայի պէյը մինչև անգամ կը պոսար. «Ասուած սիրողը թող մի բովէ դադար տայ զնդակներին»: Հերոսները մտելի ու ճարճատող կրակի մէջէն դուրս թռան. ակնթարթի մը մէջ թափուեցան հազարաւոր գնդակներ. ինկան վիրաւոր մեր տղերքը, այդ վիրաւոր ու դիմաթաւալ վիճակի մէջ ապա սկսեց ճակատամարտը: Ինկա Գալիպ էֆենտին, ինկա Ալայի պէյի քեռորդին, զորապետ մը, ինկան զօրքեր ու քրդեր ամբողջ 11 հոգի ինկա՛ն և մեր տղերքը: Հայգուկներէն Մկրտիչը թշնամոյ պարիսպը ճեղքելով անցաւ, կուսեցաւ անօրինակ բաջութեամբ մինչև Մեղրազեան ակերք, հոն փամփուշտները հասնելէ յետոյ վիրաւոր ինկա, ծնկներէ վրայ եկած զաշոյնը ձեռնի կը զարկարար մահ, և ոչ ոք չէր համարձակեր մոտենալ այդ ուժապաստին. ժպիտը երեսին կը խնդար թշնամոյ վաստակութեան ու թուրութեան

վրայ: Հեռուից ստացաւ նորէն վերքեր և ինկա՛ն: Մկրտիչը ներկեց իր արիւնով Մեղրազեան ջրերը... Ար յիշեմ աստ Տամատեանի գրւածքի այս կտորը. — Յամբի՛ր այլ ևս ո՛վ աղբերակն հրաշագան, զի բռնութիւն բու ջուր խմեց ու պղծեց, թո՛ւղ Մեղրազեան այլ ևս արեամբ կարմրէ՛, իսկ թէ արիւնն ալ աստ փոխեր է սիպտակ՝ թող արտասուաց դառն վտակ ընդ իւր ակօս գլորէ՛:

Մեր հերոսների մարմինները բերին Մուշ, թաղեցին իրար կողքին: Մշոյ արևելահարաւ, գերեզմանատան մէջ, Ս. Մարտիանէ եկեղեցւոյ դիմաց:

Թշնամին իր կատաղութիւնը թափեց Յրօնքի վրայ, սպանեցին երկու հայեր, աւարի տւին ամբողջ գիւղը, ձերբակալեցին շատերը, որոնք դեռ կը անբան բանտի անկիւնները:

Անցնի՛նք, թաշի՛նք այդ արիւնոտ պատմութեան վրայէն ալ: Կարգն եկաւ ժողովրդական հերոսին, Տարօնի առիւծ Ս ե ր օ բ ի ն: Սերոբը հսկայ, գեղեցկագէտ, կուսելու ընդունակութիւններով օժտւած Ախլաթի Սօխորթ գիւղացի մի ազնիւ երիտասարդ էր. թշնամին նրա անօրինակ փորձերն շատ անգամ առած էր: Թշնամին տեսաւ, թէ ինչպէս Սերոբ Նեմրութի կողքերու վրայ ազատեցաւ միայնակ կուսելով յիսուն կանանաւոր զօրաց հետ, և միւս կողմէ ալ կուսելով բնութեան արգելքներու դէմ... Չմեռ էր, ձիւնը պէտք էր ճեղքել ու վեր բարձրանալ, այդ միայն Սերոբին յատուկ էր: Թշնամին տեսաւ, թէ նա ինչպէս վրէժխնդիր եղաւ այն հայ և թուրք վատերուն, որոնք ժողովրդի ազրակներն էին: Թշնամին տեսաւ, թէ ինչպէս նա ձերբակալեց շատ մասնիչներ, տարաւ Նեմրութի գաղաթը, հոն Ասուածոյ մտիկ տեսաւ ընկերական դատաստան, տւաւ մահաւան վճիռներ և շատերուն ալ վեհաձայնարար ներեց...

Սերոբի կատարած գործերու մանրամասնութիւնները պէտք է թողնել մտքի հանգիստ շրջաններուն: Ար յիշեմ միայն Բ ա ր շ է ն ի կ ու ի ք, որը համահասար է Խ ա ն ա ս օ ր ի, Խ ա ս տ ու ր ի, Բ ա ն կ ի ընդհարումներուն, և գուցէ անոնք չհասնեն դեռ այդ ճակատամարտին, նսեմանան սորա առջև, եթէ համեմատութեան գնենք տեղը, գիրքը և թշնամոյ անհամեմատ ուժը:

Բարշէնը Բաղէշէն կէս ժամու հեռաւորութեամբ գիւղ մ'է: Սերոբ իր կտրիճ հայգուկներով հոտ կը գտնուէր, խումբը կը բաղկանար 14 հայգուկներէ: Գաւաճաններու դաւերով՝ առաւօտեան լուսարացին պաշարման վիճակի մէջ գրեցաւ Բարշէնը: Կարծես ուրախ ու զւարթ Սերոբը այդպիսի մի օրւայ կըսպասէր, ուր երևան պիտի գար իր հերոսութեան նկարը: Նա իր հայգուկներով բարձրացաւ մտակայ բլրակը. զօրքերու և քիւրդ աշիթիներու անհամար բազումութիւն մը թափուեցան բլրակի շորս կողմ. մօսին հրացաններ սկսեցին գոռալ բլրակի գաղաթէն. Սերոբը իր խրոխտ ձայնով ազգու հրահանգներ կորոտար հայգուկներին, կը դիտէր նոցա գիրքերը ու կրէր. «մի վճատի՛ք, Ասուած մեր կողմն է, յաղթութիւնը մեր բաժինն է»: Կարկտի նման կը տեղայն զնդակներ. հասան թնդանօթակիր զօրքեր, սկսեցին թնդանօթներ գոռալ, բայց Մօսինի զնդակները անմիջապէս ցիրուցան ըրին թնդանօթաճիգ զօրքերը, երբ մի քանի զօրապետներ ու զօրքեր զո՛հ տւին: Մինչև երեկոյեան մութը տիրելուն՝ հազիւ կրցան 12 թնդանօթ արձակել: Սերոբը քմիճաղով կը դիտէր թշնամին և կը պոսար. «Սեղբակի, Նշան, Մուշե՛ղ, ինչո՞ւ ձայն տալով չէք կուրթ»: Սեղբակի, Մուշե՛ղ, Նշան բլրակի դիմաց նստած՝ պահապան հրեշտակի նման կը լսէին Սերոբի ազգու ձայնը և զնդակներով կը



պատասխաններն. «մեր ահա կը կատարենք մեր բաժինը, ջանացէք դուք որ ձեր դիրքը անմատչելի մնայ»: Արջնայէս երկրորեցու կուրս մինչև երեկոյեան մութ արեւուն, մեր հայդուկներու զոհը միակ Սարգիսն էր, որը իր գրից մէջ ծակատէն զնդակահար լինելով, երեսը դրած հրացանի կռիւն կը հանգչէր, առանց շարժուելու, առանց իր գիրքը փոխելու: Իսկ թշնամին կորսնցուց Բարչէնի շրջակայքը 60—70 հոգի: Երեկոյեան մութը վերջ աւառ կուսն, ասքի ելան հայդուկները դո՛հ սրտով, բայց թշնամին պաշարման մէջ կը պահէ կուսը դաշտը, սպասելով երկրորդ օրուայ լուսարացին: Առին անմահ Սարգիս զենքերն ու գուբերը, համարակցին նորա արիւնտ ծակատը և վար իջան բլրակէն: Արբ մտք ծամբաներով յաջողեցան առանց ընդհարման անցնիլ թշնամու պարիսպը, մինչև անգամ լսելով շատ մտէն քրդերի խռակցութիւնները, թէ «ով որ կտանէ անտական, թող այն մեանի թաղաւորի համար»: Երբոր իր հայդուկներով ազատեցաւ և հոն կանգնեց յաղթութեան կոթող մը: Հին ազգայնական պատմութիւններու զբաւմունքը շատ անգամ շափազանցութիւն կը համարենք, ահա փրինակը, թող լսէ ամբողջ աշխարհը, բայց փաստն որ միայն մի օր էր...

Տաճիկ կառավարութիւնը և խուժանք առաւօտուն շտեմանն ոչ որ բլրակի վրայ, ամթահար ետ դարձան: Այս կուէն յետոյ Երբոր թիւրքերի համար դարձաւ «փաշա» ինչպէս ալ կանաններն «Երբոր փաշա»: Իսկ մեզ համար ներկական ու պաշտելի նահատակ:

Կառավարութիւնը չէր կրնար մտնայ այս բոլորը. իր կառավարութիւնը թափեց նրա տան վրայ, ձերբակալեց Երբորի մեծ եղբայր Միւէն և կինը: Անլուր տանջանքներէ յետոյ յաջողեցաւ Միւէն փախչիլ բանտէն. շատ մը դաղած սպիւններով ազատեցաւ և Միւէի կինը, որին Տատո կը կանչէինք: Աւարի անուեցաւ Երբորի տան մեծ հարստութիւնն, ոչխարն ու տաւարը. փախստական Երբորին հասան իր կին Սուէն, որդին Յակոբ և միւս եղբայր Չազարը: Կազմեցին ամբողջ ընտանիք մը Սասնոյ գագաթին: Չեմ ուզեր այլ ևս սակէ յառաջ տանիլ պատմութիւնը, գրելու համար անկունութիւն է հարկաւոր, կարգալու համար՝ սիրտ է պէտքը:

Թշնամին շատ լու գիտեր, եթէ յարձակում գործէր Երբորի դէմ Սասնոյ բարձրաւանդակների վրայ, պիտի կրկնէր Բարչէնի դերը աւելի լայն ծաւալով, աւելի փառաւոր պատկով... Յաջողեցաւ ձեռք բերել Սասնոյ Գեղաշէն գիւղացի Աւէ անուն դաւաճան մը: Լիբբ մը, որի միջոցով կորոզացաւ Երբորի համար կազմած ծրագիրը իրագործելու: Թունաւորեց Երբորի խմբակը... Հիւանդանալով բոլորն ալ ուժասպառ եղան: փորտիքների կտորները դուրս կը թափուէր. այսպիսի յարմար առիթ այլևս թշնամույ ձեռք կարելի չէր անցնէր... Այդ ժամանակ միայն ութ հայդուկ ունէր Երբոր իր մտ, որոնցմէ մէկ բանին ալ ծանրապէս հիւանդ:

Առաւօտեան լուսարացին Բաղէշէն և Մուշէն յանկարծ հասաւ զօրաց բազմութիւն մը և ուղղակի յարձակում գործեց Ալիէկուզանի մէջ այն տան վրայ, ուր կը գտնուէր Երբորը իր ընտանիքով: Հայդուկները թևեւու տակ ինկած հագիւ կրցան գեղէն դուրս հանել. նա բայելու ուժ ու կարողութիւն չուներ: Տեսաւ թշնամին և անվախ յարձակեցաւ Երբորը կարծես յոգնած խնդրեց իր հաւատարիմ հայդուկներէն. «գրէք ինձ այս բարի առջև իմ վերջին օրն է, և ջանացէք զէմ ձեր կեանքն ազատել. մնաք բարեալ»: Երբ վար գրին, հրացանի խողովակը ծակատին փակցնելով ծանր հառաչանք մը թաւ սրտէն, նրա կինը Սուէն, Մշոյ

երկրորդ կարիէն, կանգնած նրա առջև այս ու այն կողմ կը տարուբերէր՝ կարկառի նման թափուող զնդակները Երբորին չզգալու համար: Երբոր չկրցաւ ոչ մի զնդակ ուղղել զէպի թշնամին. վէրք մը սասցաւ սորին, հասաւ զօրաց բազմութիւնը, դեռ նա կը շնչէր, կտրեցին նրա ազիւ գլուխը, Սուէն մը քանի կաթիլ արցունք թափեց նրա դիակին և հեռացուցին, ինկան հոգ իրար կողքի Երբորի եզրայրներ Միւէն ու Չազարը, որդին Յակոբ և չորս հայդուկներ. միւս չորս հայդուկներ բարձրացան լեռների գագաթներ կուսելով. թշնամին այլ ևս իր նպատակին հասած էր, հայդուկներու ետեւ զնալու պէտք չկար: Մեծ ուրախութեամբ տարին Երբորի գլուխը զէպի Մուշ Սուէի հետ միասին, անկից ալ Բաղէշ:

Անձձը ու նոսր մը այն ձեռքերուն, որ համարձակեցան դաւաճանել ու կարծել այսպիսիներու արևն ու կեանքը: Նոսր մը այն հայուն, որ կը մտածայ այսպիսիներու սրբազան արիւնն: Սուէն Բաղէշի բանտէն ազատ արձակուցաւ: Միւէի կին Տատոն այդ սև ու մութ բուպիւն Երբորի երկամեայ Սասիկ անուն որդին փախցնելով ազատեց ի բաջաբուրսութիւն հայի արեան՝ սուլթանը շատերը պաշտօնով բարձրացուց, մինչև յետին ոտտիկաններուն այ պատուանշաններ տուաւ, հասկցնելու համար թէ, որքան թափեք հայի արիւն, անքան յարգանքի ու պատուի կ'արժանանար: Այլ ևս ինչու թիւրք և քիւրդ հասաւ փութիւնը շթալանէ, չկտորէ ու չպաննէ:

Մտնայ չէր կարէ վրէժ էր պէտքը: Անցան մի բանի ամիսներ. մեր հայդուկ եր դիշեր մը յարձակեցան դաւաճան Աւէի տան վրայ, մտն ներս և մոմերը վառած սկսեցին հարցաքննել: Աւէն անկապ խօսքեր կ'արտասանէր, աւա իր դաւաճանութեան մասնակցող մի բանի հայերու անուններն ալ և լեղուն փակուցաւ: Անցնէն, ապրին այն հայդուկները որ չգիտեն զթալ այսպիսիներու վրայ, այսպիսի բուպիւներու մէջ 30—32 դաշոյնի և զնդակի հարաւանքով ծակտեցին Երբորի դաւաճանի մարմինը, Աւէի աներձագ (կոնջեղայր), որը Ալիէկուզանցի էր և մասնակից այդ դաւաճանութեան, կարծես Ատուած դրկած էր այդ գիշեր հոգ իր արժանի պատիժը կրելու համար: Գործը ժողովրդի սրտին մտ էր և դուրեկան, մի բուպ սրտի հանգստութեան օխ մը բաշեցինք:

Չազարների կտորածներու ժամանակ Ալայի պէյը իր կառավարութիւնը թափեց Ալիէկուզանի, Աղբի, Կոտան և Սեմալ գեղերու վրայ, ցանքերը աւերել տուաւ, տուները կորոպտեց և ժողովուրդը ցիրուցան այս ու այն կողմ սկսաւ փախչիլ: Որպէս զի կարողանայ այդ բոլորը մարտել՝ գիշերային պահապաններ կարգելով հայդուկները ձերբակալելու ետեւ եղաւ. բայց ապարդիւն: Գիշեր մը յիսուն զօրքեր կը պատահին զո՞մ մը, ուր կը գտնուէին մեր հայդուկներից մի քանիսը. կրկին կուրս. երկու զօրք գետին փռուելու պէս, մնացածները կը փախչին և մեր հայդուկները առաջ կ'երթան: Իսուս մը զօրքեր կը պատահին Արտիպանցի (Ալիէկուզանի մէկ թաղ) Պետրոս անուն երիտասարդին, որը նամակ կը տանէր մեր հայդուկներին: Պետրոս կարծելով թէ մերոնք են պատահող զօրքերը, կերթայ զէպի զօրաց խումբը և կը ձերբակալուի: Նամակը կը յաջողի ոչնչացնել. Ալայի պէյը երբ ծանր տանջանքներու տակ չի կրնար սևէ զաղանիք մը կորցել երիտասարդէն, ասորձանակի հարաւած մը կուտայ սրտին. անշնչացած դիակը կիյնայ գետին, զօրաց կը հրամայէ տանիլ գեղէն դուրս և բարերէն վար ձգել. կը կա-



տարեան հրամանը. կէս դիշերին հայերը կերթան գիտակր զաղտնի կերպով թողելու համար և կը զարմանան, երբ կը տեսնեն զեւ կը շնչէ. կը պահեն զաղտնի տան մը մէջ, հրաշքով ահա՛ ողջ է...

Ալայի պէյը ետ դարձաւ, հրաման եղաւ, որ ցիրուցան սասունցիներ բռնութեամբ տեղերնին վերագարձնեն: Ոստիկաններով եկան բորբոքին մերկացած տների ասակ. արդէն կառավարութեան նպատակն է հոն մեղքնել, չքացնել և ո՛չ որ չլսէ նոցա մահուան ազդակը:

Գաւաճան Աւերն յաջորդեց Շէնըբ գիւղացի Սաբու որդի կարապետը, որ իր բերանով խոստովանեցաւ բոլոր մասնութիւնները. թէ և մեր հայդուկները ներքին երկրորդ անգամ չընկելու պայմանաւ, բայց անոնց կողմէ ձերբակալեցաւ նորէն կառավարութեան ուղղակի նամակներուն պատճառաւ. որեւցաւ վերջին վճիռն. Շէնըբի մօտ ձորակի մը մէջ սպանեցաւ:

Սասնոյ քննիչ յանձնաժողովի առջև ընդհանուր հայկական դատին դաւաճանող Ս. կարապետի յայտնի երեք վարդապետներէն՝ կարապետը տերորի ենթարկեցաւ: Տերորիտը իրիկայ ժուլ տիրելու ժամանակ կարապետի սենեակ կը մտնէ. կարապետ կարծելով որ կը մօտենայ ձեռքը համբուրելու համար, ձեռքը երկնցուցած պահուն կուտայ փոխարէն ատրճանակի հարուած մը կրծքին ու դուրս կը թռչի. մէկ երկու ժամ յետոյ նա էլ իջաւ գոտիքը: Տերորիտը ազատ է. թող շատ ապրի, այսպէս ապրի գործերի համար: Աւրան գիւղէն ձերբակալեցին շատերը և զեւ կը մեան բանտի անկիւններ:

Տերորի ենթարկեցաւ խառնուրդի բէյն Բարսեղը, որոյ մասնութիւններու ապացոյցները կը մեան ներսէս վարդապետներուն օրէն ի վեր:

Կարգն եկաւ Սասնոյ կատարածի ժամանակ առաջին դեր խաղացող խալի Ալային, որը խաղցաւ նաև Զբարանքի հրէշաւոր դրաման. առաջնորդեց զորաց Սերորի նահատակութեան օրը. վերջապէս բոլոր հայերը ախ կը բաշէին, երբ սասունցի աշիրէթի պէտ խալի աղա անունը կը արելը: խալի աղան սուլթանէն պատուանշաններ ստացած էր, նա միշտ գործ ունէր կառավարութեան հետ, երրորդական ու չորրորդական ջարդերու ալ առաջնորդելու համար: Աշնան կրկին եկած է Մուշ. մեր հայդուկները արդէն այդպիսի մի բույք կը փնտռէին. երեսունէ բաղկացած հայդուկային խումբը՝ Անդրանիկի, Զբարանքի գիւղապետ Մակարի, Գեորգի, Սեդրակի առաջնորդութեամբ բարձրացած Մառնիկ և Հաւատարիկ գեղերու զազաթները՝ կը սպաննէ: Արագարձաւ խալիը իր ստիկաններով ու ծառաներով, ամբողջը հինգ հոգի են և մի քանի էլ հայեր, որոնք խալի աղայի գոյքեր շալակած կը տանին: Հայդուկները բաժանուած խումբ խումբ արձուի նման որսին կը սպաննէին: Հասաւ խալիը նպատակակտը և արեւցաւ յարձակման նշան. որտացին հայդուկներու վրիժառու զնդակները, ինկան ծառաները, խալի աղան ձիով ուղեց ազատման փորձ մը կատարել, արեւցաւ երկրորդ հարուածը, խալիի ձին ինկաւ, զեւ հետիտան կը փորձէր ճողոպրիլ, հասան հայդուկները և ձերբակալեցին, խոտելու կարողութեան զրկուած էր. յայտնեցին մեր հայդուկները գործած բոլոր շարիքները, առին պատուանշանը, հարուածներով գետին փռեցին զազանք, կարեցին գլուխը և ուրախութեամբ շարունակեցին իրենց ճամբան: Թէև սոսիկան մը ազատուելով հաւարի հասաւ Մուշ, գնացին զօրը, բայց արդէն մեր հերոսները հասած էին նպատակակտը:

Կառավարութիւնը ի հարկէ իր կատաղութիւնը պիտի թափէր անմեղ հայերու վրայ. ձերբակալեցին մի քանի հայեր Մառնիկէն, Հաւատարիկէն, Ալվառնիցէն. սպանեցին քանի մը հայեր, բայց իրենց հաշուոյն նայելով ամբողջ հայերի արիւնն շարժեր խալի մը... խալիներ շատ ու անհամար են, Սերովներ ու Գուրգէններ գտնել շատ դժուար է և դուրջ անկարելի. ուրեմն կրկին վրէժ, կրկին խալիներ են պետք...

Մշոյ մօտիկ Բերդակ գիւղի մէջ գործով պատահած էին մեր հայդուկներէն Արթիւրը և Համբարձումը: Արթիւրն ծանր հիւանդ էր Բերդակցի Պողոս անուն վատ հայը հասկնալով տղաների տեղը, լուր կուտայ զիւր գտնուող ստիկաններուն ու թիրաքներուն, բնելով որ Համբարձումը արդէն մեռած է, Արթիւրը միայնակ ինչ կրնայ բնել. քաջախելած այս խօսքերէն կը յարձակին հայդուկների վրայ: Արթիւրը հազիւ սարի կը կանգնեցնէ Համբարձումը և լսիները կը հազցնէ: Արդէն դուռն ու տանիքը լցւած են: Արթիւրը կարծի պէտ առաջ կը նետուի և հրացանի քանի մը հարուածներով կը ցրէ դրան բազմութիւնը և դուրս կ'ելնեն: Գրնդակները կարծես զիտակցարար կ'ուղղէին դէպի վատերը, Պողոսը կ'իշխայ, ամբոխը կը փախչի և հայդուկները կ'ազատին: Արկին միենոյն գիւղին մէջ աշնան պատահեցան Քիրզ Բարսեղ և Գեորգ յայտնի կուտող երիտասարդը, երկու ընկերներով: Մասնութեամբ Ալայի պէյը հասաւ 70—80 ստիկաններով, զեւ շորս ժամ կար արեւամտին: Մեր հայդուկները չգիտեն շփոթիլ, չգիտեն զնդակների ազդեցութեան տակ ընկճիլ. գեղէն դուրս եկան և սիւսեց կոխը. այդպէս բարձրացան մինչև բլրակի զազաթը. հոն մտած զիրքերու մէջ սկսեցին երգել պարելու կանչել. «ո՞վ է Ալայի պէյը թող գայ յառաջ». ոչ որ չի համարձակիր մօտենալ: Ալայի պէյի մօտէն կանցնին մի քանի զնդակներ. թաւազը ձիէն վար ինկաւ և փախաւ Բերդակ, ստիկանի մը ձին զարնեցաւ միայն և ահա սկսեց փախուստն ու իրարանցուցաւ թէև քաջերը ազատ շարունակեցին իրենց ճամբան, բայց Ալայի պէյը պարտաւոր էր այդ անպատուութեան վրէժն լուծել. պարզ է, որ հայ գիւղացին պէտք է ենթարկէր այդ վատհոգիներու զազանութեանց. Բերդակը կրկին ցիրուցան եղաւ, կրկին աւարի տունեցաւ:

Առն է, ձմեռն հասած էր. մեր ընկերները բարձրացան դէպի Սասուն, պատահեցան Սասնոյ Ըուշնամերի գիւղը: խալի աղայի եղբոր որդին իրբահիմբ պայմանաւորուած էր երեսուն հայի գլուխ տանիլ խալիին կնոջ ցեղապետութեան իրաւունքը ստանալու համար: 40—50-է բաղկացած սպա-տակային խումբ մը հետն առնելով կը հասնի Ըուշնամերիկի վրայ, կարծես Ասուած կանխագիտութեամբ մը մեր հայդուկները հոն զրկուած էր, անոնց կեանքը փրկելու համար: Նրանք խումբ խումբ տուներու ու գոմերու մէջ բաժանուած էին: Ի պրահիմն ալ խմբակներու բաժնելով իր սպասակները կը զրկէ այս ու այն գոմի կամ տան վրայ: Ար պատահին գոմ մը, ուր մեր հայդուկներէն կը գտնուէին գիւղապետ Մակար, Սեդրակ, Արթիւր և Անտրան: Առաւտեան լուսարացին է, սասունցիի վառարանի աղօտ լոյսը կը պլպլայ. դուռը կը բացուի, տղերքը կարծելով թէ գիւղացիներ են, անհոգ կը շարունակեն իրենց ընկերական զրոյցները: Արթիւր կը հարցնէ «ո՞վ էք», փոխանակ պատասխանի կը տեսնեն փուշ մը հրացանի բերան ուղղած դէպի իրենք. այլ ևս ժամանակ չեն ունենար իրենց հրացանները վերցնելու, դաշոյները քաշած դուռն մէջ կը հասնին բրդաց:



Արթիւնը մէջբեր զարնած դռան կը բաժնէ շոր քրդեր և թեւերու մէջ առած կը բշէ ընկերաց առջև. Մակար և Սեդրակ անձնաձայն ճարտարութեամբ դեմին կը փռեն իրենց բաժին ընկածները, Արթիւն ու Անտրոնն ալ իրենց բաժինը բաշխելով գոմի մուտք անկիւններ կարծես կուզեն միայնակ լափել. բարձրացան գէպի վեր ու իջան մի քանի անգամ մեր հայդեան անշնչացած ինկան: Միայն Մակարը վզէն ծանր վէտը մը կը ստանայ, բայց այդպիսի հարւածներով ընկճիլը մեր քաջերին անօթ կը համարի. հրացանները վերցրած գուրս կը թռչին, կը տեսնեն քրդաց բազմութիւնը, կըսկսի կռիւր, կը համախմբին տղիքը, քրդերը սարսափահար կը փախչին: Բայց մինչև հայդուկների գուրս գալը արդէն շատ մը տուններ ու գոյքեր կ'այրեն, կըսպանեն երկու հայեր ու կը փախչին:

Յեղափոխականների հրացաններուն արձագանք կուտան անմիջապէս Շէնքը, Սէմայ, Կէլիէկուզան գեղերու անկանոն հրացաններու որոտները: Կը հասնին Հուշնամերկ և տեղւոյ բնակիչները առած կը տանն պատասպարելու իրենց աղքատ ու շքաւոր տուններու մէջ: Վ իճակակիցները միայն գիտեն զթալ իրար վրայ, մեր հարուստներու շատ հոգն է մտածել մի բոլակ աղքատիկի կենաց վրայ և մտնել նոր գրութեան մէջ գէթ երևակայութեամբ:

\* \* \*

Չմեռն անցաւ, հասաւ գարունը: Կառավարութիւնը Հածի Զաֆար անուն հարիւրապետ մը երեսուն սասիկանով դրկեր է Սասուն, կը մեան Գարբը բուած գիւղը, կարծես սասունցիի քայլերու լրտեսները լինէին: Օր մը Սէմայ գիւղ պատահելով կը ձեռնարկուի երկու հայեր և կուզեն տանիլ գէպի Մուշ. շէնքըքիբ և սեմայիք միացած յարձակում կը գործեն, կը խնն հայերը ձեռքերէն, երբ հրացանի ձայնը կը լսին, առանց ետև նայելու կը փախչին:

Ապրիլի վերջերն ենք: Ահա կրկին Բերդակ գիւղ, կրկին ընդհարում: Մեր հայդուկներէն ծանօթ Գեորքը, Գալէն, Ակէն, Սիմոն և Արամ, հազիւ ծամբու յոգնածութենէն հանգստացած էին բերդակցի Գասբարի տան մէջ, արևածագին խուճ մը ձիաւոր սասիկաններ կը հասնին գիւղ: Սովորական բան է տուններ մտնել, իրենց ձեռքով հաւ ու ուտեստ տանել, ձիերին դարի կերցնել, թէկուզ ժամանակն ալ եղած չլինի: Կը մտնեն Գասպարի տունն էլ և կը տեսնեն մեր քաջերը, շուտով գուրը գնելով կը դառնան միւս ընկերներուն լուր տալու: Հայդուկները պատրաստ գուրս կը թռչին և գրեթէ պաշարման գիծը հազիւ ձեղքելով կը բարձրանան գէպի Տիրակատար: Մուշ մտնիլ լինելով կը հասնի հազարէ աւելի բազմութիւն մը, կանոնաւոր զօրք, բաշխողուկ, բոլորն ալ կանոնաւոր գէնքերով գինեալ, բայց մեր հայդուկները անօրինակ բաշխութեամբ կուենլով Առաքելոց վանքի Ասուածածնայ ձորակէն կը բարձրանան Տիրակատարի հսկայ կողերու վրայ. երբ թշնամին կըսկսի մատնալ՝ կարիճներէն մի քանիսը իրենց գիրքերէն կը կուլին և միւսները կը բարձրանան նոր գիւղ բռնելու. քիւրդ աշիրէթներն ալ կը հասնին և շորս կողմէ զնդակներ կը տեղան: Մեր ընկերներէն միայն Գալէի թեւը կը վիրաւորի թեթեւ կերպով. կ'իյնան թշնամու կողմէ երկու քրդեր և սասիկան մ'ալ ծանրապէս վիրաւոր: Հայդուկներու յաջող քայլերից զօրքն ու ամբողջ յուսահատ այլ ևս չէին յառաջեր, ոմանք

հրացանները բարեբուն զարնելով կը ջախջախէին: Ամբողջ տաս ժամուայ կուից յետոյ թշնամին ամօթահար և տարտամ բայլերով դարձաւ գէպի Մուշ, իսկ մեր ընկերները քաջութեան հրաշալիք մը թողլով անցան գէպի Կորեկ Աղբիւր: Այդ վրէժն ալ խաղաղ գիւղացիներէն պէտք էր լուծել: Ընդհարումէն մէկ օր յետոյ ծանրապէս վիրաւոր ինկան երկու մասնիկցի հայեր. սասիկաններ երթալով վիրաւորեալները բերին Մուշ և ձերբակալեցին, ըսելով որ «երէկ գուր էլ ֆեդայիներու հետ կուեր ու վիրաւորուեր էք»:

Ահա տաճիկական պոռնկացած արգարութիւնը:

Այս պահուս լսեցի, որ շորս հարիւր զօրք բարձրացաւ Սասուն, կուսակալն ալ պիտի երթայ: Լսեցի նաև քոսն հայեր կողպուած են Սիմ սարի գագաթը, երկուս ալ սպանուած, այս լուրը վերապահութեամբ կը հաղորդեմ:

Կան շատ մը ընդհարումներ, որոնց մանրամասն նկարագրութիւնը թողնենք սպազային, միայն գլխաւոր անցքերը յիշատակելով: Ընդհանուր ակնարկ մը բրինք կողմերիս երկամայ գրութեան վրայ: Ահա այս է մեր ներկայ վիճակը. կը շարունակի այժմ աւելի կատաղութեամբ, գուցէ շուտով լսէք նորանոր պատահարներու նկարագրութիւնները. այսպիսի ծանր ու աղէտաբեր վիճակի մը վրայ ուշադրութիւն դարձնելը կը յանձնենք ընթերցողների և բոլոր հայերի խղճին և սրտի զգայնութեան:

Մուսացայ յիշել, որ Սեբրոի նահատակութեան օրը սպանուեցաւ Տ. Քաջ բահանան և Սարգիս անուն հայ մը. գիւղը ցիրուցան հզաւ: Սէմայի Մարտիրոս անուն երիտասարդը ծեծի ներքև մեռուցին:

Ն Ր Ա Յ Ր (ՈՒՐՈՒԱԿԱՆ)

Պ Ա Տ Մ Ա Փ Ի Լ Ի Ս Ս Փ Ա Յ Ա Կ Ա Ն

Լ Ա Վ Բ Օ Վ Ի Պ Ա Տ Մ Ա Փ Ի Լ Ի Ս Ս Փ Ա Յ Ո Ւ Թ Ի Ի Ե Ը

IV

Ա Ն Հ Ա Տ Ը Պ Ա Տ Մ Ո Ւ Թ Ե Ա Ն Մ Է Զ

III

Անգիսական երկու ուղղութիւն պատմագրութեան մէջ.— Գիսակցող անճաններ որսիւս կամային սպառանքեր.— Կարէւ և Միխայիլովսի անճանի մտօնք.— Քննադատող անճանաւորութեան դեր պատմական արքեր դարաւրջաններում.— Շրջապատից լիովին գոն քննադատող անճանաւորութիւն պատմաիրական անկարելիութիւն է.— Պատմական ուրիշ դրօշբիւն.— Օրինակ.— Երոզող դրօշբիւն եւս.— Անճանի դեր.— Ներքին եւսի գիսակցութիւն պատմական առաջընթացումի մէջ.— Բարոյական պատմախնամաւորութեան զգացումը.—

Ուղեցոյց ունենալով իր զարգացած և հիմնաւորած մեթօղը, վերստուգման ենթարկելով պատմութեան փաստային բովանդակութիւնը այդ մեթօղի համեմատ, յենւելով փիլիսոփայական և անարօպօլօգիական ըմբռնու-



ղութիւններից հանած հետեւանքների վրայ, օգտագործելով բարոյագիտական իր ամբողջական ուսումը, — որոնց բոլորի մասին դժբախտաբար առանձին խօսելու հնարաւորութիւն չունինք — Լավրովը անհատի, աւելի ձիշտ՝ բնագատող անհատի դերն է ուզում լուսաբանել Եթէ նա առաջ, ինչպէս տեսանք նախանցեալ թուում, մօտեցել է անհատի պրօբլէմին սոսկ ֆօրմէլփիլիսոփայական տեսակէտից, ապա նա այժմ հետազօտում է անհատի խնդիրը պատմական անցագարձումի տեսակէտից:

Արջին ժամանակներում, մասնանշում է Լավրովի պատմագիտութեան մէջ տարացած է ուշագրաւ մի վէճ. ոմանց գրեւծքներում խոշոր անձնաւորութիւնների և նրանց անհատական մղումների հարցը այնքան գերակշիռ տեղ է գրաւում, որ պատմական եղելութիւնների կոլլեկտիվ (հաւաքական) բնոյթը վարագոյրի ետեւ է մնում ամբողջովին: Աւելի նոր ժամանակներում առաջ է եկել հակառակ ծայրայեղութիւնը. որոշ կարգի երկերում անձնաւորութիւնները ցուցադրում են, որպէս սուած դարեջրջանի հաւաքական պահանջների և դրողութիւնների հետեւանք. դրանք հանդէս են բերում, որպէս հաւաքական յոյզերի, շահերի, հաւատարմութիւնների և համոզումների սոսկական ներկայացուցիչներ: Այդ երկու ուղղութիւնը ևս պատմականօրէն բացատրելի են, բայց թէ՛ մէկը և թէ՛ միւսը գիտական պահանջին գոհացում առ չեն կարող, որովհետեւ երկուսն էլ գիտականօրէն անթոյլատրելի չափազանցումի մէջ են: Անգիտական է՝ պատմական առաջընթացումի մէջ միայն անձնական փոփոխութիւնների (յոյզերի) և շահերի, անձնական ըմբռնողութեան և ստեղծագործող ուժի խմբակցումները տեսնել, պատմական հերոսների բացարձակ ոյժը ընդունել: Բայց նոյնքան ևս անգիտական է՝ պատմական պրօբլէմը դիտել որպէս դիմագուրդ մի շարժում:

Այդ միակողմանիութիւնները վերացնում է Լավրով նրանով, որ պատմական պրօբլէմի երկու կողմն էլ առնում է գիտական իր օպերատիօնի մէջ, աշխատելով ամեն մէկին իր իսկական տեղը յատկացնել: Պատմական եղելութիւնների բէէլ տարրերի վրայ մասնանշելով և ցոյց տալով մղումների այն իրական աղբիւրները, որոնք այդ իսկ տարրերին գործունէութեան են հրում, Լավրովի այդպիսով է, որ ըմբռնելի է դարձնում պատմական ամբողջական անցուդարձումը:

Որո՞նք են այդ բէէլ տարրերը:

Հասարակական գործառնութեան մէջ, պատմական շարժման ընթացքում, պատմական տարբեր դարաշրջաններում առհասարակ իրական են միայն անհատները, պատասխանում է Լավրովի Այդ անհատների աւել կամ պակաս թւի մէջ է, որ մարմնանում է հաւաքական սովորութիւնները, յոյզերը, շահերը և համոզումները: Այդ իսկ տեսակէտից կարելի է պնդել, որ

Հասարակագիտական և ընդհանրապէս պատմական բոլոր երևոյթները տեղի ունին բացարձակ անձնաւորութիւնների միջոցով: Դրանք են ստեղծում հասարակութիւնը համերաշխութեան զանազանակերպ ձևերով և մտքի հետեւանքներով: Դրանք են մշակողը կուլտուրայի նոր ձևերի և խորտակողը հերթի Պատմական պրօբլէմի իրական կատարողները եղել են, կը լինեն և կարող են լինել միմիայն անձնաւորութիւնները՝ իրենց այլազանութիւններով:

Գիտական իրողութիւն է—աւելացնում է ուսու փիլիսոփան—որ պատմութեան մէջ մենք անմիջականօրէն տեսնում ենք միայն մարդ-անհատներին, որոնք պատմութեան «կամային ապարատներն» են, բոլոր հասարակական, կուլտուրական ձևերի իրական տարրերը, մտքի բովանդակ աշխատանքի իրական աղբիւրը: Այդ «կամային ապարատներն», այդ գիտակցական անհատների ինքնիշխանութիւնը ենթակայօրէն անմերժելի է, առարկայօրէն անիմաստ՝ այդ մերժումը:

Մի բանի նշանաւոր սողեր, որոնք ուսական պատմափիլիսոփայական գրականութեան մէջ վաղուց այսպէս անուանած «թեւաւոր խօսքերն» կարգն են անցել, Լավրովի գրչին չեն պատկանում. բայց Լավրովի պատմափիլիսոփայական ոգուն չէինք հակասի, եթէ այստեղ բերենք այդ սողերը, որպէս նրա իսկ գրածը. և այդ՝ այնքան աւելի մեծ իրաւունքով, որ այդ սողերի երկու հեղինակներն ևս ենթակայական մեթօդի ուսական յայտնի երրեակին են պատկանում:

Ն. Կարէկ պատմափիլիսոփայական իր գրեւծքներից մէկի մէջ ասում է մի տեղ. «Ամեն ինչ, որ գոյութիւն ունի առհասարակ, գոյութիւն ունի մարդկային անհատի համար, նրա միջոցով և նրա մէջ: Սօցիալական կեանքի բոլոր ձևերը այլ բան չեն, եթէ ոչ մարդկային յարաբերութիւնների տարբեր սխտեմներ, Հոգեկան կեանքի բոլոր երևոյթները այլ բան չեն, բայց եթէ մարդկային անհատականութիւնների տարբեր պայմաններ... Անհատը այն բէէլ էակն է, որի միջոցով, որի մէջ և որի համար պետութիւնը, տնտեսութիւնը, հասարակական կեանքը, իրաւունքը, փիլիսոփայութիւնը, մօրալը, կրօնը, գիտութիւնը, գրականութիւնը, գեղարւեստը գոյութիւն ունին. նա՛ է կրկին այն կենտրոնը, որի միջոցով և որի համար դրանք բոլորը իրար հետ կապակցում են... Ըստ ինքեան՝ ո՛չ ազգեր կան, ո՛չ պետութիւններ, ո՛չ էլ նման ուրիշ հիմնարկութիւններ. ո՛չ իրաւունք, ո՛չ կրօն, ո՛չ փիլիսոփայութիւն, ո՛չ մօրալ, ո՛չ գիտութիւն, ո՛չ գեղարւեստ, ո՛չ բաղաբակրթութիւն: Գրանք ոչ կարող են մասծել, ոչ զգալ, ոչ կամենալ, ոչ մի որոշում կազմել, ոչ էլ իրենց շրջանում տեղի ունեցող փոփոխութիւնները նկատել զգացող, մտածող և կամեցող անհատն է միայն, որ վճռում է գործել, գործում է և իր գործողութիւնների ազդեցութեանը ենթարկում»:



Անհատի պրօբլեմի պատմափիլիսոփայական այս խնդիրը առաջադրուած էր (անհատապաշտ) ըմբռնուած արտայայտուած է նաև հոշակաւոր երրեակի տաղանդաւոր ներկայացուցիչներին միւսը—Միխայիլովսկի Համարեա նման հնչիւնները. «Բոլոր մտաւոր, բոլոր հոգեկան պրօբլեմները կատարուած են անձնաւորութեան մէջ,—և միայն նրա մէջ, ասում է նա Միայն նա է զգում, մտածում, տանջում, վայելում... Ամեն մի հասարակական կապակցութիւն, ինչ բարձր կամ կանխակալ-համակրական անուններ էլ դրանք կրելու լինին, միմիայն յարաբերական արժէք ունին՝ նրանք մեզ համար թանկ պիտի լինին այն չափով, ինչ չափով դրանք անձնաւորութեան զարգացմանն են նպաստում, նրա տանջանքները պաշտպանում, նրա հաճոյքների շքրջանն ընդարձակում»:

Մեր ներկայ նպատակից դուրս է զբաղւել այն խնդրով, թէ Լավրով, Կարէև ու Միխայիլովսկի անհատի գերի ըմբռնման իրենց գիրքերում ինչ ազդու մեքեր և փոխազդումներ են ստացել իրարից, թէ ինչ պատմական կամ տրամաբանական յաջորդականութիւն կայ դրանց պատմափիլիսոփայական մտքերի միջև: Մեզ համար առաջում կարևորն է շեշտել, որ ականաւոր սուբեկտիվիստները—Կարէև և Միխայիլովսկի—փիլիսոփայական և հասարակագիտական դաստիարակութեան նոյն հողի վրայ գտնւելով ինչպէս Լավրովը, իրենց մէջ բերւած տողերում խտացրել են այն մտքերը, որոնք արտայայտուել են Լավրովի բազմաթիւ գրւածքների մէջ այնքան յամուրէն և հետևողականօրէն:

Երկու առաջինների մտքերը միանգամայն ծածկուած են Լավրովի ունեցած հայեացքներով՝ նոյն պրօբլեմի վրայ: Մեր մտածողի համար ևս, անձնաւորութիւնը միակ իրական գործողն է պատմութեան մէջ: Նա է պատմական պրօբլեմի կրողը, նրա համար և նրա միջոցով է կատարուած այդ պրօբլեմը:

Բայց պէտք է արգելք ընդունել, որ անհատների գերը նոյնն է տարբեր դարաշրջաններում: Պէտք է արգելք ենթադրել, որ անհատների մտքի և կամքի գերը ամեն ժամանակ նոյն ոյժով և նոյն ձևերով է, որ կարող են հանդէս գալ:

Ամենևին՝ ու Լավրով առաջ է քաշում նախ տրամաբանական մի հնարաւորութիւն, ապա երկու տարբեր և իրական գրութիւններ:

Կայ մի դէպք, շեշտում է նա, երբ մտածող մարդանհատի պատմական գերը զերօյի կարող է հաւասարուել: Դա այն գրութիւնն է, երբ ճշմարտութեան և արդարութեան մասին ունեցած քննադատող անհատի համոզումներին կատարելապէս համապատասխանում են հասարակական այն ձևերը, որոնց մէջ նա ապրում է: Այն ժամանակ մտածող անհատի գերը նոյնն է, ինչ որ տասնեակ հազարաւոր շատածող անհատներին: Պատմութեան ալիքները իրենց յորձանքի մէջ են աւնում

նրան, միւս տասնեակ հազարների հետ միասին, և բշոււ, առանց նրանց հաշիւ տալու, առանց նրանցից հաշիւ պահանջելու՝ ուր, ինչո՞ւ, ինչպէ՞ս...

Բայց սա շեխերազագէ հէքիւթն է, աւելացնում է իսկոյն Լավրով: Որտե՞ղ և ե՞րբ են հասարակական բոլոր ձևերը գիտակցութեան և արդարութեան բոլոր պահանջները լիովին գոհացումն ստացել, ե՞րբ, ո՞րտեղ են անհատները իրենց շուրջը միայն բարիքներ, ամեն տեղ միայն բարօրութիւն, միշտ հաճոյք ունեցել: Այն ժամանակ իրօք անհատը քննադատօրէն շատ բան չէր կարող մտածել. նա կը լինէր՝ կամ միանգամայն անուշադիր դէպի շրջապատը և կամ բարոյական կարճատես: Նրան կը պակսէր ոյժ կամ վճռականութիւն՝ քննադատող-մտածող անձնաւորութիւն դառնալու համար:

Եւ սակայն պատմական շրջաններում մեք տեսնում ենք քննադատօրէն մտածող անհատներ. դրանց վիճակը պատմական պրօբլեմի վիճակն է: Առանց քննադատօրէն մտածող այդ անհատների՝ ոչ մի պրօգրէս, առանց պրօգրէսի, որ կրկին անհատների քննադատական գործունէութեան արդիւնքն է՝ ոչ մի մարդկային անձնաւորութիւն: Ով քննադատօրէն մտածում է, ոչ թէ գոյութիւն ունեցող բարիքը գիտելով է հաճոյք ստանում, ոչ թէ այդ հաճոյքն է որոնում, այլ այն սահմանը, որ վերջանում է այդ բարիքը և ուր չարիքն է սկսւում՝ որպէս պրօգրէսի հակադրութիւն, որպէս աններդաշնակութիւն, որպէս դուստին: Հեզ կինը, գուրգուրալի երեխաները, ապահով կեանքը և պատուաւոր պաշտօնը, անխարդախ հաշիւները և անարատ խիղճը, հսկայական էրուզիցիան և գիտնականի հոշակը, անվիճելի տաղանդը, գեղարւեստագէտի լաւ վարձատրութիւնը—սրանք բոլորը գեղեցիկ են, բոլորն էլ բարիքներ են. բայց բոլորն էլ մարդկային կուլտուրական կեանքի սոսկ մեխանիզմն են կազմում: Այս բազմազան կարիքները եթէ ամբողջովին մարդկանց բոււրարէին, եթէ ուրիշ պահանջներ ևս չ'առաջանային, այն ժամանակ մարդ իր ամբողջ կեանքը կանցներ անմարդկային ձևով: Նա կը մնար որպէս դատող մըջիւն: Մարդկային մըջիւնանոցը մարդկանց հասարակութիւն գարձնելու համար, հարկաւոր է եղել քննադատութիւն: Հարկաւոր է եղել վրդովել խաղաղ անկիւնների հանգիստը, դուստինը, տիրող բարիքների աշխարհը: Դա բերել է իր հետ միայն մտածող-քննադատող մարդ անհատը, գիտակցող ոչկամային ապարատը: Քննադատող միտքը ծայր է տալիս նախ մէկի գանկի մէջ, ապա հետզհետէ ուռճանում, ընդգրկում է սեղմ խմբումներին, այդտեղից աւելի և աւելի տարածուելով ճարակում ընդարձակ շրջաններ: Կուլտուրայի տիրող ձևերը կորցնում են իրենց արժէքը քննադատող անհատների աչքում. սկսւում է ստեղծագործական աշխատանքը նոր ձևերի համար. մէկը միւսի ետևից փոխում ու թափւում են կուլտուրայի հնացած մասերը, կառուց-



ւում են նորերը, և այսպէս անվերջ... Այս բոլորը պատկանում են նպատակների և միջոցների այն «սուբեկտիվ վերնաշէնքին» մերենայական և բիւրօգրիական աշխարհի վրայ կառուցած, որ չհակասելով տիեզերական կանոններին, սակայն և այնպէս իր ուրոյն բնոյթը, ստորագելիներն ունի: Այդպէս է եղել միշտ, սկսած այն անյիշելի ժամանակներից, երբ տիեզերական էւօլիցիոն Տոսեց դէպի մարդու գանկը, տիրեց նրա գիտակցութեան. երբ մարդ-վայրենին դարձաւ պատմական մարդ-անհատ: Այդպէս է այժմ: Զկայ մի ժամամանակաշրջան այն վայրկեանից սկսած — երբ պատմութիւնից դուրս մնացած մարդկութիւնը պատմական պրօցէսի մէջ մտաւ — չկայ մի շրջան, ուր բնագոտող մարդը միանգամայն գոհ լինէր իր շրջապատից: Իսկ բնագոտող անձնաւորութիւններ եղել են պատմական բոլոր շրջաններում, մի տեղ աւելի՝ թւով, մի այլ տեղ նւազ՝ մի տեղ մեծ ոյժով, մի այլ տեղ՝ փոքր: Մինչայժմայ պատմութեան մէջ տիրող հասարակական ձևերից լիովին գոհ քննադատող բոլոր անհատների գոյութիւնը գուցէ տրամաբանական կարելիութիւն է, բայց ոչ պատմական իրողութիւն, այդ պատճառով էլ անարժէք՝ պատմափիլիսոփայական ըմբռնողութեան համար, երբ հարցը վերաբերում է պատմութեան ուշալ, իրական կրօնին:

Բայց կայ ուրիշ դրութիւն: Այս դէպքում տնտեսական և քաղաքական պայմանները հասարակական կեանքում հանգէս են գալիս շատ որոշ կերպով կեանքի և մտքի խնդիրները, շահերի շփումները, համոզումների խմբակցութիւնները և տիրող սովորութիւնների ազդեցութիւնները զուգորդում են այնպիսի բացորոշ դետերմինիզմով (կանխորոշումով), իրաւ յաջորդող դէպքերը այնքան անխուսափելի կերպով են ծագում իրարից, որ պատմական պրօցէսի ամբողջ ընթացքը ասես ավտօմատ, մերենական բնոյթ է առնուով: Այստեղ բնագոտական անձնաւորութիւնների դերը միայն նրանում է, որ աւելի և աւելի որոշ կերպով, աւելի և աւելի ուժեղ գիտակցութեամբ այն իսկ ճանապարհին հետևին, որով ամբողջ հասարակութիւնն է գնում: Այս դէպքում է, որ պատմաբան-մտածողը որոշ չափով իրաւունք է ստանում պնդելու, որ դէպքերը իրենց ընդունած ընթացքը կըստանային նոյնիսկ այն պարագային, եթէ չլինէին նրանց գլուխ կանգնած խոշոր անհատները, կամ եթէ նրանց տեղ ուրիշները կանգնէին: Եթէ պէտք լինի՝ կարելի է մասնանշել, օրինակ, XVIII դարու երկրորդ կէսի վրայ, երբ քաղաքական ու տնտեսական պատմութեան ընդհանուր բնոյթը Եւրոպայում պայմանաւորւած էր պատմական հոսանքներով, անկախ այն անհատներից, որոնք մասնակցութիւն ունէին այդ ժամանակաշրջանի պատմութեան մէջ:

Կայ և միւս դրութիւնը: Քաղաքական և տնտեսական պայմանները այս անգամ իրենք իրենց չեն ցոյց

տալիս հասարակութեան մեծ դժւարութիւններից դուրս գալու ճանապարհը. այդ պայմանները դեռ խիստ որոշւած ձևեր չեն ստացել: Հասարակութիւնը իր ամբողջի մէջ դեռ քիչ է պատրաստուած: Կենսական խնդիրները նախ քան իրենց որոշ դիմագծերով հասարակութեան առաջ հանդէս հանդէս գալը, պէտք է մարմնանան դեռ գաղափարների մէջ, որոնք առաջանում են և գործ դառնում անհատների ձեռքով: Այդ գաղափարների ներկայացուցիչները դառնում են պատմական պրօցէսի անհրաժեշտ օրգանները: Նման դէպքերում պատմական անձնաւորութիւնների առաքինութիւններն ու արատները, նրանց առանձնապատկութիւնները, որոնք տւած է պոխայի պատմական եղելութիւնների ցանցի հանգոյցներն են կազմում, պատմաբանի աչքում ստանում են աւելի կամ պակաս նշանակութիւն: Այլևս անկարելի է այդ տարրերը դուրս ձգել պատմական կօմբինացիայից, առանց պատմական պրօցէսի ամբողջական ըմբռնողութիւնը վտանգելու:

Համոզում են երի թափը և կամքի էներգիան դառնում են այլ ևս պատմական ոյժեր — ստում է լավբով բառացի, ոյժեր, սակայն, որոնք անձնաւորութիւնների մէջ են բիւրեղացած: Այդ կարողութեան և այդ էներգիայի անունով պատմութիւնը դառնում է նրանց, ժամանակակիցները խոնարհում են նրանց առաջ կամ նզովքի տալիս ամենքին: Նրանց առաջ է կրկին, որ իրենց հասարակական պատմականութիւնն են իրենց կեանքի ընդհանուր նպատակն է ծառանում:

Բայց այս երկու դէպքերում ևս մի կարևոր նկատառումն ուրբեկով տարբերին տալիս է աւելի մեծ դեր: Դա այն է, թէ կամովին կամ ակամայ պատմական կեանքին մասնակցող անձերը ի՞նչպէս են նայում իրենց այդ մասնակցութեան վրայ: Նրանք, այդ անձնաւորութիւնները, որ հասարակական և պատմական կեանքի միակ իրական գործողներն են, չեն արդեօք մտածում, որ իրենց կամքի այս կամ այն գործողութեամբ կարող են այս կամ ուղղութիւնը տալ պատմութեան ընթացքին. չեն մտածում, որ իրենց վրայ այս կամ այն չափով ծանրացած է պատասխանատուութիւնը՝ թէ՛ այն բոլորի համար, ինչ պատարակելի է և թէ՛ այն բոլորի համար, ինչ մեծ և գովելի է եղել ժամանակակից դէպքերի մէջ:

Անշուշտ Եւ այդ այն պատճառով, որ պատմական պրօցէսի մէջ գործող անձնաւորութիւնը շարժում է նպատակների և միջոցների աշխարհում և ոչ միայն տիեզերական դետերմինիզմի Նա ունի հօգեկան «Ես» զիտակցութիւնը: Նա գիտէ, որ այդ Եւը հետապնդում է իր նպատակներին, ընտրում է իր միջոցները: Դետերմինիզմի մետաֆիզիկական աստուր այդպիսով նրա գործունէութեան համար կորցնում է իր արժէքը այն ձևի մէջ, ինչ ձևի մէջ նա է այդ դետեր-



մինչդեռ գիտակցում է Նրանք, այդ անձնաւորութիւնները, իրենց համար կամային ապարատներ, գործիքներ են: Այդ կամային ապարատներից դուրս՝ պատմութեան մէջ ոչինչ տեղի ունենալ չի կարող: Այս բոլորը գիտակցում է պատմութեան մէջ անմիջօրէն մասնակից անհատը: Եւ որքան աւելի խորն է այդ գիտակցութիւնը, այնքան ևս բուռն է նրա խաղաղացած դերը պատմութեան մէջ:

Իր ընդհանուր փիլիսոփայական աշխարհայեացքի հետ խորին ներդաշնակութեամբ ձուլած այս գիտողութիւններից յետոյ, դրանցից անմիջապէս ծագող այն անխուսափելի երևոյթի վրայ է մասնանշում Լավրովը, որ անհատը իրեն զգում ու ճանաչում է բարոյապէս - պատասխանատու. նա հաճոյք է զգում իր այն գործողութիւններից, որոնց մէջ նա իր դերն ու ծառայութիւնն է տեսնում Պարտականութիւնների բարոյական աշխարհն է բացում նրա առջև. նախ՝ պարտականութիւն իր կամքի դիմաց, որ թելադրում է նրան անել այն, ինչ նա վճռել է. ապա՝ պարտականութիւն իր ըմբռնողութեան առաջ, որ պահանջում է նրանից ճշմարիտ համարել միայն այն, ինչ որ այդ ըմբռնողութեան քննադատութեանը դիմանալ կարող է: Այս երկու պարտականութիւնների հողի վրայ ծագում են յետագայ թեօրիական և գործնական պարտականութիւնները, որոնցից մէկի համեմատ կազմում և ձևաւորում են հասարակական և անհատական իդէալները, միւսի համեմատ առաջանում է կոիւր՝ այդ իդէալների համար:

Ս Ն Ա Ր

Հ Ա Ս Ա Ր Ա Կ Ա Գ Ի Ի Տ Ա Կ Ա Ն

Ժ Ա Ն Ժ Ա Կ Ռ Ռ Ռ Ս Ս Օ

(ՄՆՆԻՄԱՆ 200-ԱՄՆԱԿԻ ԱՌԻՔՈՎ)

IV

Դաստիարակչական իդէալը

Վերանորոգութեան և երջանկութեան ամենաապահով և ամենահաստատ միջոցը բնական վիճակն է՝ «Բայց մարդկային բնութիւնը չի կարող յետ դառնալ» — ասում է Ռուսսօն: Նա գիտէ, որ հասարակական կարգը չի ոչնչանայ, չի լուծւի այսուհետև: Ի՞նչ անել այսպիսի պիսի պայմաններում: Թողնել, որ մարդկութիւնը առաջանայ իր մոլորութիւնների, իր շարիքների, իր դժբախտութեան մէջ: Թողնել, որ նա հետզհետէ աւելի ու աւելի հեռանայ բնական վիճակից: Ո՛չ, Պատաստել, անկեղ հասարակական մարդու մէջ բնական մարդը: Մօտեցնել նրան ազատ ու բարի բնութեան: Այսպէս

պէտք է հասկանալ նրա համաբաւար կողմը՝ «Դէպի բնութիւն»: Այս է իմաստը այդ պատմական նշանախօսքի:

Ի՞նչպէս կարելի է դադարեցնել սկսած շարիքը և ի՞նչպէս կարելի է մօտենալ բնութեան: Անհատի վերակազմութեամբ, ընտանիքի վերակազմութեամբ, հասարակութեան վերակազմութեամբ: Ահա ժան-ժակ Ռուսսօի պատասխանը, ահա նրա իդէալը միաժամանակ «Էմիլ»-ի մէջ նա դրել է անհատական և առհասարակ մարդու վերանորոգութեան պրօբլեմը: «Նոր էլիտը»-ի մէջ քննել է ընտանիքի վերակազմութեան հարցը: «Ընկերային դաշինք»-ով մասնանշել է հասարակութեան վերածնունդը: Իրենց իդէալներով, սկզբունքներով և հիմնական տեսութիւններով այդ երեք աշխատութիւններն էլ միանում են և կազմում մի ամբողջական աշխարհայեացք, մի սիստեմ:

«Էմիլը», որ յետագայում այնպիսի հռչակ ունեցաւ, որ նորագոյն մանկավարժութեան աղբիւրը դարձաւ — իր առաջին հրատարակութեան ժամանակ դժբախտ ձակատագրի ենթարկեց: Գրանսիական կառավարութեան հրամանով այրեց և Պարիզի արքեպիսկոպոսը բանադրեց այն: Միայն տեսութիւնը և կղերականութիւնը միացան հալածելու համար մի գրւածք, որ Վիկտոր Կուզենի ասելով պարունակում էր Ռուսսօի մտքի և սրտի յաւագոյն հաւածը: Դաստիարակչական և մանկավարժական աշխատութիւնների շարքում «Էմիլը» բացառիկ տեղ ունի: Նա մի դարագլուխ է, մի արգասաւոր ու բեղմնաւոր դարագլուխ, որից սկիզբն են առնում 19-րդ դարի մանկավարժական մեծագոյն գործերը:

Այդ գրւածքի մէջ ժընեյի փիլիսոփայ-մանկավարժը նախ և առաջ մասնանշում է հոգեբանութեան անհրաժեշտութիւնը: Առանց մանկան հոգու ճանաչողութեան անկարելի է դաստիարակչական օգտակար աշխատանք կատարել: Մանկավարժը պէտք է ուսումնասիրէ իր սանի հոգեկան աշխարհը, նրա ներքին էութիւնը, որպէս զի կարողանայ ըստ այդ ներքին աշխարհի՝ դաստիարակութեան ձևեր գտնել: Այդ ձևերը միևնոյնը չեն ամեն անհատի համար հաւասարապէս: Նրանք փոփոխական են՝ նայած մարդուն ու նրա հոգեբանութեան: Նորագոյն մանկավարժութեան համար այս գաղափարը բնաւ վիճելի չէ և մանաւանդ շատ հասկանալի է: Բայց Ռուսսօի ժամանակ դա մի յայտնագործութիւն էր:

Դաստիարակութիւնը ի նկատի պիտի ունենայ ո՛չ միայն հոգեբանութիւնը առհասարակ, այլ և տարբեր հասակների հոգեբանութիւնը մասնաւորապէս: Ուրիշ է մանուկի հոգեբանութիւնը, ուրիշ է պատանու հոգեբանութիւնը, ուրիշ է չափահասի հոգեբանութիւնը: Ցարինների ընթացքում հոգին դարգանում է և փոփոխութեան ենթարկուում: Նա ունի իր բնաշրջումը, իր էւոլյուցիան, որ մանկավարժութեան հիմք պէտք է դառնա:



նոր Գաստիարակը այդ բնաշրջման ուսումնասիրութեան ու ծանօթութեան վրայ պիտի կառուցանէ իր շինարարական գործը: Ենթադրուած Պետալոցցին, Սպենսերը, Հերթալը գործադրեցին ու զարգացրին Ռուսսօի ազդարարած այդ առողջ սկզբունքը: Յիկին Նէկկեր դը Սուիւր մի ամբողջ գիրք նւիրեց այդ խնդրին— „Education progressive“—ներշնչած ծանօթակ Ռուսսօի գաղափարներին:

Եւ այսպէս իր գրքի առաջին էջերից իսկ՝ Ռուսսօն կարողանում է խորապէս ըմբռնել մանկավարժութեան դժուարին պրօբլեմը և նոր ճանապարհի վրայ դնել դաստիարակութեան նուրբ արեւատը:

Այդ հիմնական սկզբունքներից յետոյ՝ հեղինակը զննում է մարդկային հոգու ծագման խնդիրը, որ նոյնպէս առաջնակարգ նշանակութիւն ունի մանկավարժութեան մէջ: Անհասարակութեան մասին խօսելիս՝ Ռուսսօն յայտնել է իր ըմբռնումը: Մարդը, նրա կարծիքով՝ բարի է բնականապէս, Հակառակ տեսակէտը, մարդու բնական շարութեան դաւանանքը, գալիս է միապետական տրամաբանութիւնից: Նրանք, ովքեր կամենում են երկիրը և դպրոցը սարկութեան մէջ պահել, նրանք, ովքեր կամենում են բռնանալ մարդու վրայ, աշակերտի վրայ—նրանք են տարաձայնում մարդու բնական շարութեան առասպելը: Եւ յիշատի, թէ 19-րդ դարի և թէ ամեն ժամանակի, թէ ֆրանսիական և թէ ուրիշ բռնապետութեան համար յատկանշանական է այդ իրողութիւնը: Մարդիկ իրենց բնութիւնը արդարացնում են այն հիմքով՝ թէ իբր ժողովուրդը կամ, այս դէպքում, աշակերտը ազատութեան մէջ յանցանք կը գործեն: Ռուսսօի „բնական բարութեան“ թէօրիան պէտք է ընդունել իբր մի անհրաժեշտ հակահարաւած իր ժամանակի միապետական փիլիսոփայութեան: Նա ամենից առաջ կամենում էր պայտուցանել, որ մարդը չար չէ: Նա ամենից առաջ կամենում էր բացասել միապետական տեսութեան: Եւ մեր կարծիքով՝ այդտեղ է կայանում Ռուսսօի ըմբռնման պատմական դերը:

Եւ այսպէս շոգեբանական մանկավարժութեան, բնաշրջումի և „բնական բարութեան“ գլխաւոր հիմքերով՝ Ռուսսօն ձեռք է առնում Էմիլի դաստիարակութիւնը: Նրա առջև կանգնած է մարդը առհասարակ Էմիլի անւան տակ մարդկութիւնն է շարժուում և դաստիարակուում:

Մարդու կեանքի մէջ՝ Ռուսսօն հինգ շրջան է ընդգծում: Առաջինը տարածուում է ծննդից մինչև խօսելու ու քայլելու կարողութիւնը, հազիւ մէկ-երկու տարի: Երկրորդը՝ այդ կարողութիւնից մինչև տասներկու տարեկան հասակը: Երրորդը՝ տասներկուսից մինչև տասնհինգ, Չորրորդը՝ տասնհինգից մինչև քսան: Հինգերորդը՝ քսան տարեկանից մինչև կեանքի վախճանը:

Առաջին շրջանի դաստիարակութիւնը հիմնովին ֆի-

զիքական է: Մանուկին պիտի պահեն բնութեան մէջ, սովորեցնեն տաքին ու ցրտին, կեանքի յետագայ դժուարութիւններին: Ռուսսօն այստեղ հրահանգում է այն, ինչ որ վերջին ժամանակներս բժշկութեան նորագոյն մեթոդներն են յանձնարարուած: Արևի, լոյսի, օդի բարերար ազդեցութիւնը մանուկի ֆիզիկականի և հոգեկանի վրայ շեշտած է տակաւին 17-րդ դարում, „Էմիլ“ի մէջ:

Երկրորդ շրջանում շարունակում է ֆիզիկական դաստիարակութիւնը: Բնութիւնը միակ աղբիւրն է այդ դաստիարակութեան: Մարդիկ, բժիշկները չպիտի միջամտեն բնութեան գործին: Նրանց միջամտութիւնը կ'ազարտէ և կ'աւերէ բնութեան գեղեցիկ ու շինարար աշխատանքը: Ֆիզիկական դաստիարակութեան վրայ այս շրջանում աւելանում է զգայարանների դաստիարակութիւնը: Ռուսսօի կարծիքով՝ յիշողութիւնից և գատողութիւնից առաջ՝ օգնութեան պէտք է կանչենք մանուկի զգայարանները, որոնք ճանաչողութեան հրաշալի միջոցներ են: Մեր առաջին գաղափարները մենք ստանում ենք զգայարանների միջոցով: Աչքը, ականջը, ձեռքը մեր սկզբնական իմացութեան միակ մատակարարներն են: Նրանց կրթութիւնը մանկավարժութեան համար հիմնական խնդիր է: Եթէ մանուկը վատ շօշափելիքով, վատ տեսանելիքով, վատ լսելիքով մեծանայ—դաստիարակութեան գործը երբէք կատարեալ չի լինի: Նա ընդմիջտ անդամալուծման կը դատապարտուի:

Այս շրջանում ո՛չ մի առարկայի ուսմանը չկար Մանուկը գործ ունի բացառապէս իր երբի Հետ: Հաշուում է, չափում է, կշռում է, համեմատում է և սովորում է ինքնուրոյնաբար: Բնութիւնը այստեղ էլ նրա միակ դաստիարակն է: Բնութիւնից դուրս նրան բան չի հարկաւոր: Բառերը արտաքուսում են մինչև վերջին հնարաւորութիւն: Նրանց փոխարինում են իրերը և միայն իրերը: Թող մանուկը երբէք չ'աւի այն, ինչ խորապէս և հաստատապէս չգիտէ: Եւ թող մինչև իսկ չկարողանայ ասել այն, ինչ որ իրապէս գիտէ: Ասելու անկարողութիւնը նրանից չէ խլում նրա իմացածը: Բառը միշտ վտանգաւոր է: Պէտք է ամեն կերպ աշխատել, որ երեխան թութակի ճանապարհը չբռնէ:

Մտաւոր դաստիարակութիւնը այս շրջանում էսպէս բացասական ուղղութիւն ունի: Պէտք է հսկել, որ դարի մոլորութիւնները, սխալները, հասարակական կարգի վնասակար հասկացողութիւնները չմտնեն մանուկի հոգին: Կարևորը այս է: Միւս կողմից՝ ինչ որ նա սովորել է պատահաբար, իրերի անմիջական շփումով, ինչ որ նա իմացել է ինքնաբերական, առանց նպատակ ունենալու և առանց գիտակցութեան—լիովին բաւական է:

Նորագոյն մանկավարժութիւնը ընդունել է ծանօթակ Ռուսսօի վերոյիշեալ սկզբունքները՝ մէկի բացառութեամբ: Ֆիզիկական կրթութիւնը, զգայարանների



գաստիարակութիւնը, իրերի ուսմունքը մեր ժամանակի մանկավարժութեան հիմքերն են կազմում: Սակայն մտաւոր գաստիարակութեան յետաձգման հետ չեն հաշուել նոր մանկավարժները: Դա Ռուսսօի այն հիմնական մտքի անմիջական արձագանքն է՝ թէ գիտութիւնները անբարոյականացնում են մարդուն: Որքան յետաձգւի նրանց անմտութիւնը և որքան բիւզ լինի նրանց թիւը՝ այնքան մենք մօտ կը լինենք բնութեան: Բայց մեր ժամանակի մարդու մէջ, այդքան ուժեղ և այդքան խորունկ կերպով դժուար է բնական մարդը հաստատել, վերստեղծել: Մեզ հարկաւոր է իմացականութիւն, և նրա երկարժամանակեայ անգործածութիւնը վնասակար է: Ինչպէս Ֆիզիքականի զարգացման համար անհրաժեշտ է մարզանքը, այնպէս էլ մտաւոր մշակման համար կարևոր է վարժութիւնը:

Երբորդ շրջանում սկսում է մտաւոր գաստիարակութիւնը: Այստեղ էլ հիմնական սկզբունքները նոյնն են: Ամեն բան բնութեան մէջ, ամեն բան բնութեան մեջոցով: Բացի դրանից՝ պիտի սահմանակել Էմիլի գիտութեան քանակը: Աւելի լաւ է բիւզ բան իմանայ: Կանաւանդ աւելի լաւ է՝ մարդկանց հնարած վնասակար գիտութիւնները երբեք չիմանայ: Էմիլը պէտք չունի պատմութեան: Այնտեղ ոճիրներից, սպանութիւններից բացի՝ ուսանելու ուրիշ բան չկայ: Պէտք է նրան բնութեան հետ կապել և ոչ թէ մարդկանց հետ: Պէտք է բնական կարգի իմաստութիւնը հաղորդել և ոչ թէ հասարակական կարգի մոլորութիւնը:

Էմիլը պիտի սովորի բնական գիտութիւններ, աստղագիտութիւն, աշխարհագրութիւն: Գրանցով նա կարող է խորանալ բնութեան մէջ և հասկանալ նրա հրաշալի իմաստութիւնը: Եւ այդ գիտութիւնները ձեռք բերելու համար՝ նա երբեք չպիտի դիմէ արհեստական միջոցների: Բնութիւնը միայնակ կարող է այդ ուսմունքը հաղորդել նրան: Ծառը, ծաղիկը, թռչունը, թիթեռը, գետը, քամին և այդպէս ողջ տիեզերքը բաց է նրա առաջ, նրա բնական իմացականութեան առաջ: Պէտք է միայն այդ իմացականութիւնը փորձերի միջոցով շարժման մէջ գնել: Աստղագիտութեան համար ուրիշ ոչինչ հարկաւոր չէ, բացի կապուտակ, ջինջ երկնակամարից: Արեւի հրաշափառ ծագումը, աստղերի անհուն կարաւանները, պայծառ յուսիքը Էմիլին շատ բան կը սովորեցնեն: Ռուսսօն այս էջերում իր բանաստեղծական հոգու ամբողջ գեղեցկութիւնն է ներկայացրել: Այդ մասերը վեր են հանում մի շքեղ, մի հմայիչ պօեզիա, լի խորունկ անկեղծութեամբ և բազմա տրամադրութեամբ: Աշխարհագրութեան դասաւանդութիւնը պէտք չունի բարեկենդանի, երկրագունդների: Այստեղ էլ ամեն ինչ բնութիւնն է տալիս: Տեղական միջավայրից՝ Ռուսսօն կամաց-կամաց հեռանում է և հասնում է մինչև լայն հորիզոններ: Էմիլը գիտէ իր շրջապատը, իր սպրած

երկիրը: Ռուսսօն իր գրածքի այդ մասերով հայրենագիտութեան հիմնադիրն է հանդիսանում:

Բացի այդ առարկաներից՝ Էմիլը պէտք է նաև արհեստ սովորի: Կեանքի դժուարութիւնների համար նա սկզբից պիտի նախապատրաստուի: Ապագան միշտ մութն է և տիեզերական յեղյեղուկ ընթացքի մէջ անկունները հնարաւոր են: Մարդս պէտք է այդ օրերի համար յատուկ զէնք ունենար: Պատմում է, որ այս տեսակետից ևս Ռուսսօն անմիջական ազդեցութիւն է ունեցել իր ժամանակի ֆրանսիական ծոյլ ու անգործ ազնւականութեան վրայ: Այդ դասակարգից շատերը ենթարկել են Ռուսսօի համոզած խօսքին և իրագործել են նրա հրահանգը: Եւ ման իրողութիւնների համար է հռչակաւոր Բիւֆֆօն իր հետեւեալ խօսքը արտասանել. «Մենք էլ ենք շատ բան ասում, բայց Ռուսսօն պատիրում է և կարողանում է հնազանդեցնել իր պատիրանքին»:

Չորրորդ շրջանում Ռուսսօն սկսում է Էմիլի բարոյական գաստիարակութիւնը: «Մենք կազմեցինք նրա մարմինը, նրա զգայարանները, նրա գատողութիւնը: մնում է սիրտը»: Այս բառերով է մօտենում ժընեյի փիլիսոփան կրթութեան դժուարին և նուրբ կողմին:

Նախ և առաջ մի բանի խօսք այն բարոյական միջոցների մասին, որ պիտի գործադրեն գաստիարակութեան ժամանակ: Ռուսսօն այստեղ երկու հիմնական սկզբունք ունի. «բնական հակահարուած» և նախանձաւորութեան բացասում: Մանուկին չպէտք է պատժել: Պատիժը բնաւ գաստիարակչական միջոց չէ: Պէտք է թողնել, որ մանուկը իր անհոգութեան, իր անկարգապահութեան բնական հակահարուածն զգայ: Եթէ հակառակ ձեր խօսքի՝ նա մտնում է ջուրը, շուտով կը թրջւի և կըզգայ իր արարքի հետեւները: Բնութիւնը յետ կը տայ նրա անհոգութեան պատասխանը: Անշուշտ այս միջոցը չպիտի հասնի մինչև անմիտ ծայրայեղութեան աստիճան:

Եթէ բնական հակահարուածի հետեւներով մանուկը պիտի ծանրապէս վնասուի՝ պէտք է կանխել վտանգը: Յետագայում Կանտն ու Սպինոսները միացան Ռուսսօի առաջարկած սկզբունքին և իրենց մանկավարժութեանց մէջ զարգացրին այն:

Միւս կողմից՝ նախանձաւորութեան դերը Ռուսսօն հիմնապէս բացասական է համարում: Նա չէ ընդունում բարի նախանձի տեսութիւնը: Նրա համար նախանձը նախանձ է և միշտ էլ մերժելի է: Մանուկին չպէտք է համեմատել ուրիշի հետ և այդ միջոցով չպէտք է նրան որևէ բան սովորեցնել: Բարոյականութեան գնով գաստիարակութիւնը անմիտ հակասական գործ է: Եթէ համեմատութիւնը անհրաժեշտ է՝ պէտք է նոյն ինքն մանուկի մէջ կատարուի այդ համեմատեցեք նրա երեկւայ դրութիւնը այսօրւան հետ: այսօրը վաղւան հետ: Երբեք ուրիշի հետ ժամանակակից մանկավարժութիւնը



այս կէտում լիողին համաձայն չէ Ռուսսօի կարծիքին: Ըստ երբևէ գրանց թւում նշանաւոր քէյմսը գտնում են, որ յաճախ անհրաժեշտ է և օգտակար է նախանձաւորութիւնը:

Դաստիարակչական իր հիմնական սկզբունքները Ռուսսօն գործ է դնում նաև մարդու բարոյական պատկերը ձևաորելու ժամանակ: Այստեղ էլ բնութիւնը անխորախ ու անդաւաճան ազգակ է: Պէտք է դիմել նրան, պէտք է դիմել անհատի բնական զգացմունքին և ոչ բանականութեան: Բարոյականութիւնը արժէք ունի, բարոյականութիւնը հաստատուն է միայն այն ժամանակ, երբ իր սնունդը քաղում է զգացմունքի մարտի և անսպառելի աղբիւրից: Ընդհակառակը, բարոյականութիւնը անզօր է ու կազ, երբ բանականութեան վրայ է հիմնուում: «Կարելի է անպատժօրէն խեղդել իր նմանին փիլիսոփայի պատահանի աակնա ձեռքերը կը դնի ակնջներին և կը պատճառարանի մի քիչ՝ խանգարելու համար բնութեան ձայնը, որ ըմբոստանում է նրա մէջ և նրան իբրև մարդ հաւասարեցնում, նոյնացնում է խեղդւողի հետ: Բնական մարդը չունի այս հրաշալի տաղանդը. նա միշտ յանձնւում է մարդկութեան առաջին զգացմունքին»: Իբր լիմիլը գարգացնի բնութեան նախնական տուրքը, երբ լիմիլը մշակ է իր մէջ գտնուող զգացմունքը — չի կարող չարութիւն անել: Նա կը լինի բարի և զգայուն՝ դէպի իր շրջապատը, դէպի մարդիկ և կենդանիները: Այս հոգի վրայ է Ռուսսօն պատաստում անհատի բարոյական կառուցածքը, անհատի հասարակական պարտականութիւնը: Դրանից դուրս մարդու բարոյականութիւնը շինծու է, արհեստական է և չի կարող արգասաւոր լինել:

Ժան-Ժակ Ռուսսօի բարոյական դաստիարակութեան մէջ կարևոր տեղ է գրաւում Աստծու գաղափարը:

Լիմիլը առողջ է Ֆիզիքայէս, նրա զգայարանները զարգացած են, դատողութիւնը շիտակ է ու յստակ, բարոյականութիւնը կայուն և անվրէպ — բայց նա աակալին կատարեալ չէ: Երջանկութեան համար պակասում է գերագոյն էակի զգացումը: Մարդս նրանով միայն կը լրանայ, կ'ամբողջանայ:

Այստեղ էլ — ինչպէս նրա բովանդակ աշխարհահայեացքի մէջ — բնութեան նշանակութիւնը, բնութեան դերը առաջնակարգ է: Լիմիլը գրքերից չէ վերցնում Աստծու գաղափարը, հոգևորականները չեն աալիս նրան և ոչ էլ եկեղեցին է մատակարարում: Սրանք բոլորն էլ արատաւոր են ու անարժան՝ բարութեան տիպարի պատկերը հաղորդելու համար: Այս հրաշալի տիեզերքը, բնութեան այս չքնաղ կանոնաւորութիւնը, այս զարմանալի համակարգը, այս վեհութիւնը, այս համատարած ներդաշնակութիւնը — Լիմիլ մէջ Աստծու զգացումը կը դնեն: Եւ այդ զգացումը կը լինի խորը, խաղաղ, հանգիստ ու համբերատար: Այդտեղ չկայ զանազան

կրօնների յանցաւոր մենամարտը, այդտեղ չկայ զանազան եկեղեցիների ոճրագործ առելութիւնը, այդտեղ չկայ զանազան դաւանանքների այլաձեւ ոգին: Այդ զգացումը պայծառ երկնակամարի արտացոլում է և նրա պէս լայն է ու մաքուր:

Ժան-Ժակ Ռուսսօն մարդու կեանքի մէջ — ինչպէս ասացինք — գրել է նաև հինգերորդ շրջան, որ տարածւում է քսան տարեկանից մինչև մահը: Այս շրջանում Լիմիլը ճանապարհորդում է, երկիրներ է տեսնում, ամուսնանում է Սօֆիի հետ, կրում է այդ ամուսնութեան դառնութիւնները և տառապում է մարդկայնօրէն: Այս բոլորի մէջ վիպական բաժինը գերակշռող է: Դաստիարակչական մասը երևան է գալիս այնտեղ, ուր Ռուսսօն գծում է կնոջ պատկերը: Սօֆին, նրա կարծիքով, Լիմիլին կ'երջանկացնի իր կրաւորական գիւղքով և իր ստորագրեալ հոգեբանութեամբ: Մարդու օգևորած ու հանձարեղ դաստիարակը խոշոր վրիպումներ է արել կնոջ իդէալը ներկայացնելիս: Այստեղ Ռուսսօն ամենևին վերանորոգիչ չէ: Նա կրկնում է իր գարի մոլորութիւնները և նախապաշարութիւնները: «Կանանց ամբողջ դաստիարակութիւնը պէտք է տղամարդկանց տեսակէտով կատարուի: Նրանց դուր գալ, նրանց օգտակար լինել, սիրել և մեծարել նրանցից, նրանց մեծացնել, երբ անչափահաս են, խնամել, երբ չափահաս են, նրանց խորհուրդ տալ, նրանց մխիթարել, նրանց կեանքը հաճելի և քաղցր դարձնել — ահա կանանց պարտականութիւնը ամեն ժամանակի համար»: Սօֆիի համար մտաւոր դաստիարակութիւնը կարևոր չէ. նա կարող է անգրագետ մնալ: Նա չունի իր ինքնուրոյն կրօնական հայեացքը: Ամեն աղջիկ իր մօր կրօնը պիտի ունենայ, ամեն կին իր ամուսնունը:

Այսպէս է Ժան-Ժակ Ռուսսօի իդէալը և դաստիարակչական տեսակէտը կանանց նկատմամբ:

Լիմիլը իր թերութիւններով ու անկատարութիւններով հանդերձ՝ մանկավարժական փիլիսոփայութեան խոշոր ու հանձարաւոր ստեղծագործութիւններից է: Իր ժամանակի դաստիարակութեան դէմ, իր գարի չոր ու անհոգի, սխալաստիք ու սպանիչ մանկավարժութեան դէմ ամենամեծ ու ամենազնիւ բողոքն էր: Ցասնիններորդ գարի մանկավարժութիւնը իր լաւագոյն մասերը, իր ամենաառողջ գաղափարները այդ հոգեշունչ գրքից հանց: Նրանով օգևորեցին այդ գարի մեծամուն փիլիսոփաներն ու մանկավարժները — Պեստալոցցի, Հերբարդ, Սպենսեր, Ֆրէօբոլ...

Նրա մեծ զգացմունքը և բնական առողջամտութիւնը տիրեց մարերին: Լիմիլը ուսուցման ծրագիրն էր չէ աալիս նրանով չի կարելի դասաւանդել: Բայց նա աալիս է մանկավարժական սկզբունքներ, որոնցով կարելի է դաստիարակել մարդուն...

Ս. ՆՈՐԱՆԻԱՆ



Պ Ա Տ Մ Ա Կ Ա Ն

Հ Ա Յ Կ Ա Կ Ա Ն Շ Ա Ր Ժ Մ Ա Ն

Ն Ա Խ Ա Պ Ա Տ Մ Ո Ւ Թ Ի Ի Ն

V

ԱՐԵՎԵՆԻ, ԵՄՔԵ, ԽՆԳՐԻ ՍԵՂՐՆԱՆՈՐՈՒՄԸ

ՀԱՅՈՑ ԱՆԿԱՌԻԹԵԱՆ ԱՌԱՋԻՆ ՓՈՐՁ

Ենչի եւ Մանիկի յարաբերութիւններ Կ. Պօլսի նաեմուսից ի վեր. — Կապիտալիզմի բանաբանութիւն եւ պատճառական եւրոպայի իրաւախօսութիւնները. — Ողբ Երեսնակայ նախաքաղաքների մէջ. — Հայր Սանուսո եւ հայերը. — Կապիտալիզմի ծագումը. — Անգլիոյ առաջին լայներ Արեւելում. — Սկզբից իսկ՝ բիրտամոյ. — Սուլթանը եւ եւրոպական դեպարտամենտը. — Անարգական վերաբերում. — Ռուսաստանը՝ բացառութիւն. — «Մօսկովեան վեցերորդ» եւ նրա անդրադարձումները հայերի մէջ. — Կարապաղ՝ իբրեւ օվազիս ստրկութեան անպատում. — Իտալի Օրիի առաւելութիւնը. — Հայ խաչակրաց արշաւանքի ծրագիր. — Օրիի անձնաւորութիւնը. — Գերմանական դաստիարակը եւ նրա կասկածների ու մեղադրանքների արժէքը. — Ֆիլիս եւ Հայդէլ. — Հայկական ազնուականութիւնը՝ նախաձեռնող հայ առաջին յեղափոխական շարժման. — Իտալի Օրիի եւրոպայում ու Ռուսաստանում. — Պետրոս մեծը եւ հայոց ազատութեան խնդիրը. — Օրիի մահը եւ իր ծրագրի վիճումը.

Որքա՞ն ուշադրաւ է արեւելեան այդ ցաւաւանջը Խնդրի էւօլյուսիօնը, որի ընդարձակ աւազանի մէջ ծնունդ է առել եւ զարգացել է մեր հայկական խնդիրը:

Պօլսը գրավելուց յետոյ, քրիստոնեայ եւ մահմեդական աշխարհները, Խաչը եւ Կիսալուսինը մնացին մի առժամանակ կղզիացած, պատկառելի տարածութեան վրայ, լի փոխադարձ տանջութեամբ, իւրաքանչիւրը մի տեսակ վեհապանծ եւ արհամարհում մեկուսացման մէջ՝ հանդէպ իր հակառակորդի, իր կրօնական երգչեալ ոտխի:

Անդունդը թուում էր անանցանելի շահամարութիւնը երկու տարբեր կրօնների ներկայացուցիչ՝ Արեւմուտքի եւ Արեւելքի միջև՝ թուում էր անհաշտ, յաւիտենական: Կաթօլիկ պապերը շարունակում էին քարոզել նոր խաչակրաց արշաւանքներ, քարոզում էին աւանդական մոլեռանդութեամբ՝ դուրս քշել օսմանեան հօրդան—այդ «սարսափելի կենդանի փոշին», «Cette effroyable poussière vivante», պիտի ասէր յետոյ Միշլէ — դուրս քշել այն՝ իր նորանաճ հողերից եւ վերադարձնել իր նախկին բնակավայրը՝ Կենտրոնական Ասիա...

Սակայն, անզօր էին քրիստոնէական այդ պաղատագրին յորդորները, նրանք այլ ևս լայն արձագանք չէին գրանում ոչ իշխողների և ոչ զանգուածների մէջ... Չկար այլ ևս այդ մասսային արշաւանքների առանձնայատուկ միջոցաւորը, միջնադարեան արկածախնդիր եւ ասպետական ոգին, չկար վաղեմի յափշտակութիւնը, չկար, վերջապէս, համերաշխութիւն իշխողների միջև \*): Կ ա պ ի

\*) Միւս կողմից՝ անցեալ խաչակրաց արշաւանքների ձախորդութիւնները, նրանց վերջնական և աղէտալի վիճումը

տաւիզմը իր սկզբնական շրջանի մէջ կատարել էր արդէն իր հանդիսաւոր թատերամուտը. առևտուրը, վաճառականութիւնը սկսել էին սիրապետող դեր խաղալ արևմտեան հասարակութիւնների կեանքում, Եւրոպան դարձել էր աւելի ռեալիստ, աւելի իրապաշտ և նիւթապաշտ... Կրօնը, անշուշտ, դեռ պահպանում էր իր մեծ ուժը, բայց աւելի ևս մեծ էին անտեսական մտահոգութիւնները, աւելի ուժեղ ու հրամայական էին կեանքի «գոնհիկ» պահանջները—և նրանք ի վերջոյ մղեցին Եւրոպայի վարիչներին դէպի կոմպրոմիս, իրաւախոհութիւն, դէպի մի որոշ կեննցաղական երպ, *modus vivendi*... «Անհաւատի» հետ:

Արեւմուտքը կամաց-կամաց թողեց անհաշտ հակամարտութեան իր դիրքը, հարթեց բոլոր խրամամները և դիւանագիտական ժպիտը բերնին՝ մօտեցաւ Բօսֆօրի գոռոզ Խալիֆին, սիրաշահեց, կապեց նրա հետ դաշինքներ՝ իր առևտուրը, անտեսական. ձեռնարկները արեւելեան ջրերի մէջ ազատորէն մղելու համար:

Ինձ եկան յաջորդաբար՝ Վենետիկեան հանրապետութիւնը, Ֆրանսիան, Անգլիան և ուրիշ պետութիւններ, որոնցից իւրաքանչիւրը ձգտում էր նւաճել խաղաղ ճանապարհով արտօնութիւն և ազդեցութիւն:

Եւրոպան՝ բաժան-բաժան և հակամարտ՝ մեծ պահանջներ չէր դնում քրիստոնէութեան թշնամիներին, նրա մեծագոյն բաղձանքն էր—ապահովութիւն իր լրջանտեան առևտրի համար: Եւ նա յամառ, աստիճանաբար առաջ քայլեց դէպի նորագոյն կատիտալիզմի այդ

յուստիափի էր արել շատերին, և նոյնիսկ կղերի բանակից յաճախ այդ առթիւ լուում էին դժգոհութեան ու բողբոքի ձայներ... ընդդէմ Աստուծոյ և Յիսուսի: Եթէ քրիստոնէութիւնը չկարողացաւ յաղթահարել անհաւատներին և փրկել Յիսուսի գերեզմանը, — ասել է Աստուած չկամեցաւ այդ: Ասել է՝ ինքը Աստուածը հովանաւորում էր անհաւատներին: XIII դարու մի կաթօլիկ կղերական հարաւային Ֆրանսիոյ մէջ ցաւազինուորէն ողբում էր խաչի անկուծը և անարգումը. «զարմանալի չէ, բացականչում էր նա, որ թիւրքերը եկան նւաճեցին Ֆրանկներին, հայերին և այլն, Քրիստոս, անշուշտ, թողլատարել էր այդ նւաճումը... Աստուած, որ երբեմն կը հսկէր, այժմ բնած է... Եւ Մահմեդն է, որ դործի վրայ է...»

Նոյն ցաւազին դանդաղները մասնաւորապէս հայ-քրիստոնէաների նւաճման առթիւ, հնչեցնում էր XIV-րդ դարու սկզբում վենետիկցի հոյր Մարտին օ Սանուսո իր «*Secreta fidelium Crucis*»-ի մէջ, «Ո՛վ վիշտ—աղաղակում էր նա, բոլորն էլ մրափել են, ի տեղի հսկելու մեծ, սրբազան դատի վրայ... Եւ վճատուած, յուսարկի՛ նա գնաց, այնուամենայնիւ, խնդրելու Արեւմուտքի իշխաններից 6—7 նաւ՝ Փոբբը Հայքը պաշտպանելու համար: Բայց չուտով մեռաւ (1329 թ.):»

Սանուսո շատ լաւ էր ըմբռնել Տաւրոսեան Հայաստանի կարևորութիւնը՝ արեւելեան նոր հօրդային արշաւանքի հանդէպ և պաղատագրին յորդորում էր՝ միջոցներ ձեռք առնել փրկելու դէպի Կիլիկիան: (S. Saint Marc Girardin, *Origines de la Question d'Orient, Revue des Deux Mondes, 1 Mai 1864*).



գերագոյն նպատակակէտը... առանց, սակայն, հրաժար-  
ւելու իր գաղտնի տենչանքից՝ մի օր խտտիւ պատժելու  
„անհաւատ բարբարոսներին“, հարածեցու և տարա-  
գրելու:

Քրիստոնեայ պետութիւններից մէկը միայն բացառու-  
թիւն կազմեց, պահպանելով XVI-րդ դարու մէջ իր  
անհաշտ և վրիժառու դիրքը իսլամի հանդէպ: Սպա-  
նիան էր, կաթօլիկ մոլեռանդութեան ամենամառ  
օձախը հռչակաւոր Գրիգորի II-ի օրով: Խաչակրաց ար-  
շաւանքների յիշողութիւնները այդտեղ մշտապէս թարմ  
էին մնում, ասպետական աւանդութիւնները — նմանա-  
պէս: Սպանեան բնաւ չգիմեց իրաւախօհութեան „ան-  
հաւատի“ հետ, ընդհակառակը, ձգտեց միշտ կազմա-  
կերպել նրա դէմ մի տեսակ „սուրբ դաշնակցութիւն“,  
և 1517-ին, Վենետիկի ու մասամբ պապի աջակցու-  
թեամբ, ջարդ տւեց օսմանեան նաւատորմին — մի ջարդ,  
որ ահագին շառաչումն ունեցաւ ամբողջ քրիստոնեայ  
աշխարհում: Պօլսը, անպարիսպ, անպաշտպան, գրեթէ  
արդէն գտնուում էր յաղթական Արմազայի ձեռքում,  
40,000 քրիստոնեաներ պատրաստ էին ոտքի կանգնել  
Բերայում և սպասում էին ազգանշանի, միլիօնաւոր  
ուրիշները պէտք է հետևէին նրանց օրինակին. Թիւր-  
քիան մահաւան տագնապի մէջ էր: Ցասնեակ հազարաւոր  
մարդ կոտորւեց պատերազմում, ուր մասնակցում էր,  
իրբև ռազմիկ, նաև Ս եր վ ա ն տ է ս, „Դօնքիշօտի“  
աշխարհահռչակ հեղինակը:

Սակայն, Կիսալուսնի բախտից՝ սպանիական և վենե-  
տիկեան դաշնակից նաւատորմերը շարունակեցին յար-  
ձակողական իրենց ընթացքը: Աւարի ճակատագրական  
խնդիրը գժտութիւն յարուցեց երկուսի միջև՝ այդ  
փայլուն յաղթանակի հետևեալ օրն իսկ Իսկ Թիւրքիան  
չուտով նորէն կազդուրւեց, վերակազմեց նաւերը և իր  
հերթին փառաւոր ջարդ տւեց քրիստոնեայ դաշնակից-  
ներին:

Մի նշանաւոր դրւագն էր դա այն մեծ կռիւ, որ  
սկսւած էր զեռ շատ վաղուց — Մարաթօնի յոյն-պարս-  
կական ճակատամարտի օրերից ի վեր — Արևմուտքի և  
Արևելքի միջև և որ պիտի շարունակէր այնուհետև  
անվերջօրէն:

Առևտրական առաջին դաշինքը Թիւրքիոյ հետ կա-  
պողն էր Վենետիկեան մեծ, առաջադէմ համայնքը, որ  
դարերից ի վեր առևտրի աշխարհակալող դրօշն ունէր  
իր ձեռքում և որի 3,000 առևտրական նաւերը լողում  
էին Միջերկրականում և հասցնում ապրանքները Բիւ-  
զանդի, Կիպրոսի, Փոքր Հայքի, Սիրիայի, Եգիպտոսի նա-  
ւահանգիստները:

Այդ համաձայնութիւնը տեղի ունեցաւ մի արիւնալի  
պատերազմից յետոյ, 1479 թւին, երկար ու դժւարին  
բանակցութիւնների միջոցով, որոնց ուշագրաւ պատմու-

թեան մէջ յիշատակուում են, ի միջի այլոց, երկու մե-  
ծանուն ֆլօրենտինեան նկարիչները՝ Միքէլ Անջելօ և  
Լեօնարդօ դա Վինչի: Վենետիկը ձեռք բերեց նպաս-  
տաւոր պայմաններ իր լեվանտեան գրասենեակների հա-  
մար և կապեց առաջին համաձայնագիրը, որ խարխիւ  
եղաւ ապագայում ուրիշ պետութիւնների ձեռքով նւաճ-  
ւելիք հռչակաւոր կապիտիւլաւացիօնների (capitu-  
lations), որոնք դարեր շարունակ պիտի կառավարէին  
օսմանեան պետութեան յարաբերութիւնները եւրոպա-  
կան ազգերի հետ:

Ֆրանսիան աւելի ևս առաջ գնաց, 1536-ի իր  
կարևոր դաշինքով: Ուղղափառ կաթօլիկ պետութիւնը  
ոչ միայն առևտրական յարաբերութիւններ էր սահմա-  
նում „մեծ Անարգի“ հետ (le Grand Opprobre Turc  
— այսպէս էին անւանում այն ժամանակ օսմանեան  
բռնապետութիւնը եւրոպայում), այլ և հռչակում էր  
Թիւրքիան, իբրև եւրոպական հաւասարակշռութեան մի  
անհրաժեշտ տարր... Մի բան, որ զգւածք ու ցասումն  
յարուցեց եւրոպայում: Մշակուում են լաւ, սիրալիր յա-  
րաբերութիւններ սուլթանների հետ, և այդ իրողու-  
թիւնը դառնում է այնուհետև Ֆրանսիոյ քաղաքական  
սիտսեմի էական կէտերից մինը, աւանդելով սերնդէ-  
սերունդ, շարունակելով Ֆրանսուա I-ից մինչև Լու-  
դովիկօս XVI-ը, մինչև Մեծ Յեղափոխութիւնը: 1536-ի  
դաշինքը կոչւեց կապիտիւլաւացիօն „նա շնորհ-  
ւում էր“ սուլթանի կողմից և ոչ տրուում: Այսպէս թէ  
այնպէս, մի ահագին երևոյթ էր այդ շնորհը: Ֆրան-  
սիական հպատակները այդ իրաւախօհութեան զօրու-  
թեամբ կարող էին ազատօրէն շրջագայել Թիւրքիոյ բո-  
լոր նաւահանգիստներում, ազատօրէն գնել, ծախել ու  
փոխադրել ամեն տեսակ թոյլատրւած ապրանքներ, վճա-  
րելով համապատասխան մաքսը: Ֆրանսիան կարող էր իր  
հիւպատոսներն ունենալ Թիւրքիոյ այլ և այլ կենտրոն-  
ներում, և այդ հիւպատոսները, ինչպէս նաև Ֆրանսիա-  
կան բոլոր հպատակները այլ և այլ քաղաքացիական ու  
քրեական վեճերի առթիւ պիտի դատուէին Ֆրանսիական  
հիւպատոսի կամ նրա թարգմանի ներկայութեամբ:

Կապիտիւլաւացիօնների իմաստը հետզհետէ ընդլայնւե-  
լով՝ Ֆրանսիան կամաց-կամաց տարածեց իր հովանա-  
ւորութիւնը ոչ միայն Թիւրքիոյ մէջ հաստատւած իր  
հպատակների, այլ և Թիւրքահպատակ բոլոր կաթօլիկ  
քրիստոնեաների վրայ \*):

XVI-րդ դարու մէջ արդէն Ֆրանսիան վայելում էր  
ընդարձակ արտօնութիւններ Արևելքում: Ֆրանսիական  
անունն ու դրօշը հովանաւորում էին բոլոր արևմտեան  
քրիստոնեայ ազգութիւններին և նրանք բոլորն էլ կոչ-  
ւում էին օսմանեան Արևելքի մէջ մի ընդհանուր անու-  
նով — Ֆրանկօ Բացի Վենետիկից, բոլոր քրիստոնեայ

\*) Rev. Edw. Munsell Bliss, Turkey und the Armenian Atrocities.



խոշոր ու մանր պետութիւնները—անգամ Անգլիան— ստիպւած էին Ֆրանսիական գոյներով դրօշակ պարզել, եթէ կուզէին առևտուր մղել թիւրքական ջրերում \*):

Անգամ Անգլիան... Նա բեմ եկաւ, իբրև ուրոյն ոյժ Արևելքի մէջ, XVI դարի վերջերում և... իր առաջին քայլերից իսկ յայանեց ամենաթիւրքամոլ պետութիւնը —որպիսին տեսնում ենք XIX դարի վերջերում, լորդ Բիկոնսֆիլդի օրով, աւելի մուսուլման, քան սուլթանները, պատրաստ դիմելու—իր ծրագրիւնների իրագործման համար—այն բոլոր նւաստացուցիչ հնարքներին ու սադրանքներին, որոնք կազմում են եւրոպական դիւանագիտութեան տիւր փառքը: Հաստատեցին զեսպանները Բոսֆորի եզերքներում (անգլիականը—1583 թւին) և սեպեց անդալիս մրցութիւն, որ պիտի շարունակէր ամբողջ դարեր, արտադրելով պարբերական ընդհարումներ ու արիւնհեղութիւններ:

Բրիտանական կառավարութիւնը, ձգտելով դուրս մղել իր մրցակից կաթոլիկ պետութիւնները և մասնաւորապէս Սպանիան, սկզբից իսկ ամեն միջոց ի գործ գրեց մտերմանալու սուլթանի հետ, ներշնչեց նրան, որ ոչ միայն չահերի, այլ և նոյնիսկ կրօնների համանմանութիւն կայ Մեծ Բրիտանիայի և օսմանեան կայսրութեան միջև, քանի որ երկուսն էլ ունին ընդհանուր թշնամի—կաթոլիկ կամ «հեթանոս» Եւրոպան: 1587-ին, բրիտանական զեսպան Հարբուն, փորձելով ոտքի հանել թիւրքիան Սպանիոյ և պապութեան դէմ, հետևեալն էր գրում Մուրադ III փատիշահին, իր թագուհու, Էլիզաբեթի անունից.

«Զեռքից մի թող նպատաւոր վայրկեանը... Ասուած քեզ արեւ է իշխաններից ամենարժանաւորը և ամենահօգորդ կռակաշուններին ջնջելու համար: Եթէ Քոյզ Բարձրութիւնը կամենայ անխաղաղ պատերազմ յայտարարել իմ թագուհու հետ ձեռ ձեռքի տուած, գոռոզ Սպանիան և խաբերապապը չպիտի խոյս տան իրենց յանդգնութեան պատժից, որովհետև Ասուածը, որ հովանաւորում միմիայն իրայիններին, չպիտի զլանայ խտորէն պատժելու այդ կռակաշունները... որպէս զի ջարդից ազատողները դ ա ո ն ան ի ս կ ա կ ան հ ա ա տ ի ն, որպէս զի նրանք դաւանեն մեզ պէս ճշմարիտ Ասուածուն» \*\*):

Սա մի չափազանց պերճախօս նմուշ է այն «ներքենի» դիւանագիտութեան, որով Մեծ Բրիտանիան այն վաղեմի օրերից ի վեր պարբերաբար զարմացրել է քաղաքակիրթ մարդկութիւնը...

Այո՛, դուռը իր ամենաբիրտ պատկերով ստոր, գետնաբարձ քաղաքականութիւնը առաջին օրերից իսկ տիրապետող գիծն է եղել արևմտեան դիւանագիտութեան՝ հանդէպ թիւրքիոյ: Եւ սուլթանները, առևտրական արտօնութիւններ զիջելով հանդերձ, ընդհանրապէս «արժանաւոր» ընդունելութիւն են արել այդ դիւրաթեք դիւանագիտութեան ներկայացուցիչներին... ընդունել են

նրանց սովորաբար, որպէս իրենց ամենայետին սպասուորներին, արհամարհանքով ու անարգանքով: Եւրոպայի պաշտօնական ներկայացուցիչները, նախքան սուլթանական պալատ մտնելը, խուզարկում էին, ապա—պատմագրի արտայայտութեամբ—նրանց (զեսպաններին ու այլ պատկերակներին) համարեա քարշ տալով տանում էին (*plutôt trainés que conduits*) մինչև գահի պատանդանը, ուր ստիպում էին ծունկ չօքել, երբեմն նոյնիսկ տարածել զեանի վրայ, համուրել զեանը: Պալատից ելնելիս, նրանց սովորաբար ուղեկցում էին ծառաների, խուժանի անարգական սուլոցները: Ենիչերիները երբեմն հրում էին նրանց, ոռնում էին շների պէս նրանց ետևից և մահաւանջալիքներ էին ուղղում նրանց:

Եւրոպան համբերում, տանում էր այդ ամենը... նոյնքան վիրաւորական և անարգիչ էր ընդունելութիւնը սադրազամի կողմից, որ թիւրք կայսրութեան բարձրագոյն պաշտօնեան էր, սուլթանի երկրորդ եսը, «Ասուածոյ սուերի սուերը» (*L'ombre de l'Ombre de Dieu*) Դեսպաններին ընդունելիս կամ արձակելիս՝ նա չէր իսկ բարեհաճում տեղից շարժել. քիչ չէր պատահում, որ նա այս կամ այն զեսպանին սպառնում էր ծեծել, *justiger comme un âne*, նոյնիսկ սպանել այս կամ այն անպատշաճ վարմունքի համար: Մշտնջենական և ամենախիստ հսկողութեան տակ էին զեսպանները, խստիւ արգելւած էր նրանց փոխադարձ այցելութիւն տալ, զրուցել և այլն: Փորձում էին նոյնիսկ արգելել նրանց... գինիի գործածութիւնը:

Նոյն արհամարհանքը—ամենայետին թիւրք պաշտօնիայի կողմից: Մեծ Յեղափոխութեան նախօրեակին, 1788-ին, երբ թիւրքիոյ ջերմ պաշտպան Ֆրանսիական զեսպանը իր բնակարանն էր մտնում, իր վարձած թիւրք դռնապանն անգամ մնում էր անշարժ և հպարտ նստած իր տեղում: Մի ողորմելի ենիչերի վայել չէր սեպի նոյն զեսպանի հետ փողոցի մէջ կողք կողքի բալել, այլ գնում էր միշտ առջևից... հասկացնելու համար, որ ամենաստորին մահադակաւը աւելի բարձր է, քան ամենաբարձր գիւպուրը:

Այդպէս էր այն վաղեմի ժամանակներում թիւրքիոյ վերաբերումը դէպի բրիտանացի Եւրոպան, մի վերաբերում՝ որ թելադրւած էր նոյն տարածքով Ղուրանից, սրբագործւած նրա անագորոյն պատգամներով... Այժմ դիմում, ոչ մի հաւաքական խնդրք կամ պահանջ չէր կարողանում փոփոխել, մեղմել, դարձնել փոքր ինչ մարդավայել՝ այդ յարաբերութիւնները: Այն մի շարք առևտրական արտօնութիւններն էլ... սուլթանները շնորհում էին, աւելի ճիշտ՝ չպարտում էին Եւրոպային նոյն գոռոզ արհամարհանքով, չպարտում էին այն գիտակցութեամբ, որ առևտուրը, ինչպէս և աշխատանքի միւս արդիւնաւոր ձևերը ստորարհեստ է, անարժան

\*) J. Klaczko, Les Evolutions du Problème Oriental, Revue des Deux Mondes, 15 Octobre 1878.  
 \*\*) Recue des Deux Mondes, 15 Oct. 1878.



զրադուներ, ոչ-վայել ազնւական մուսուլմանին, արժանի միմիայն գիւմուրինս 2մոսաննք, վերջապէս, որ եւրոպացիներէ բերած առեւտուրը մատակարարում էր սուլթաններին, փաշաներին և բոլոր իշխողներին պերճանքի հազարաւոր առարկաներ և ամեն անասկ յարմարութիւններ, որ նրանք երբէք չէին կարող երազել՝ այլ ճանապարհով ստանալու:

Սակայն, ոչ բոլոր քրիստոնեայ պետութիւնները ենթակայ էին թիւրքերի այդ գոռոզ արհամարհանքին: Ոչ բոլոր քրիստոնեայ գետնանները ընդունում էին վերը յիշած նւաստացուցիչ եղանակով: Կար մի խոշոր բացառութիւն, որ չէր ուզում ձկնել իր պարանոցը, չէր ընդունում Ղուրանի թելադրած և արևմտեան դիւանագիտութեան կողմից ճանաչւած ու ներարգրուած էտիկետները, կարգաւձեւերը: Կար մի ոյժ, որ վաղաժամ կարողացաներ շնչել Խալիֆին երկիւղ ու ակնածութիւն և պարտադրել վերջինին ու իր ստորագրեալներին՝ ակելի վայելուչ և յարգալի վերաբերմունք դէպի քրիստոնեայ պետութեան պաշտօնական ներկայացուցիչը:

Դա Ռուսաստանն էր—այն ժամանակ Մոսկովեան մեծ իշխանութիւնը: Շատ վաղուց չէր, որ նա ազատել էր թաթարական դարաւոր լծից և դեռ, անշուշտ, եռում էր ատելութեամբ դէպի ասիական ստեպաների ծնունդ՝ աշխարհաւեր հօրդանները: XV-րդ դարի վերջերումն էր, որ Մեծ Իշխան Իվան III մտաւ սուլթանի հետ յարաբերութեան մէջ, զրկեց Պոլիս (1499-ին) յատուկ պատերազմութիւն, որի գլուխ էր կանգնած Միխայիլ Պլէչչէեւի Մեծ եղաւ բոլորի զարմանքը, երբ վերջինը սուլթաննիստ մայրաքաղաքը ոտք դնելիս, յայտարարեց, որ չպիտի ենթարկուի պալատի մէջ ընդունւած էտիկետին, չպիտի հագնի փաշայական զգեստ, չպիտի շոքի սուլթանի առաջ, այլ պիտի խօսի նրա հետ կանգնած. այդպէս էր հրամայել Մոսկովի Մեծ Իշխանը և... սուլթանը համակերպում է:

Այդպէս էր Ռուսաստանի առաջին թատերամուտը Կ. Պոլսում, Արևելեան Խնդրի հսկայական բեմի վրայ, և Պլէչչէեւի այդ առաջին խրոխտ ժեստի մէջ ծայր էին տալիս այն հեռաւոր և ահաւոր որոտները, որ պիտի գային երդւեալ Ոտիտի, «Մոսկովի» կողմից՝ սասանեցնելու Մահմեդների ու Սոլիմանների մեծաշուք գահը...

Նոյն հպարտ և խրոխտ ընթացքին հաւատարմօրէն հեռեւեցին Մոսկովի իշխանները XVI-րդ դարու մէջ: Նրանք չունէին մշտական ներկայացուցչութիւն Կ. Պոլսում (այդպիսին հաստատուեց միայն Պետրոս Մեծի օրով), այլ միայն պարբերաբար, այս կամ այն առթիւ ուղարկում էին արտակարգ պատերազմութիւն, ամեն անգամ խստիւ պատերազմով նրանց՝ չձգել Մոսկովի արժանապատուութիւնը նւաստացուցիչ արարողութիւններով, «ողջունել սուլթանին» ձեռքերը խաչաձև և ոչ գետ-

նատարած և հարցնել սուլթանի առողջութիւնը միայն այն ժամանակ, երբ նա ինքը կը հարցնէ Մեծ Իշխանինը:

Այո, մահմեդական բռնակալութիւնը իր անվրէպ բնազդով այն օրերից արդէն զգաց «Մոսկովի վտանգը», Որքա՛ն դեռ փոքրիկ էր այդ Մոսկովեան իշխանութիւնը... Եւ, սակայն, թիւրքական երկիւղն ունէր իր շատ հիմնաւոր պատճառները: Արևմտեան պետութիւնները, բաժանւած ու իրարու մրցակից... նրանցից վախ չունէր փատիշահը: Այլ բան էր այս նորակազմ, փոքրիկ «Մոսկովը», որի պետը իր տիրոջներէ շարքում կրում էր և «Բուլգարիոյ իշխան» տիտղոսը և որ արդէն ջերմ մտահոգութիւն էր ցոյց տալիս դէպի թիւրքական լծին ենթարկւած իր դաւնակից քրիստոնեայ ժողովուրդները... Չգտում էր—յամառաբար, տոկունութեամբ—միշտ ակելի և ակելի մօտենալու այդ սարկացւած քրիստոնեայ «ռայաններին», կապելու նրանց հետ, շահելու նրանց բնական, ցեղակցական համակրութիւնը:

Եւ այդ յամառ ձգտումը ջարտնակեց մինչև Պետրոս Մեծի օրերը, երբ նա մշակեց ու վերածեց մի հոյակապ սիտեմի, երբ ծրագրեց ընդարձակել Մոսկովի տիրապետութիւնը բոլոր ուղղութիւններով և մանաւանդ դէպի հարաւ ու արևելք, ի հաշիւ մահմեդական պետութիւնների, թիւրքիոյ, Պարսկաստանի...

Թիւրքիոյ դէմ ծրագրած իր արշաւի մէջ՝ Ռուսաստանը որոշեց յենւել սլավոնների և յոյների վրայ պարսկական արշաւի մէջ—հայերի վրայ:

\*\*\*

Խաչակիրներ այլ ևս չկային: Կային, սակայն, եւրոպական քրիստոնէութեան մէջ, Արևմուտքում ու Ռուսաստանում գաղտնի և յայտնի «ծրագիրներ», ուղղւած իսլամ ոստի դէմ, ծրագիրներ՝ մերթ խաղաղ անարիւն թափանցումի—առեւտրական արտօնութեանց ու կապիտալիստիոնների ճանապարհով—մերթ գալոց արևմտահեզ բաղխումների և հողային նւաճումների:

Եւ այնտեղ, հեռուն, մահմեդական լծերի տակ բաւաշող ժողովուրդները, որ երկար դարերից ի վեր անձկութեամբ նայել էին դէպի Արևմուտք, ակնկալելով այնտեղից իրենց վերջնական ազատագրումը իսլամական անհանգուրժելի տիրապետութիւնից—այդ ժողովուրդները չէին կարող, բնականաբար, չյուզելի, չքաջալերելի արևմտեան և հիւսիսային այդ սպառնազին որոտումներից: Նրանց գիտակից տարրերը նշմարում էին արդէն մօտալուտ արշալոյսները և շտապում էին օգտուիլ ժամանակի այդ փրկարար հոսանքներից:

Հայութիւնը, բաժանւած երկու իսլամ բռնակալութեանց միջև, հաւասարապէս ճնշւած ու սարկացւած երկուսի մէջ, հաւասարապէս ենթակայ ֆիզի-



կական ու հոգեկան այլասեռման,—հայութիւնը մասնաւորապէս ցոյց էր տալիս այն հեռուոր ժամանակում, ի դէմս իր լաւագոյն տարրերի, մի նետարդային ու մարտական տրամագրութիւն, որպիսին զուր կը փնտրէք այնուհետեւ, ամբողջ երկու դար տարածութեան վրայ, մինչև մեր վերջին բառագարեակի ազատագրական շարժումները Թիւրքահայաստանում ու Կովկասում:

Պարսկական Հայաստանում էր, որ ծայր տեղցայն առաջին լայն, ազատագրական խորումը, այնտեղ էր, որ ցեղի առաջապահ տարրը իր նուրբ հոտառութեամբ զգաց ժամանակի ազատաբեր հողմերի ոգին և աճապարեց օգտելու նրանցից: Բայց... օգտելու՝ ոչ իբրև ինքնուրու, կրակորական համայնք, այլ իբրև ըմբոստ, յեղափոխական մի ժողովուրդ: Որովհետև այնտեղ, պարսկական հատուածի մէջ էր հերոսապաշտ լեռնաստանը—Ղարաբաղը—որ իր անառիկ բարձունքների և կուսական անտառների մէջ միշտ վառ էր պահել ըմբոստութեան ջահը, հանդիսանալով մէկը, թերևս խոշորագոյնը այն փորրաթիւ օվաղիսներից — Սասուն, Մոզք, Շատախ, Ջէյթուն և այլն—որոնք ստրկութեան դարաւոր ու միապաղաղ անապատի մէջ մի յայտնի չափով փրկել, բարձրացրել են գեղի տրուած արժանապատուութիւնը, առաջնորդել նրան դէպի մարդկայնութիւն ու ազատութիւն:

Իսրայէլ Օրին գնում էր Եւրոպա 17-րդ դարի վերջերում—օգնութիւն հայցելու զօրաւորներից, բայց գնում էր ոչ թէ 19-րդ դարավերջի Բրուսալիների ու Չերազների պէս, իբրև սոսկ աղբրսող, նօտերով ու յիշատակագիրներով բեռնաւորած, այլ իբրև մի ըմբոստ ու լայնածաւալ հայագաւառի ներկայացուցիչ, որ պատրաստ էր իր արխունով իսկ հարթելու ճանապարհը՝ հայրենիքի անկախութեան համար: Բայց նա գիտէր, այդ քաջարի լեռնաստանը, որ սոսկ իր ուժերով չպիտի կարողանար տապալել թշնամի բռնապետութիւնը, ուստի և դիմում էր արևմտեան իշխանների օջակցութեան:

Իսրայէլ Օրին առաքելութիւնը...  
 Հաս է արդէն գրել մեր մամուլի ու գրականութեան մէջ այդ առեղծւածային մարդու մասին—և այսօր տակաւին շատ բան մթութեան մէջ է: Տարաբախտաբար, շօշափելի հետքեր չեն մնացել հայոց ազատութեան այդ նշանաւոր առաքելից, որ մօտ 20 տարի ապրել է Եւրոպայում, եղել է 6 տարի զինուորական ծառայութեան մէջ Ֆրանսիայում, ունեցել է ընտանիք գերմանական Դիւսելդորֆում: Ոչ իսկ մի հատիկ ինքնագիր... Պատմական վաւերագրերի մի մասը անհետացել է: Այնուամենայնիւ, մի շարք ուշագրաւ դոկումենտներ պահել են,—գլխաւորապէս Միւնխենի պետական արշիւներում. մի բանիսն էլ՝ Վօսկլայի ու Վիեննայի պետական մատենների մէջ:

Օրին անձնաւորութեան և միասնի շուրջը շատ է գրել նաև Եւրոպական գրականութեան մէջ: Ընդարձակ է ենթագրութիւնների, հիպօթեզների դաշտը և նա ազատ ասպարեզ է տալիս ամեն տեսակ, յաճախ ամենահակասական մեկնութիւնների: Ոմանց կարծիքով, հայոց անկախութեան այդ ահաջիրտն մի չափազանց յանդուգն ու հերոսական դէմք է, ուրիշների ասելով՝ մի սոսկ արկածախնդիր: «Ես չափազանց մեծ անվստահութիւն եմ տածում դէպի այդ հայը»—*Ich hege das allergrösste Misstrauen gegen diesen Armenier*—ասում է Միւնխենի պրօֆէսոր Հայգել, 1893 թ. իր ուշագրաւ զեկուցման մէջ, ներկայացւած Կ. Բապար. գիտական ճեմարանի փիլիսոփայա-լեզուագիտական և պատմական բաժանմունքին \*): Մինչդեռ նրա հայրենակից Ֆինկը հիացմունքով ու ոգևորութեամբ է խօսել Օրինի ծրագրի համարձակութեան ու հանձարեղութեան մասին (*Kühnheit und Genialität seines Kriegsplanes*):

Համեմատաբար նպաստաւոր կարծիք է յայտնում—Հայգելի ծայրայեղ թերահաւատութիւնը մերժելով—նաև Մօրիս Միւրէ, որ զետեղել է մի յօդւած 1898-ին Լօզանի նշանաւոր հանդէսի մէջ, հետեւել վերնագրով:

«Հայ խաչակրաց արշաւանքի մինախագիծ 1700 թ. ի ն» \*\*):

Հայգել դատում է բացարձակապէս *à la légère*, նրա զեկուցման մէջ, տարաբախտաբար, չենք գտնում անաչառ ու թիւն, որ առաջին պայմանն է պատմական լուրջ հետազօտութեան: Այդ ընդարձակ զեկուցման մէջ հեղինակը, հեզնելով հանդերձ Պֆայլի իշխանի սնափառ և յախուռն տենչանքները, հեզնում է և նրա հովանաւորեալ Օրինին, դուրս է բերում նրա ամբողջ ծրագիրը, որպէս մի պարզ, արկածախնդիր և փառամոլ շանտաժիստի յղացում, անարժան որևէ ուշագրութեան Օրին—մի խարդախ առևտրական, ինչպէս բոլոր արևելցիք... «*Es ist ja eine bekannte Thatsache dass die Handelsleute Armeniens allen anderen Orientalen, auch Griechen und Juden an Schlauheit und Findigkeit überlegen waren*...» «Յայտնի իրողութիւն է—ասում է Օրին գերմանացի դատախազը—որ Հայաստանի վաճառականները խորամանկութեան և հնարագիտութեան մէջ գերազանցում են բոլոր արևելցիներին, անգամ յոյներին ու հրէաներին»...

Եւ այդպիսի հապճեպ, թեթեւամիտ ընդհանրացում—

\*) Karl Theodor Heigel. — Չեկուցում-դասախօսութեան վերնագիրն է. «Պֆայլի իշխան Եօհանն Ալիշէլֆի ծրագիրը՝ հայ արքայական թագը ձեռք բերելու համար», *Seu Sitzungsberichte der philosophisch-philologischen und historischen Classe der K. B. Akademie der Wissenschaften zu München, 1893, Bd. II, Heft III.*

\*\*\*) *Un projet de Croisade Arménienne en 1700. Bibliothèque Universelle et Revue Suisse, Mai 1898.*



ներով, այդպիսի շարունակ ֆրագներին վրայ Միւնխէնի պրոֆէսորը համարձակ կառուցանում է իր ծանր եղրակացութիւնների շէնքը, ցոյց տալով մի զարմանալի անլընութիւն և մի անսովոր... *Schlagfertigkeit*,

Բայց Հայգել «փաստեր» ունի Օրին, ստում է նա, պարտքեր էր թողել Կրոյցնախի մէջ, որ չէր կարող գանձել (իրեն էին պարտ)... Ի վերջոյ փոխանակում է գրաւածութեանը 500 տալէրի հետ, որպիսի մի գումար ստանալիք ունէր Պֆայլի իշխանական պալատից Դիւսէլգորֆի մի գինեվաճառու Վերջինը խնդրում է իշխանին հրահանգել՝ այդ գումարը վճարելու, որպէս զի Օրին դրամ ունենայ իր մեծ ուղեորութեան համար...

Եւ այդ «փաստ» առիթ է տալիս պարոն Հայգելին՝ կասկածելու Օրինի շահատէրութեան մէջ և արտասանելու մի այսպիսի ֆրագ. «Օրին չի դիմել իր գործին այնպիսի կատարեալ անշահախնդրութեամբ, ինչպէս ինքն է նկարագրում իր նամակների մէջ» («So gänzlich uneigennützig ist Ory nich zu Werke gegangen»):

Այլ «փաստ»՝ Իսրայէլ Օրին, յանձնարարականներ ստանալով Տոսկանայի մեծ իշխանին ներկայանալու համար, ամեն կերպ աշխատում է, որ Իտալիայում հաստատուած իր հայ հայրենակիցները շտեղծկանան իր ծրագրի ու նպատակների մասին...

Այդ ևս խիստ «կասկածելի» է թւում Միւնխէնի դատախազին... «նշու էր թագցնում»... Ասել է՝ «շահատէր դիտաւորութիւններ ունէր, որ վախենում էր, թէ իր հայրենակիցները մերկացնէին ու վտանգէին»:

Բայց Իսրայէլ Օրին թագցնում էր բոլորովին տարբեր մտահոգութեամբ. նա նոյնիսկ մտա 20 տարւայ բացակայութիւնից յետոյ Կովկաս վերադառնալով և գիշերելով իր հայրենական յարկի տակ, նոյնիսկ այդտեղ խնամքով թագցրել է իր ով լինելը՝ հարազատ բրոնզի ու եղբորից Օրին ապրել էր Պարիզի մէջ Լուգովիկոս XIV-ի օրով և լաւ էր իւրացրել «Արև-Արբայի» մինիստրների յայտնի նշանաբանը. «le secret est l'âme des grandes entreprises» (գաղտնապահութիւնը հոգին է մեծ ձեռնարկների): Եւ որքան աւելի անհրաժեշտ էր այդ գաղտնապահութիւնը հայկական միջավայրում, ուր—ինչպէս միշտ—այն ժամանակ ևս վերտում էին լրտեսներն ու մատնիչները:

Ակնարկում են և Իսրայէլ Օրինի ծագման վրայ, կասկածի տակ են գնում նրա մէլիբական ծագումը և այդ էլ մի նոր զէնք է գառնում՝ նրան տապալելու, վարկաբեկելու համար:

Վերջապէս, ահա ջախջախիչ կասկած-մեղադրանքը. Օրին ուզում էր «անուն հանել», գիրք ու հոշակ վաստակել... պրոպագանդ անելով Հայաստանի ազատութեան համար իր գլխու, առանց իր հայրենակիցների գիտութեան...

Ա՛հ, «փառասիրութիւնը»... Վաղուց միջակ ու աշառոտ հոգիները ծառայեցրել են այն, իբրև զէնք նշանաւոր գործիչներին վարկաբեկելու, նսեմացնելու համար նա կայ, սակայն, ամեն տեղ—այդ ճակատագրական բնազդը... Հռչակի ու փառքի—ազնիւ փառքի—այդ տենդային մտահոգութիւնը իր դերն է ունեցել մարդկային ամենավեհ յղացումների ու գործերի մէջ, առանց սուեր ձգելու նրանց մեծ հեղինակների վրայ: Երանի՛ բոլոր փառասէրները լինէին Օրինի պէս, նրա չափ տառապած և մտածած, նրա չափ զրկանք ու զոհողութիւն ճաշակած... Երբ նպատակը այնքան վեհ է, հետապնդումը՝ այնքան ծանր ու զոհառատ, ճանապարհները այնքան ռիսկոտ ու վտանգալի—փառասիրութիւնը և այլ նման նկատուածներն ու մեղադրանքները իրենք իրենց չքանում են ողջամիտ քննադատութեան առջև: Փառամոլներ կան,—մանր, գձուձ կարիէրիտներ—որ զուրկ լինելով մտաւոր ու բարոյական առաքինութիւններից, երևակայում են իրենք իրենց, որպէս կենտրոն աշխարհի կամ շրջապատող միջավայրի, որ ձգում են դեր խաղալ ամեն գնով, շեշտել իրենց փոքրիկ եսը ամենաշնչին պարագտներում, շրջապատել այդ եսը արւեստական հմայքով, ծառայեցնել կարիէրին հանրութեան շահերը և բոլոր իդէալները... Նրանք միշտ էլ մնում են փոքրիկ ու անաղողակ, անփայլ ու արգահատելի, անընդունակ բարձր, ազնիւ թռիչքների և վաղ թէ ուշ մատնում են հանրային մտահոգութեան:

Եթէ Օրին փառասէր էր,—յամենայն դէպս, այդ տիպի փառասէրներից չէր թող անւանեն նրան խնամ, զառանցող, ուսուպիստ... Բայց այն ածականները, որ տալիս են նրան մի շարք անշնորհք դատախազներ՝ պատմութիւնն ու տրամաբանութիւնը յետ կը մղեն արգահատանքով:

Ո՞րտեղից է ստացել Միւնխէնի պրոֆէսորը իր հակաօրիական ներշնչումները, նա ինքը պարզում է այդ իր զեկուցման մէջ: Ազգւած է նա լեհ եղուիտ, պատեր Կրուսի նսկից, որը ակնատես է եղել Օրինի պարսկական պտոյտին 1708 թւին և որի տգեղ աշառոտութեան շարժումները պարզել է Եզեան իր պատկառելի աշխատութեան մէջ \*): Ազգւած է փոքր ինչ նաև Միլիթարեան հայրերից, որոնք ընդունելով հանգերձ Օրինի անշահախնդրութիւնը, պնդում են (ըստ Հայգելի), որ հայ առաքեալը, իր մեծ դատը առաջ մղելու համար, խաբեբայօրէն ընդունել է իր վրայ իշխանական անուն, առանց որի նա երբէք չէր աղողի յարաբերութեան մէջ մտնել թագաւորների հետ \*\*):

\*) Պետրոս Մեծի յարաբերութիւնները Հայ Ժողովրդի հետ:

\*\*\*) Այդ իմաստով Հայգելի մի նամակ է ստացել 1893 թ. յունիսին, Ս. Ղազարի գրադարանապետ Հայր Գարեգինից:





Հայ յեղափոխական շարժման նախածնունդները 17-րդ դարու վերջում և 18-րդի սկզբներում գալիս էր հայկական լղարիկ ազնուականութիւնից,—Ղարաբաղի հայ մէլիքներն ևս, յանձին իր մի քանի համակրելի ներկայացուցիչների, մասնակից էր—[Թոյ], երկչոտ մասնակցութիւն—այդ պատմական ձեռնարկին: 1678-ին էջմիածնում Յակոբ կաթողիկոսի նախագահութեամբ կայացած մի ժողովի որոշումով էր, որ հայկական մի պատգամաւորութիւն, նոյն կաթողիկոսի առաջնորդութեամբ, ուղարկւեց Եւրոպա՝ հայցելու պապի և քրիստոնեայ վեհապետների անկցութիւնը պարսկահայերի ազատութեան համար: Երեքական ներկայացուցիչներ հոգևոր և աշխարհական դասերից, Նրանց մէջ էր մէլիք Իսրայէլի որդի՝ Օրի \*): Պօլիս հասնելով, կաթողիկոսը մեռաւ և պատգամաւորութիւնը ցրւեց, բոլորը վերագարձան իրենց երկիրը:

Չվերագարձաւ միայն Օրին: Նա որոշեց մեն-մինակ շարունակել ծանր առաքելութիւնը, իր սեփական ուժերով, իր անձնական ուսկով: Պէտք էր—ինչ գնով էլ որ լինի—հետաքրքրել վեհապետներին հայկական գառով, ուղղել նրանց ուշադրութիւնը իր թշուառ հայրենիքի վրայ: Գժուարին գործ: «Ցնորական», անկայուն ծրագրի: Այսօր իսկ, երկու ամբողջ դար յետոյ, քաղաքակիրթ և ուսման վար աշխարհի մէջ անհնարին է լինում շահագրգռել իշխողներին ներօտնեան հալածանքների ենթակայ մի ամբողջ ժողովրդի վիճակով: Եւ սակայն... 18-րդ դարի սկզբում այդ մի հատիկ մարդը, Ղարաբաղի հայ ազնուականութեան այդ զարմանալի «դեսպանը», Իսրայէլ Օրին, կարողացաւ այն աստիճան առաջ գնալ իր դեսպանական միսսիօնի մէջ, կարողացաւ իրագործել այնպիսի քայլեր, որոնց մասին երազել անգամ չի կարող ժամանակակից հայ հայրենասէրը:

Մեն-մենակ... նա փորձեց բոլոր ճանապարհները, սպառեց բոլոր միջոցները: Առաջին երկիրը, որի հովանին ապաստանեց նա—Փրանսիան էր: Առաջին վեհապետը, որի վրայ դարձաւ նրա յուսալու հայեացքը,—Լուդովիկոս XIV-ն էր, այն ժամանակ ամենահզօր քրիստոնեայ արքան: Եւ նա վճռեց մօտենալ Պարսկաստան:

\*) Ի՞նչպէս է առաջացել Ի ս Ր ա յ է Լ Օ Ր Ի անունը (Եւրոպայում—Orj)... Հիպոթեզները այստեղ ևս լայն ապարեզ ունին: Ոմանք ենթադրում են, թէ դա նշանակում է «Իսրայէլի որդի Եսաւի», թէ «Եսաւի» բառը յարմարւելով եւրոպական այլ և այլ երկրների հնչույթներին, աստիճանաբար ձևափոխւել է և դարձել ի վերջոյ Օ Ր Ի (Jauri—Jori—Ori—Orj): Որոշ հաւանականութիւն ունի այդ ենթադրութիւնը, ինկասի ունենալով, որ Օրին, յիբաւի գիտէր յարմարեցնել իր անունը այլ և այլ երկրների արտասանութեան: Ռուսաստան անցնելով, նա տալիս էր առասկան վերջաւորութիւն: Յամենայն դէպս, այդ կէտն ևս մեռած է և կը մնայ միշտ առեղծւած:

քայի՞ փառաշուք պալատին, հաստաւեց մօտիկ, վերսալ կամ Պարիզ և սկսեց առևտուր: Պերձանքի իրեղենների վաճառքը դրեց նրան յարաբերութեան մէջ թագաւորի շրջապատի, պալատականների հետ: Եւ Օրին նրանց միջոցով շատ աշխատեց անսակցութիւն ունենալու թագաւորի հետ: Բոլոր փորձերը վիժեցին: Պատճառը: Ասում են՝ որ կաթողիկ արքան չէր համակրում «հերետիկոս» հայերին, յամենայն դէպս, չէր սիրում, որ հայեր հաստաուէին ֆրանսիական հողի վրայ, և այդ իսկ պատճառով բշել աւեց մի խումբ հայերի, որ եկել տպարան էին հաստատել Ֆրանսիայում և որ այնուհետև անցան դէպի աւելի ազատ, համբերատար Հօլլանդիա:

Օրին չարտաքսեցին: Նրան նոյնիսկ ընդունեցին զինւորական ծառայութեան մէջ, ուր մնաց ամբողջ 6 տարի: Բայց նրան չ'ունկնդրեցին: Յուստիարաւած, անցաւ Գերմանիա: Հաստատւեց Գիւսսէլդորֆում և ձեռնարկեց գինու խոշոր առևտրի: Նպատակը նոյնն էր՝ մօտենալ երկրի վեհապետին, որ սերտ, ազգակցական կապեր ունէր մի շարք ուրիշ արևմտեան թագաւորների ու իշխանների հետ: Պֆայլի իշխանը գուցէ աւելի ուշադիր գանւէր դէպի այն մեծ, ցաւոտ խնդիրը, որ ճարակում էր Օրինին:

Եւ իշխանը աւելի քան ուշադիր գտնւեց: Հայ առաքելը մօտեցաւ նրան և կարճ միջոցում հմայեց: Օգնում էր նրան այդ աջողութիւնների մէջ՝ գերմաներէնի ու լատիներէնի իր ծանօթութիւնը, ապա թերևս ամենից աւելի՞ իր ծագումը՝ իշխանական տիտղոսը \*): Պատմեց Օրին մղեռանդ և պապական իշխանին՝ Հայաստանի հալածանքներն ու բռնութիւնները, նկարագրեց վառ գոյներով հայ քրիստոնեայ ժողովրդի տառապանքը մահմեդական ռէժիմի տակ: Գոյները խտացնելու պէտք չկար. հայրենիքի կացութիւնը իրօք դժոխային էր: Բայց միւս կողմից՝ բավարական իշխանին ապահովաբար սիրաշահելու համար, Օրին զարնեց նրա սրտի ամենափափուկ, ամենազգայուն լարերին, վարպետ կերպով նկարագրեց հրապուրիչ հեռապատկերը նոր խաչակրաց արշաւանքի, որ պիտի սկսէր Պֆայլի իշխանը իր անձնական առաջնորդութեամբ և պիտի նւաճէր Հայաստանի թագը... Հայաստանի՝ որ աշխարհի ամենաօրհնւած վայրերից է, ուր կլիման անմահն է, օդը զմայլելի, ուր հարիւրամեայ ծերունիները հազուագիւտ չեն՝ և յն և յն: Այդ հմայիչ պատմութիւնների մէջ պակաս չէր, ան-

\*) Հայ մէլիքները յետագայում իրենց տւած հաւատարմութիւնների մէջ դրում էին Օրիի մասին, որ նա ծագում է Պ ա Օ շ իշխանական տոհմից (Israëlis Orj, qui ducit originem ex familia principum Broschensium), շեշտում էին, որ այդ տոհմը մեծամեծ ծառայութիւններ է մատուցել երկրին, որ նրա մի քանի անդամները շարաշար նահատակւել են իրենց դաւանած հաւատի համար, դրում էին նաև Օրիի կատարեալ անշահանդրութեան և օրինակելի անձնուրացութեան մասին:



շուշտ, ճշմարտութեան բաժինը, բայց այդանց առա-  
տորէն ի գործ գրեց նաև արևելցու վառ ու բեզուն  
երևակայութիւնը, շողորթութեան բնազդը և խորա-  
մանկութեան հնարքները: Սակայն... մոլեռանդ երկըր-  
պագու իր դատի և խորապէս համոզած, որ բոլոր մի-  
ջոցները լաւ են հայրենիքը մասնագրական արիւնոտ տար-  
տարոսից փրկելու համար,—Օրին գնում էր իր ճանա-  
պարհը առանց վարանելու և խղճի ըմբոստացումներ  
զգալու:

Վերջին խոշոր արգելքն էր մեռած—հայերի «հերձ-  
ւածը»... նրա առաջ ևս կանգ չ'առաւ Օրին. նա յայ-  
տարարեց, որ հայ ժողովուրդը, իր անել վիճակից ազատ-  
ւելու համար, պատրաստ է գրկելու պապականութիւն:  
Հայ քարոզիչը ինքն, անտարակոյս, մտածում էր, որ հայ-  
կական անկախութիւնն իրագործելու համար վառ չէր  
լինի և մի այդպիսի թռիչք անել, համոզած լինելով,  
մանաւանդ, որ էական տարբերութիւններ չկան քրիս-  
տոնէութեան երկու դոգմապաշտ եկեղեցիների միջև:  
Բայց իսրայէլ Օրին գիտէ՞ր արդեօք, որ հայ ժողովուրդը  
զանգւածօրէն ու յօժարակամ դժուար կ'ենթարկէր  
հաւատափոխութեան... թէ՞ գուցէ նա համոզած էր  
հակառակի մէջ: Ըն ա՞րք էր արդեօք, որ գործ էր  
դնում հայկական դատի պրօպագանդիստը՝ իր իշխանա-  
կան ունկնդրին վերջնականապէս գրաւելու համար, թէ՞  
գուցէ կարծում էր շիտակօրէն, թէ հնարաւոր էր գա-  
ւանափոխութիւնը... Ո՞վ կարող է կռահել:

Յամենայն դէպս, «հնարքը» ներգործեց: յճմարիա  
հաւատի բերել արևելեան հիմնուրը և խելացի մի ժո-  
ղովուրդ—դա այն ժամանակայ մի մոլեռանդ վեհա-  
պետի համար ամենահրապուրիչ երազներից մինն էր:  
Սակայն, Պֆալցի կուրֆիւրստին հաւանականօրէն, ամե-  
նից աւելի կախարդել էր շայաստանի թագը (այս կէտի  
վերաբերմամբ Հայգէլ թերևս չի սխալուում իր գնա-  
հատութեան մէջ), և նա յափշտակեց Օրինի ծրագրով,  
ուեց իր փութկոտ համաձայնութիւնը, խոստացաւ կանգ-  
նել ազատարար բանակի գլուխ և ճամբեց Օրին դէպի  
Հայաստան (1698 թ.) իր յանձնարարական նամակնե-  
րով ուղղած հայոց կաթողիկոսին, մէլիքներին և վրաս-  
տանի թագաւորին: Այնտեղ Օրին պիտի խորհրդակցէր  
հայ երևելիների հետ և պիտի մշակէին արշաւանքի  
ծրագիրը:

Երկար է իսրայէլ Օրին արկածների շարանը, — մեր  
նպատակից դուրս է՝ պատմել նրանց մանրամասնօրէն:  
Ղարաբաղ գալով, նա անյապաղ ժողով է գումարում  
Գանձասարի վանքի մէջ, տեղական հայրենասէր կաթո-  
ղիկոսի մօտ, մի քանի կղերականների և մի տասնեակ  
մէլիքների մասնակցութեամբ: Եւ Օրին պատմում է իր  
եւրոպական քանամեայ պրօպագանդի արդիւնքը, հա-  
զորգում է Պֆալցի իշխանի խոստումները, կարդում է  
նրա նամակը... Անօրինակ խանդավառութիւն գաւառա-

փոխութեան կէտը միայն պաղ ջուր է ցանում հոգևո-  
րականութեան ներկայացուցիչների վրայ. նրանք հեռա-  
նում են և ժողովը պառակաւում է՝ Օրինի մի վայր-  
կեան թւում է, թէ բոլոր յոյսերը խորտակեցին...  
Առանց կղերի մասնակցութեան նրա ծրագիրը ջուրն էր  
ընկնում: Այնուամենայնիւ նա չվհասուեց: Մէլիքները—  
ժողովրդի աշխարհական պարագլուխները — պատրաստ  
էին մանելու Հոռմի եկեղեցու գիրկը, միայն թէ—ասում  
էին նրանք — թող ազատարար իշխանը փութացնէ իր  
արշաւանքը:

Մի նոր ժողով—Սիսեան գաւառի Անգեղակոթ գիւղի  
մէջ: Մէլիքներն են միայն: Օրին նորէն կարդում է  
բավարական իշխանի նամակը և լրացնում իր անձնա-  
կան բացատրութիւններով: Որոշում են պատասխանել  
իշխանին.

«Փառք Աստուծոյ—գրում էին մէլիքները—մեզ ոչինչ  
չի պակսում՝ իրագործելու համար ծրագրած արշա-  
ւանքը, ոչ խանդավառութիւն, ոչ դրամ, ոչ էլ զինավարժ  
մարդիկ. մեզ պակսում է միայն մի առաջնորդ, հրա-  
մանատար»...

Եւ ահա, զինւած մէլիքների վստահութեամբ, նրանց  
նամակով, Օրին դիմեց նորէն Եւրոպա, 1699-ին: Ցա-  
նում էր նա մէլիքների ուրիշ նամակներ ևս՝ պապին  
և Պետրոս Մեծին: Նորէն—Գիւսսէլգորֆ: Օրին յանձ-  
նեց Պֆալցի իշխանին մէլիքների նամակը, ուրագծեց  
արշաւանքի ծրագիրը: Իշխանը պէտք է անձամբ առաջ-  
նորդէր նոր խաչակրաց արշաւանքը, բայց հարկ էր  
գտնել ուրիշ գաշնակիցներ. հարկ էր դիմել պապին,  
գերմանական կայսրին, Ցոսկանայի մեծ իշխանին, նաև  
Լեհաստանի թագաւորին ու ցարին, քանի որ վերջին-  
ների հողերով է, որ պիտի անցնէր ազատարար բանակը:  
1700-ի մայիսին այդ բանակը պիտի կտրէր Քօհէմիան,  
Լեհաստանը, Ռուսաստանը մինչև Մոսկւա, ապա Վոլ-  
գայով ու Վասպից ծովով պիտի սահէր նաւերի մէջ  
մինչև Պարսկաստանի սահմանները. ենթադրաբար տեղ  
պիտի հասնէր հոկտեմբերին: Առաջին պարսկական քա-  
ղաքը—Շամսին—գիւրութեամբ պիտի գրավէր. խա-  
չակիրները երևալուն պէս, 10,000 հայ մարտիկներ  
սպառազէն ոտքի պիտի կանգնէին ու միանային նրանց:  
Ապա ազատարար բանակը, չորս գունդերի բաժանուած,  
պիտի նետէր այլ քաղաքների ու ամրոցների վրայ և  
կարճ միջոցում պիտի տիրանար երկրին... քանի որ հայերը  
պիտի կարենային առատօրէն մատակարարել մարդ-  
դրամ, զէնք ու ռազմամթերք, քանի որ միւս կողմից,  
վրաստանի թագաւորն ևս պիտի տար օժանդակ զօրք,  
քանի որ, վերջապէս, ինքը թշնամին ունէր միայն հա-  
մեմատաբար շնչին բանակ իր տրամադրութեան տակ:  
Վուրֆիւրստի յանձնարարականներով Օրին նորէն սկսեց  
պտոյտ—այս անգամ Եւրոպայում: Իտալիայում—սիրա-  
լիք ընդունելութիւն և օգնութեան խոստումներ պա-



պից, որին շլացնում էր հայ ժողովուրդը կաթօլիկոթեան գիրկը բերելու հեռանկարը. ապա մի մի այց Ցօսկանայի մեծ իշխանին, գերմանական ու լեհական թագաւորներին Գերմանիոյ կայսրը նոյնպէս խոստացաւ նպաստել հայերի ազատութեան, բայց հասկացրեց, որ առանց Ռուսիոյ ցարի համաձայնութեան՝ գործը չի կարող գլուխ գալու եւ ահա Լեօպօլդ կայսրի ու Պֆալցի իշխանի յանձնարարականներով «հայոց դեսպանը» — *Armenus ex principum Broschensium* (ինչպէս գրում էր Լեօպօլդ կայսրը Պետրոս Մեծին) — գնաց Մօսկա:

Ո՞վ զարմանք Ցարը հրահանգում է փռօռհեղ ընդունելութիւն անել Օրինի Զինւորական մի պահակախումբ հետևում է նրան ամենուրեք և ոսկեգօծ կառքերը սպասում են նրան դռան առջև Պետրոսը ամենայն ուշադրութեամբ ուկնդրում է իր հիւրին, որի առաջարկած ծրագիրը ոգևորում է նրան, քանի որ միանգամայն համապատասխանում էր ցարական աշխարհակալութեան տենչանքներին մօտիկ Արևելքուս: Խանդավառութիւնը այնքան մեծ է, որ Պետրոսը շուտով գրում է իր դրական պատասխանը Պֆալցի իշխանին, շնորհում է Օրին գնդապետի աստիճան և հրահանգում է անյապաղ պատրաստութիւններ տեսնել արշաւանքի համար:

Սակայն... հայութեան բախտից՝ պատահարներն ու արգելքները անպակաս էին և այն օրերում, ինչպէս նորագոյն ժամանակներում. բորբոքած էր ռուս-շվեդական պատերազմը, որ վերջ չունէր «Հայկական արշաւանքը» պիտի կազմակերպէր խաղաղութիւնը հաստատելուց յետոյ, — այդպէս էր ծանուցել Պետրոս Մեծը: Եւ Օրին սպասեց, սպասեց Մինչ այս, մինչ այն՝ արամադրութիւնները փոխեցին Պֆալցի արքունիքուս նոր պատերազմներ ծագեցին Արևմուտքում և Պֆալցի իշխանը խորասուզեց այլ կարգի մասհոգութիւնների մէջ: Մոռացաւ Հայաստանն ու Օրին: Ո՞վ գիտէ, գուցէ իշխանը մտածում էր նաև, որ «Մօսկօվը» հայ խաչակրաց արշաւանքի մէջ մտնելուց յետոյ՝ Հայաստանի թագը այլ ևս չպիտի հասնէր իրեն, իշխանին, այլ աւելի հաւանականօրէն... Պետրոսին:

Յուսախաբուութիւն յուսախաբութեան վրայ... Հարւածները անողոր էին, բայց Իսրայէլ Օրին վհատել չգիտէր: Նա թողեց բոլոր արևմտեան միապետներին և իր դիմումներն ու յոյսերը կենտրոնացրեց Ռուսաստանի մէջ: Ցարը, կաշկանդած լինելով հիւսիսային պատերազմով, կամեցաւ *en attendant* որոշ «խաղաղ ցոյց» սարքել ի նպաստ հայերի և հայկական առաքեալի միջոցով: Նա զրկեց «գնդապետ» Օրինի «դեսպանական միսիօնով» պարտից Շահի մօտ՝ պարսաւելու վերջինիս այն բռնութիւնների ու հարստահարութիւնների համար, որ կրում էր հայ ժողովուրդը՝ Նոյն Շահին ցարական

դեսպանը տանում էր ցուցարար նամակներ Պֆալցի իշխանից, Լեօպօլդ կայսրից և Հոսթի պապից:

Լեհ եզուիտ Վրուսինսկի պատմում է մանրամասնել Օրինի այդ ուշագրաւ «դեսպանութեան»: Երկու հարիւրի չափ ռուս ու հայ պահակների շքախումբով ցարի պատերազմը մուտք է գործում Սպահան եւ խօսում է Շահի հետ գրեթէ սպառնական տոնով. յորդորում է թողնել հայահալած բաղաբականութիւնը, որի հազարաւոր զոհերը ապաստանում են Եւրոպայուս: Այդ յանկարծակի յայտնութիւնը, խօսելու այդ տոնը սարսափ են ազդում Սպահանի ապարանքի վրայ: Օրին առաջնորդած այդ ռուսական վաշտի մէջ պարսիկները տեսնում են մի տեսակ դիտազօրներ, որոնց պէտք է հետևէր նաճողական մեծ բանակը: Ինքը խորհրդաւոր դեսպանը նիւթ է դառնում սարսափեցուցիչ մեկնութիւնների Հայաստանից եկած մի ֆրանսիացի հաւատացնում է Շահի շրջապատին, թէ լուր է տար ծուած, որ իբր շուտով պիտի վերականգնի Հայկական թագաւորութիւնը, ցարի հովանիի տակ, որ խորհրդաւոր դեսպանը պիտի կարգւի թագաւոր, որ նրա անւան ֆրանսերէն անդրատուրը հէնց այդ է նշանակում:

— *Il sera roy!*

Ահաբեկած շահը չինայեց դեսպանին պատիւ ու մեծարանք, ընդառաջ գնաց կիսասպառնական նրա յորդորներին ու պահանջներին, խոստացաւ նրանց իրադրօծել և Օրին մեկնեց դէպի Ռուսաստան, ուր շարունակեց մնալ նախկին սպասողական վիճակուս: Ապարդիւն: Խաչակրաց արշաւանքը չ'եկաւ Պատերազմի հրդեհը բորբոքել էր Եւրոպայի այլ և այլ ծայրերում և վեհապետները ժամանակ չունէին մտածելու արևելեան հեռաւոր նահապակ ժողովրդի մասին: Ինքը Օրին շատ չ'ապրեց այնուհետև... չկարողանալով, թերևս, դիմանալ այնքան անողոր հիասթափութիւնների, խորտակելով, թերևս, երկար տարիների անդուլ, լարւած, ճիգառատ աշխատանքի բեռի տակ... 1711 թ. նոյեմբեր 7-ին Վազանի նահանգապետը հաղորդագրում էր Պետրոս Մեծին.

«Ներկայ տարւայ սեպտեմբերին Աստրախանի գերագոյն-հրամանատարը գրում էր, որ Հոսթի պապի դեսպան Իսրայէլ Օրին ժամանել է նաևով ծովի այն կողմից և մօտ մի ամիս ապրելուց յետոյ, վախճանել է օգոստոս ամսին և թաղել իրենց օրէնքով: Աստրախանի հայոց եկեղեցու մօտ...»

*Finis Armeniae!...*

Մեռաւ Իսրայէլ Օրին, գերեզման տանելով իր հոյակապ ծրագիրը և իր չքնաղ երազները: Շարունակող այլևս չ'եղաւ Օրինները շատ չ'են ծնւում: Սրբազան դատի զինակիցները արին դարձեալ մի բանի քայլեր, դիմումներ նոյն նպատակով: Թայց Օրին նրանք չ'էին հասնի... Ոչ իսկ ամենաեռանդուն, գաղափարական զինակիցը, Խարբերդցի Մինաս վարդապետը: Մի խո-



աւեր իջաւ հայկական հողի վրայ մեծ հայրենասերի  
անկնկալ, վաղաժամ մահով. եթէ անգամ նրա տնչանք-  
ները երբեմնապէս սահում էին դէպի ուսուցիչայի, ցնորա-  
կանութեան աշխարհը.— յամենայն դէպս նա իր անօրինակ  
եռանդով և իր անշէջ հաւատով ջերմութիւն ու ոգևո-  
րութիւն էր հաղորդում հայկական կիսամեռ միջավայ-  
րին և նրա հմայքի ու տնչային գործունէութեան  
ցոլքերը պիտի երևային շուտով Սիւնեաց աշխարհի արիւ-  
նահեղ կռիւների, Գաւիթ բեկի հերոսական թռիչք-  
ների մէջ...

Այո, բոլոր միջոցները սպառեց, բոլոր անկրկները  
պրպրտեց իր յուսամբաւ և անհանգիստ, դիւանագիտա-  
կան հայեացքով, բախեց բոլոր գոները, թափեց անբաւ-  
ճիգ ու քրտինք՝ իր լքած ու բազմաաւանջ հայրենիքին  
ազատութիւն բերելու համար:

Ուր է «խաբեբան», «շանաթիսաւր»: Ուր են մնում  
Հայգէղների անարգական, երևակայական ածականները..

Եթէ «հայոց դեսպանը» 17-րդ դարի վերջերում  
կարողացաւ այն աստիճան առաջ գնալ իր քաղաքական  
կարիէրի մէջ, կարողացաւ այնպիսի պաշտօններ ստանձ-  
նել ու կատարել և այնքան վստահութիւն ու համա-  
կրօնութիւն չահել թէ եւրոպական շրջաններում և թէ  
իր ազգակիցների մօտ,— այդ ահագին առաջխաղացու-  
թիւնը նա, անտարակոյս, պարտ էր ոչ միայն  
իր «արևելեան խարդախութեան» հնարքներին և ոչ միայն  
«արտաքին պայմաններին», պատմական նպաստաւոր մի-  
ջավայրին, այլ և իր ներքին, անհատական առանձնա-  
յատկութիւններին, իր մտաւոր, քաղաքագիտական պատ-  
րաստութեան, իր ընդարձակ ծանօթութեան հայրենիքի  
անցուղարձերին, պատմութեան ու պետութիւնների մի-  
ջազգային յարաբերութիւններին, իր լեզական հմտու-  
թիւններին և, վերջապէս, իր բարոյական յատկութիւն-  
ներին, իր զգայուն սրտին և խանդավառ ու ճարակող  
հայրենասիրութեան:

Ինչ-մենակ՝ Իսրայէլ Օրին ցոյց տւեց յետագայ սե-  
րունդներին, թէ ի՞նչ կարող է անել մի հատիկ մարդ,  
գաղափարական, կամքոտ և իդէալով սոցորւած մի ան-  
հատ, ինչ զօրաւոր խօջընդոտներ կարող է նա յաղթա-  
հարել, ինչ հրաշալի ուժ ու եռանդ կարող է նա ծա-  
ւալել ստրկութեան ու անտարբերութեան անպատի  
մէջ՝ մի ազնիւ գատ վարելու համար:

Սերունդները երախտագէտ կը մնան յաւէտ— և «Ղա-  
րաբաղցի արկածախնդիրը», չնայեած մի երկու չարա-  
խօս ու մակերեսային գատախաղների բացասական գնա-  
հատումներին, կը մնայ միշտ հայկական սգաւոր պան-  
թեօնի վարդերից մինը...

Մ. ՎԱՐՍՆԱԾԱՆ

Թ Ե Ր Թ Օ Ն  
Ո Ր Պ Է Ս Հ Է Գ Ի Ա Թ

II

Գ Ո Ի Լ Է Ն

«Ենչ խօրն էն, ի՞նչ նախուռն էն  
ձողիկներ, ջան, ջան»:

Նա տասն-տասնմէկ տարեկան էր, և այնպէս դաշար,  
այնպէս փխրուն, որ իր տարիքից էլ աւելի փոքր էր  
երևում:

Կապոյտ, խոշոր աչքեր ունէր և գանգուր շէկ մա-  
ղբը, որոնք անփոյթ պճրանքով թափւած էին ուսերին,  
ճակատին, որպէս ոսկեայ փունջեր:

Միշտ ուրախ ու կայտաւ՝ այդ գողտրիկ աղջիկը  
գիտէր ծիծաղել այնպէս բարձր, այնպէս հնչուն:

Նրա խնկական զարդը իր մանուկ, յստակ ձայնի ար-  
ծաթ ելեւէջներն էին, որոնք աղբրի կարկաչի պէս լսոււմ  
էին նրա մատաղ թրթռուն կրծքից:

Անհունօրէն հրապուրիչ էր նա, որպէս երազ, երբ  
գանգուրները ցնցելով՝ գլուխը յետ էր ձգում և աչ-  
քերը վառ, այտերը կարմիր, բրբջում էր երկար ու անուշ:  
Եւ գուլէն շարունակ բրբջում էր:

Եթէ չէր ծիծաղում անձնատուր խաղի, կամ տիկ-  
նիկի, ապա երգում էր այնպէս չքնաղ, այնքան միամիտ  
Բառեր քիչ գիտէր, հատ-հատ այս կամ այն երգից,  
յաճախ ինքն էր յօրինում, խառնում իրար բոլորը ու  
երգում պատահաբար լսած որևէ եղանակով:

Երգ ու ծիծաղ, խի՞նդ ու պար էր այդ փոքրիկ  
աղջիկը:

Եւ մայիսի սկզբների մի ցողազարդ ու շողազարդ  
առաւօտին՝ Գուլէն դաշտ գնաց— մայրն ուղարկեց նրան  
բանջար քաղելու:

Ինչպէս միշտ, նա գլխաբաց էր ու ոտաբօրիկ. միայն  
այսօր առաջը փոքրիկ կարմիր գոգնոց էր կապել և  
ձեռքին փոքրիկ շղթիկ ունէր: Աղջիկը խայտալով, եր-  
գելով իջաւ ձորակը, անցաւ կարկաչուն վտակը, բարձ-  
րացաւ հանգիպակաց բլրակը, ու ծածկեց:

Գարնանային դաշտը ծովի պէս ծփփում էր լոյս ու  
ծաղկի երփներանգ խաղերով: Արա ու արօտ, մարգ ու  
խոտաբք փուռւմ, ձգոււմ էին դէպի անծայրածիր հե-  
ռուն ու կաթնաւուն մշուշի մէջ յորթում:

Վաղորդեան գաղջ ցոլքերի տակ՝ կապուտակ ու գե-  
ղանիստ լեռները քնաթափախ գեղեցիկուհիների պէս  
յօրանջելով ու նազանքով հևում էին մեղմիւ, ժպտում  
արևին ու երկնքին:

Եւ փոքրիկ աղջիկը մեն-մինակ գնում էր դաշտերով  
թեթևաբայլ ու խայտալով, ինչպէս մատաղ եղնիկ:

Հովը խաղում էր նրա գանգուրների հետ, խառնում,  
ցրիւ տալիս, թափում ճակատի վրայ, ծածկում աչքերը.  
Գուլէն իր նուրբ մատներով յետ յետ էր տանում մա-  
ղբը աչքերի վրայից, դնում էր գլուխը ու առաջ  
գնում: Նրան մերթ գրաւում էին մեծ, խայտաբղէտ  
թիթեռները, որոնց լայն թևերի վրայ ասես պլպլուն  
աչիկներ կային, մերթ բազմաթիւ բղէկները, որոնք  
շողերի տակ փայլում էին, ինչպէս ոսկեփոշու մշուշի



մէջ, ապա ծաղկից՝ ծաղիկ էին անցնում ու յանկարծ կորչում, չգիտես ո՞ւր...

Աւ երկինքն այնպէս յստակ էր ու կապոյտ, մթնալորաբ բուրմունքով ու ցուքերով լեցուն՝ այնպէս գուրգուրիչ էր, այնպէս խառնեցուցիչ

Աւ հազար կողմից, որպէս գիւթական օրոր՝ բարձրանում էր մի մեղմանուչ զրնգոց, անծայր ու գողզոջ թւում էր, թէ հեռու, ցնորական անտառներում, ծառերից կախած բիւրալար նւագարաններ կան, որոնք մեղմիւ հեծեծում են զեփիւռի հպումից:

Ամենից աւելի Գուլէին գրաւում էր այդ զրնգոցը, որ չգիտեր, ո՞րտեղից է, ո՞վ է նւագում, ե՞րբ է, թէ լաց է. նա կանգ առաւ բերանաբաց, խոշոր աչքերն անթարթ ու երագուն, գլուխը մեղմիւ թեքած մի կողմի և մազերը հովին աւած, ականջ էր դնում խորհրդաւոր զրնգոցին... ու նրա մանուկ հոգին լուծւում, խառնւում էր այդ գիւթական ներդաշնակութեանը, որի ինչ իննելը խուսափում էր նրա իմացականութիւնից:

Յետոյ ժպտաց՝ ինչպէս ժպտում են հեռաւոր երագին, ապա առանց պատճառի ուրախաձայն ճիչ արձակեց.

— Ա՛՛՛... ա՛՛՛...

Այդ ձայնի վրայ ոտքերի տակից մի լոր թռաւ ու ժգին թրպրտոցով, Գուլէն վայրկենական զարմանքից յետոյ՝ սաստիկ բրբռաց. նրան անասելի հաճոյք պատճառեց լորի վախուչ փախուստը:

Բարձր ու փշոտ թանթուվնու վրայ նստած էր մի մեծ, կարմիր բզէզ, որ թիկունքին սև բծեր ուներ.

— Ձատիկը, բացականչեց երեսան ու բռնեց: Բզէզը նրա փոքրիկ արի մէջ սուււ-մեռուկ արեց, Պաց անշարժ. Գուլէն նայում էր, մատով շարժում ու ժպտում, ու բզէզը յանկարծ բացեց թևերը, թռաւ ու կորաւ շողերի մէջ. աղջիկը ծափ զարկեց ու բրբռաց նրա յետևից:

Մայրն ասել էր՝ յբանջար քաղի, Գուլէ ջան՛:

Աղջիկը թաղեց արտերի ու խոտարքների կանաչ կածանների մէջ ու սկսեց բանջարներ որոնել: Մերթ երևում էր նրա գանգուր գլուխը, մերթ կարմիր գոգնոցը, ապա իսպառ ծածկւում կրկին:

Նրա փոքրիկ շղթիկը գործում էր, և սիբեխ ու յորթնուկ, խաւրժիլ ու աւելուկ, զոխ ու բոխ, լցւում էին գոգնոցը, որ նա ձախ ձեւերով պինդ հաւաքել էր ու բռնել:

Նա գանգաղութեամբ թափառում էր խոտերի մէջ, և ըստ սովորութեան մեղմիւ երգում էր: Ինչպէս միշտ՝ ինքն էր յօրինում և՛ եղանակները և՛ բառերը, թէ՛ մէկը և թէ՛ միւսները այնպէս միամիտ էին, ու այնպէս քնքոյշ:

Առանց նկատելու և բանջար քաղելով՝ նա դուրս եկաւ արտերից ու մարգերից, հասաւ դարձեալ մի ձորակի, որի խորքից անցնում էր մի գալարուն ձամբար Գլուխը բարձրացրեց և զարմանքով նայում էր... Առաջը ծաղիկների ծով էր...

Նունուֆար ու անթառամ, կարմիր պուա ու վայրի նարգիզներ փարթամ գեղին փունջերով արևի վառ ցուքերի տակ եռում էին սիրազեղ կոյսերի պէս: Աղջիկը նայեց, նայեց աչքերը լայն բացած, ու յանկարծ թափ առած վար վազեց զառիվայրով, երգախառն բացականութեամբ:

Դի՛նչ նախշուն են, ի՛նչ նախշուն են, ջան  
Դ՛աղիկները ի՛նչ խորոտ են, ջան, ջան՛.  
Նա երգում էր ու քաղում, բանջարը մոռացած.

\* \* \*

— Հէ՛յ, աղջիկ, հէ՛յ...  
Խուպոտ ու կոշտ մի ձայն էր, որ յանկարծ լուեց վարի ձամբից:

Աղջիկը սակայն՝ չլսեց.  
Դի՛նչ նախշուն են, ի՛նչ խորոտ են ծաղիկները,  
ջան, ջան՛...

— Հէ՛յ, աղջիկ, հէ՛յ, հէ՛յ.  
Վերստին լուեց անծանօթ ձայնը աւելի բարձր,  
աւելի բիրտ:

Աղջիկը չէր լսում.  
Դ՛աղիկները խորոտ-մորոտ, ջան, ջան՛...

Գուլէն երգում էր ու վազվզում ծաղկից՝ ծաղիկ թիթեռի պէս: Եւ երբ բոլորովին մօտիկ լուող ոսնաձայներից՝ գլուխը բարձրացրեց ու նայեց, նրա առաջը կանգնած էին երկու ձիաւորներ:

Գուլէն յետ տարաւ աչքերի վրայից խոպուկները, նայեց անծանօթներին ու ժպտաց:

Նրանք ցած իջան ձիուց.  
— Այդ ի՛նչ ես անում աղջիկ, հարցրեց նրանցից մէկը, որ թաւ ու երկար բիւքեր ուներ, հաստ յոնքեր, խորը, մութ աչքեր ու մոտ շրթուները...

— Ծաղիկ եմ քաղում... բանջար եմ քաղում...  
Մայրս ասաց՝ զնա՛ բանջար քաղիր... ա՛յ սա բանջար է. նա ցոյց աւեց իր գոգնոցը և դարձեալ ժպտաց, իր խոշոր կապոյտ աչքերը նրանց յառած:

Անծանօթներն իրար նայեցին, մի բանի բառ փոխանակեցին ցածրաձայն:

Լուութիւն տիրեց:  
Բզէզներն էին բզզում, ծղրիտներ ճռռում, լորերն էին սուլում արտերի մէջ, ու խորհրդաւոր զրնգոցը, ինչպէս մի անծայր ու գողզող հեծեծիւն՝ րիւրաւոր լարերից վերստին հնչեց հեռաւոր ցնորական անտառներից:

Հաստ բիւքաւոր մարդը կանգնած աեղում մի ոտքից, միւսին յենեց, շրթուները ծծեց, թուքը կուլ աւեց, յոնքերը կիտեց ու երկու անգամ թաւ ձայնով հաղաց:

Նա մտազբաղ էր: Աջ ձեռքին մտրակը և ձիւ սանձը դողում էին, ու ձախով ջղայնօրէն նա խաղում էր գօտին խրած դաշոյնի փղոսկրեայ կօթի հետ:

Նա նորից նայեց ընկերոջը աչքերն արագ-արագ թարթելով, յետոյ իր շուրջը, հեռուն, խորունկ անհանգստութեամբ բռնւած, նա ըստ երևոյթին շտապում էր մի որոշման յանգելու և առանց խօսքի, լոկ հայեացքով աշխատում էր ընկերոջ միաբլ գուշակել:

Գուլէն անուշադիր գէպի անծանօթները, ասես իսպառ մոռացած նրանց ներկայութիւնն իսկ, յափշտակութեամբ նայում էր այն երկու արտոյաններին, որոնք ձախում էին նրանից այնքան մօտ. յետոյ մի սիրուն թիթեռ անցաւ հէնց նրա առաջից, Գուլէն փորձեց ձեռքի ծաղկէփնջով հասնել նրան, ու երբ թիթեռը խոյս աւեց փախաւ, նա ծիծաղեց անհոգ կերպով:

— Անունդ ի՛նչ է, աղջի՛:  
— Գուլէ:  
— Գո՛ւլէ, դու լաւ աղջիկ ես, արի գնանք ինձ



Հետ, ես բեզ համար նոր շորեր կ'առնեմ, կ'ուզե՞ս խօսողը նոյն մարդն էր, որ աշխատում էր իր ձայնին սալ մեղմ ու համոզիչ շեշտ

— Զէ՛, չեմ գայ, մայրիկս ասաց բանջար բեր...

— Բեզ համար նախշուն թաշկինակ էլ կ'առնեմ, որ կապես գլխիդ:

— Զեմ, չեմ... մայրիկս...

Խօսող մարդը ձին ընկերոջը տւեց և մի քանի բայլ անելով՝ ձեռքը դէպի աղջիկը ձգեց, որը բրբռալով փախաւ լեռն ի վեր:

— Զեմ, չեմ... մայրիկս բանջար ուզեց...

Նա փախչում էր, միշտ մի ձեռքին ծաղիկների փունջը ու միևսով բանջարով լի գոգնոցը պինդ բռնած:

Մարդը բոլոր ուժով վազում էր նրա յետևից:

— Զեմ գայ... չեմ գայ... մայրիկս, բանջարը...

Ու ծաղիկների, խոտերի միջից նա տարում էր ինչպէս հալածական այծեմ, թեթևօրէն ցատկոտում էր քարերի, թուփերի վրայից, մերթ իսպառ թաղում էր կանաչների մէջ, մերթ կրկին յայտնում ու միշտ ծիծաղկոտ, միշտ բրբռալով:

Մարդը դժուարութեամբ էր վազում նրա յետևից, նրա դեղին, հաստ ձգմաները սայթաքում էին խոտերի վրայ, բաղեղներն արգելք էին լինում, բայց նա վազում էր բոլոր ուժով, և իր վազքի մէջ աչքերը փայլատակում էին մութ, վատ կրակով, շունչը բոց էր կարում, և աղջկայ շարունակ խուսափող պատկերը նրա ախտաւոր հոգին էր մտրակում:

Գուլէին բռնել սակայն հեշտ չէր, նա սլանում էր ինչպէս մրկավար ամպերի սոււեր, մերթ իսպառ կորչում էր, մերթ կրկին յայտնում, ու գալարապտոյտ փախչում, փախչում:

Հալածողի հէքը բռնեց ու նա զայրոյթով բացականչեց.

— Կա՛ց, կա՛ց, ասում եմ, ես քո ծիծաղումը... ձիս բեր, դարձաւ նա ընկերոջը, նա ուզում էր ձին նստած հետապնդել աղջկան, և մինչ միւսը շարժեց ձին՝ յանկարծ Գուլէի ոտները խճուկեցին պատուապանների մէջ ու աղջիկն ընկաւ երեսն ի վար՝ առանց թողնելու գոգնոցն ու ծաղիկները:

— Հա՛յ, շան քած... մրմուռաց աւազակը, վրայ հասաւ բռնեց, թափով գրկեց բարձրացրեց ու կատաղօրէն սղմեց բազուկների մէջ, ինչպէս յոգնած շունը բռնում է իր դժուարին որսը:

Աղջիկը թրպրտում էր նրա գրկի մէջ ու յոգնութիւնից բեկբեկուող ձայնով բողբոլում կէս վախով, կէս մանկօրէն անգիտակ.

— Մայրիկս... մայրիկս ասաց, բանջար բեր...

Մայրիկս... մայրիկս...

Ու բրբռում էր լացի պէս, ու լալիս էր քրքրիչ պէս...

Եւ օդի մէջ այնքան շող կար. ու գաշտերում ծաղիկներն այնքան շատ էին, այնքան բուրբուրում...

\*\*\*

Փոքրիկ աղջկան պինդ պահած իր գրկում, յափշտակիչը մտրակում էր իր ձին, կենդանին փնջացնում էր ու սլանում, ձորերով, դաշտերով:

— Մայրիկս... բանջարը... չե՛մ, չե՛մ... մայրիկ ջան, մայրիկ ջան...

— Սուս, սուս...

Աղջիկը բարձրաձայն լացեց, բայց երբ աչքն ընկաւ իր առևանգողին, գլխի փաթեթոցին, թաւ բեխերին, խոր աչքերին, թաց, մտա շրթունքներին, արցունքի միջից ծիծաղեց, անմիջապէս յետոյ լալու համար:

Ապա ձիու վազքը նրան օրօրեց. արևի գուրգուրիչ շողերը նրան թմրեցրին, ու փխրուն դալար իրանը անշարժացաւ առևանգիչի բազուկների վրայ: Այլ թևը կամաց կամաց թուլացաւ բաշ ընկաւ, ու ծաղիկները ձեռքից մէկիկ մէկիկ վար թափուցին, նախ կարմիր պուտերը՝ որպէս արեան լայն բծեր, ապա դեղին նարգիզները, սպիտակ շուշանները, նունուֆարները իրար յետևից շարան-շարան փուկեցին ճամբին փետուած, ցրիւ տւած երազների պէս:

Ձին սլանում էր, արևը շոյում, երեխան աւելի և աւելի թուլանում էր. աչքերը՝ կիսախուփ, բերանը՝ կիսաբաց, նա մեղմիւ հեռում էր, բաշ ընկաւ նաև ձախ ձեռքը, գոգնոցը բացեց և բանջարը նոյնպէս ցրիւ եկաւ, փուկեց անծանօթ ճամբաներին:

Առաջները վերելք էր, ձիու ընթացքը մեղմացաւ:

Գուլէն ցնցեց, աչքերը լայն բաց արեց, շուրջը նայեց, երկինք, սար ու ձոր, անծայր դաշտեր, ու իրեն տանում են, տանում են... գոգնոցը պարապ էր, ձեռքը դատարկ:

Բանջարը... մայրիկս ասաց, բանջար բեր, մայրիկ, մայրիկ, չեմ, չեմ...

Ու նա կրկին թրպրտաց ու հեկեկեց. առևանգիչի երկաթե բազուկները պինդ սղմեցին նրա իրանը, կողքերը ցուլեցին, աչքերից ցայտած արցունքները խոշոր կաթիլներով բաշ ընկաւ բիբերից:

Գուլէն լալիս էր բարձրաձայն:

Փախցնողն այս անգամ կուսացաւ նրա երեսին և իր ահագին բրդոտ թաթը նրա շրթունքներին դրեց.

— Սուս, սուս, Գուլէ ջան:

Աղջիկը բաջալերած՝ այդ յանկարծական մեղմութիւնից, երկու ձեռքերով յետ բաշեց նրա թաթը, ու դարձեալ ծիծաղեց արցունքի միջից:

— Ախր մէջքս ցաւում է... մրմնջաց երեխան:

Յափշտակիչը նրա դիրքը փոխեց, ու կրկին պինդ սղմեց իր գրկի մէջ:

Արևը բարձրացաւ. ճաշը մօտ էր. ձին քրտինքի մէջ կորած՝ սլանում էր ոլորապտոյտ ճամբաներով, Նորանոր լեռներ ու ձորեր յաջորդում էին իրար, ու նրանք գնում էին հա՛ գնում:

Գուլէն նայում էր. անծանօթ վայրերը առժամապէս նրան գրաւում էին, ու ասես մոռանում էր մի վայրկեան, թէ ինքն ո՞ր է, ի՞նչ է կատարում իր գլխին. շշմած, ցնորական վիճակի մէջ, նա նոյնիսկ անորոշ հաճոյք էր զգում այս խելագար վազքից. այս անվերջ օրօրից: Երազ էր այս բոլորը, մի դիւթական հէքիւթ, որ ասես մայրն էր պատմում նրան, իր՝ անուշ, իր քնքոյշ ձայնով:

Սըմբը ղուշը իր փետուրը տւեց սիրուն աղջկան ու ասաց, երբ դու նեղութեան մէջ կը լինիս, վառիր փետուրը, ու հրեղէն ձիով մի՛ մարդ կը հասնի... ձնում հեծնող պառաւը եկաւ աղջկան խեց ու փախաւ... Սըմբը ղուշի փետուրը... փետուրը...

Ձին ընթացքը գանգաղեցրեց. Գուլէն նորէն ցնցեց,



բարձրացրեց իրանը, թափ առաւ վար նետուելու համար.

— Զե՛մ, մայրի՛կս... հայրի՛կ... հայրի՛կ...

Հէքիաթը մեռաւ...

Գուլէին տանում են անծանօթ ձորերով, անծանօթ ձամբաներով.

Հեռո՛ւ, հեռո՛ւ...

Մի մութ վախ, անորոշ ու խեղդուկ, բարձրանում էր անդունդներից, ու մշուշի պէս պարարում նրա գողգոջուն հոգին...

Մայրն անզօր էր. նրա հէքիաթի փետուրը չկար. Գուլէին հօրն էր կանչում օգնութեան, բայց նրա խղճուկ, սրտամորմօր ձայնը շուտ խլացաւ աւազակի ուժեղ մատնների տակ:

Աղջիկը ցնցւում, թրպրտում էր, անզօր ծիգեր էր անում վար նետուելու համար, եղունգներով ծւատեց առևանգիչի ձեռքը, յետ բաշեց իր բերանից, բայց էլ չծիծաղեց.

— Հայրի՛կ ջան... հայրի՛կ ջան...

Չայնը վերստին խեղդուեց.

Ու ձին սլանում էր դաշտերով, ձորերով...

\*\*\*

Խաւարն իջաւ, իջաւ, լեռ ու ձոր մթնեց, ասաղերը թարթեցին սև վրանների վրայ, ուր քար լուսթիւնը գիշերւայ հետ իջաւ:

Հներն էին ունում կատաղորէն, գայլերը շատ մօտ էին թափառում:

Արաններից մեկի խորքում Գուլէին կծկւած էր. նրա զգեստը փոխել էին, գլուխը՝ սանտրեր:

Աղջիկն էլ չէր ժպտում, չէր քրքում. չէր էր լալիս. ծաղիկ ու բանջար մոռացել էր. հայրը չ'եկաւ, ոչ որ չ'եկաւ օգնութեան...

— Մայրի՛կ, մայրի՛կ, մրմնջում էր անգազար:

Յետոյ վախով ականջ էր դնում շների ունոցին ու չէր բնում...

Գուրնն այնպէս խաւար էր, սար ու ձոր այնպէս սարսափելի...

Երա՛ջ էր, թե՛ հէքիաթ... Կամացուկ նա քնեց խորունկ քնով.

Ու քնի մէջ մերթ ժպտում էր, մերթ քրքում, մերթ լալիս...

Չձում հեծնող պառաւը տանում էր նրան անծանօթ ու վայրի սար ու ձորով, Սըմըր դուշի փետուրը... Փետուրը դարձեալ չկար. նա ճչում էր, մօրը կանչում, ձայնը խեղդւում էր, փորձում էր փախչել, օտներն էին ծարում:

Բիրա շարժումից նա յանկարծ զարթնեց սարսափով... Հաստ բեխաւոր մարդն էր իր կողքին. նրա տար շունչը, բարկ բոցի պէս իր երեսն էր այրում, երկաթէ մատներն իր կողերն էին սզում, փշրելու չափ.

— Մայրի՛կ, մայրի՛կ...

Ապա մի սուր ծիչ, աղէկուտը, ինչպէս պատաւած սրտի աղաղակ, բարձրացաւ վրանից, ծւատեց խաւարը ու գնաց կրկնելու հանգող ձորերում անծայր ելևէջներով: Հները հաջեցին կատաղորէն, ու նրանց միահամուռ կանչը, վայրագ ու սարսեցուցիչ, զարկեց սարից՝ սար, բարից՝ քար, փոխեց խելագար, խօշ բրբջի թւում էր, թե՛ վիթխարի լեռներն են այդպէս քրքում խե-

լախորէն ու անսանձ՝ ինչպէս հարբած հսկաներ...

Լուսաբացին Գուլէն յաւիտենապէս անշարժ պառկած էր, չռած աչքերի մէջ անհուն զարհուրանքը բարացած, ատամները անհնարին ցաւից՝ արինոտ շըրթուներին մէջ և եղունգները իր մերկ կրծքի միսերի մէջ թաղւած:

Դրսում՝ կապուտակ երկնքի տակ, արևի ցուքերի մէջ լողալով՝ ոսկեթոյր բզեզներն էին բզզում, գոյնզգոյն թիթեռները թրթռում և լորերն էին սուլում, արտոյան էր ծախրում, ու ծաղիկների ծովն էր ծփծփում: Եւ հեռուն, կապաւուն մշուշի մէջ դարձեալ լեռներն էին հեւում անծայր յօրանջով ու խորունկ, մեղմ զրնգոցը բարձրանում էր ցնորական անտառներից, ուր ասես բիւրուոր գիւթական նւագարանների լարերն էին հեծեծում...

\*\*\*

Հեռաւոր, անաէր գիւղում մի մայր էր հեծկտում անյուսօրէն. աղջիկները վախով պատմում էին իրար Գուլէի հէքիաթը, աղամարդիկ լուռ էին...

Միայն խենթուկ պառաւ Դաւիթ թափառում էր փողոցներում, Գուլէի գովքն անում, ու իր առջևից անցնող-դարձող տղամարդին մօտենում էր ու կամացուկ ասում.

« Գուլէն ո՛ւր է, լաչակս գլխիդ... »

S U R U Q T R

Մ Ս Մ Ո Ի Լ

ԿՐԻՍՊԻ ԵՒ ՀԱՅԿԱԿԱՆ ԽՆԳԻՐԸ

Մի ընդարձակ առաջնորդող Հոսթի կիսապաշտօնական *La Tribuna*-ի մէջ (23 սեպտ.) ներկած է հայոց հարցին: Լեղինակը, զօրավոր և ծերակուտական Պեռուսկետի, առաջ է դրում իտալական հռչակաւոր նախարարապետ *Արիսպի*ի մի նամակը, գրւած 1897-ի փետուար 3-ին և նորերս հրատարակւած: Արիսպի, յիշելով 61-րդ յօդուածի պարունակութիւնը և երկարօրէն կանգ առնելով կատարւած ջարդերի ու թիրբական բաղաբականութեան վրայ, դառնութեամբ նշուակելով մեծ պետութիւնների անտարբերութիւնը, բացականչում է. « Երբ որ կը հասնի Յաւիտենական Հիւանդի ծայրագոյն ժամը, այն ժամանակ թեքես գիւտա-նազիտութիւնը կը յիշէ Հայաստանը »: (*Quando verrà l'ora estrema dell'eterno ammalato, forse la diplomazia avrà un pensiero per l'Armenia!*)...

Հայկական սարսափները գերազանցեցին բուրգարականին — շարունակում է Արիսպի — բայց Բուլղարիան դատաւ իր ազատարար ցարը... Ի վերջոյ, մի բաղձանք է յայտնում իտալական Բիսմարկը, որ հայոց մեծ ճգնաժամին իր երկրի ամենագօր վարիչն էր. — ցանկանք,՝ ասում է նա, որ մենք իտալացիներս բաւականաչափ զօրանանք, որպէս զի ազատութիւն նւածենք թիրբիոյ միւս հայրենական ազգերի, ի թիւս նրանց՝ հայերի համար... Ապա հարց է առիւս. « Կը դա՞յ արդեօք այդ օրը... »

Գնեւրալ Պեռուսկետի երկարօրէն մեկնարանելով այդ ուշագրաւ նամակը, յիշելով Ադանան, յիշելով և իտալական մեծ բանաստեղծ Արդուչչիի մի կոչը թիրբական ուժեղիմի հայոց աղէտների առթիւ, շեշտում է, որ Արիսպիի գուշակած բաղձալի օրը հասել է արդէն, որ Իտալիան պէտք է ձայն բարձրացնի ի նպաստ Հայաստանի:

Հայտն. Réd. du „DROSCHAK“, Genève (Suisse)